



**ՄԱՍՈՒԽԻ ԱՎԱՏՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 2013-ԻՆ**

ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԳԻՐՆԵՐԸ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

**THE STATE OF MEDIA FREEDOM
IN ARMENIA 2013**

CORE PROBLEMS AND CHALLENGES



**«Մամուլի ազատությունը Հայաստանում
2013-ին. հիմնական խնդիրները և
մարտահրավերները»**



Հետաքննող լրագրողներ ՀԿ
Երևան 2013

Գիրքը հրատարակվել է Եվրոպայում Անվտանգության եւ համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) երեւանյան գրասենյակի աջակցությամբ: Գրքում արտահայտված տեսակետները «Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ինն են եւ կարող են չհամընկնել ԵԱՀԿ տեսակետների հետ:

«Մամուլի ազատությունը Հայաստանում 2013-ին. հիմնական խնդիրները եւ մարտահրավերները» .-Եր: «Հետաքննող լրագրողներ» ՀԿ, 2013.- 198 էջ:

«Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի պատրաստած այս գիրքն ամփոփում է 2013 թվականին Հայաստանում լրագրողների եւ զանգվածային լրատվության միջոցների առջեւ ծառայած հիմնական խոչընդոտները, որոնք դրսևորվել են բռնությունների ու ճնշումների, նրանց դեմ ներկայացված դատական հայցերի տեսքով: Քննության են առնվել նաեւ Հայաստանի մեդիա միջավայրի զարգացման այլ խոչընդոտներ, ինչպիսիք են ինքնազրաքննությունը, գրագողությունը, անառողջ մրցակցությունը, տեխնոլոգիաների զարգացմամբ պայմանավորված՝ տպագիր մամուլի անկումը, պրոֆեսիոնալիզմի պակասը եւ այլն:

Նախատեսված է լրագրողների, իրավաբանների, խոսքի եւ մամուլի ազատության խնդիրներով զբավող փորձագետների, ժուռնալիստիկայի ֆակուլտետների ուսանողների, ինչպես նաեւ ընթերցող լայն հասարակայնության համար:

© «Հետաքննող լրագրողներ» ՀԿ, 2013 թ.

© ԵԱՀԿ, 2013 թ.

ISBN 978-92-9234-277-7

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|--|------------|
| ՆԱԽԱԲԱՆ | 4 |
| ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ | 6 |
| ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՁԵՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ | 42 |
| ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 1087.1 ՀՈՂՎԱԾԸ ԼՐԱՑՆԵԼՈՒ, ՀՍՏԱԿԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆԵԼՈՒ ԿԱՐԻՔ ԿԱ | 57 |
| ԱՆԲԱՐԵԽԻՂՃ ԿԱՅՔԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԻՋՈՑԸ ՊԵՏՔ Է ԼԻՆԻ ՀԱՄԱԿԱՐԳՉԻ ՄԿՆԻԿԸ | 74 |
| ՄՏՔԻ ԿԱՊԱՆՔՆԵՐԸ ՔԱՆԴԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ | 83 |
| ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՍԱՍԱՆԵ՞Ն «ԼՐԱԳՐՈՂԱԿԱՆ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅՈՒՆԸ» | 93 |
| ՄԱՍՈՒԼԻ «ԱՐՏԱԳԱՂԹ». ԿԴԻՄԱԿԱՅԻ՞Ր ՏՊԱԳԻՐ ՄԱՍՈՒԼԸ ՑԱՆՑԱՅԻՆ ՄԵԾ ԱՇԽԱՐՀՈՒՄ | 103 |

ՆԱԽԱԲԱՆ

Ընթերցողի ուշադրությանն ենք ներկայացնում «Հետաքննող լրագրողներ» կազմակերպության հերթական ուսումնասիրությունը Հայաստանում խոսքի եւ մամուլի ազատության մասին: Այս անգամ ուսումնասիրության թեմատիկ շրջանակներն ընդլայնվել են՝ ընդգրկելով ոչ միայն ավանդաբար խոսքի ազատության խոչընդոտ համարվող ֆիզիկական բռնությունների դեպքերը, գրպարտության եւ վիրավորանքի հայցերով դատական գործերը, այլեւ ՁԼՄ-ներում աննախադեպ չափերի հասած գրագողությունը, լրագրողների շրջանում լայն տարածում գտած ինքնագրաքննությունը, պրոֆեսիոնալիզմի ցածր մակարդակը, տեխնոլոգիական առաջընթացով եւ այլ գործոններով պայմանավորված՝ տպագիր մամուլին նետված մարտահրավերը եւ այլն:

Նշված խնդիրների մասին վերլուծական հոդվածներ են պատրաստել «Հետքի» լրագրողները: Իսկ իրավաբաններ Արա Ղազարյանը եւ Աշոտ Վարելջյանը ամփոփ ձեռով ներկայացրել են լրատվամիջոցների ազատության տարբեր ասպեկտները՝ օրենսդրական կարգավորում, ֆիզիկական բռնություններ, գրպարտության եւ վիրավորանքի հայցերով դատական գործեր: Իրենց վերլուծության մեջ վերջինի վերաբերյալ նրանք դրական եզրակացության են հանգել՝ նշելով, որ 2013 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսների ընթացքում դատարանները կայացրել են լրատվամիջոցների ու լրագրողների ազատության առումով մեծամասամբ քարենպաստ դատական ակտեր:

Սակայն, ինչպես միշտ, մտահոգիչ է լրագրողների նկատմամբ ֆիզիկական բռնությունների կամ նրանց գործունեությանը միջամտելու դեպքերի քննությունը:

«Բազմաթիվ են դեպքերը, երբ լրագրողի հասցեին հնչեցված սպառնալիքը, որի արդյունքում խոչընդոտվել է լրագրողի աշխատանքը, քրեաիրավական որևէ հետևանքի չի հանգեցրել: Նույնիսկ եթե կատարվել է որևէ քննություն, դա եղել է ծառայողական բնույթի քննություն, որը սկզբունքորեն, ինչպես նաև գործնականում չի համարվում իրավական պաշտպանության արդյունավետ միջոց», - գրել են իրավաբանները: Ուսումնասիրությունը վկայում է, որ շատ քիչ դեպքերում է լրագրողների իրավական պաշտպանության միջոցը՝ սահմանված քրեական օրենսգրքով, հանդիսացել արդյունավետ պաշտպանության միջոց:

ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ
(2013 հունվար-հոկտեմբեր)

1. Օրենսդրական նախաձեռնություններ և փոփոխություններ

Մույն թվականի սեպտեմբերի 10-ին Ազգային ժողովը միաձայն ընդունեց «Հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին օրենքի նախագիծ, որի նպատակն էր կարգավորել առցանց լրատվադաշտում հեղինակային իրավունքի լայնածավալ խախտումները նույն առցանց լրատվամիջոցների և լրագրողների կողմից: Մասնավորապես, տարածված ու անվերահսկելի պրակտիկա է դարձել մի լրատվամիջոցի կողմից մեկ այլ լրատվամիջոցի հրապարակած տեղեկատվության արտատպումը կամ վերարտադրումը առանց հեղինակի թույլտվության կամ առանց որևէ աղբյուրի վկայակոչման, նույնիսկ եթե տվյալ լրատվական նյութն իր բովանդակությամբ հեղինակային իրավունքի օբյեկտ է: Այսինքն՝ շատ առցանց լրատվամիջոցներ, այդ թվում՝ նաև բլոգերներ, լայնորեն խախտում են այլոց հեղինակային իրավունքները, սակայն իրավական պաշտպանության արդյունավետ կառուցակարգերի բացակայության պատճառով նման խախտումները մնում են անպատիժ, իսկ հեղինակները՝ առանց պաշտպանության միջոցի: Օրենքի փոփոխությամբ սահմանվել են իրավական

պաշտպանության նյութաիրավական և ընթացակարգային առավել հստակ ու լայն հիմքեր, որոնք կոչված են ապահովելու հեղինակային իրավունքի պաշտպանությունը արագ զարգացող ինտերնետի տիրույթում:
Մասնավորապես, թեև լայնորեն հայտնի է, որ օրվա լուրերը կամ ընթացիկ իրադարձությունների մասին տեղեկատվական նյութը որպես կանոն հեղինակային իրավունքի օբյեկտ չեն, սակայն նույնիսկ այս ոճով շարադրված լրատվական նյութը կարող է անցնել հեղինակային իրավունքի պաշտպանության տակ, եթե դրա մատուցման եղանակը (ըստ օրենքի՝ «արտահայտման ձևը») պարունակում է «ստեղծագործական» աշխատանքի տարր(եր): Սա «հեղինակային իրավունքի» ոլորտի համընդհանուր մոտեցում է, ըստ որի՝ հեղինակային իրավունքով պաշտպանվում է միայն «ստեղծագործական» աշխատանքի արդյունքը: Մյուս կողմից՝ տվյալ դեպքում այս դրույթը կարող էր նույնիսկ շարադրված չլինել, քանի որ դատական ստուգման տիրույթում դատարանները բոլոր դեպքերում պարզում են, թե արդյոք տվյալ լրատվական նյութը պարունակում է ստեղծագործական աշխատանքի տարրեր:

Օրենքի փոփոխությամբ սահմանվել է նաև լրատվական նյութը վերարտադրելիս հնարավոր խախտումներից պաշտպանվելու երկշերտ պաշտպանական համակարգ: Առաջինը նշում է, որ ցանցային լրատվության միջոցներից քաղվածքների մեջբերումը կարող է կատարվել միայն «նպատակն արդարացնող ծավալով»: Օրենքը չի սահմանում, թե ինչ է նշանակում այս հասկացությունը, դա թողնում է դատարաններին, որպեսզի վերջիններս մեկնաբանեն ու կիրառեն յուրաքանչյուր կոնկրետ գործով: Նման մոտեցումը, կարծում ենք, իրավաչափ է և բխում է տարածված

միջազգային ու ներպետական դատական պրակտիկայից: Նախ՝ անհնար է տալ որևէ սպառիչ սահմանում, թե ինչ է նշանակում «նպատակն արդարացնող ծավալ», երկրորդ՝ երբեմն առավել արդյունավետ է օրենսդրական ակտում սահմանել լայն հասկացություններ, որպեսզի հնարավոր լինի դրանց երկարաժամկետ կիրառումը հասարակական և տեխնոլոգիական զարգացումների շարունակ փոփոխվող միջավայրում, հատկապես, երբ խոսքը վերաբերում է այնպիսի «առհավետ» ու արագ զարգացող միջավայրի, ինչպիսին է համացանցը: Երկրորդ պաշտպանական համակարգը սահմանում է, որ վերարտադրումը չպետք է «բացահայտի լրատվական նյութի էական մասը»՝ անկախ վերարտադրման ծավալից: Այս երկրորդ պայմանը գործում է առաջին պայմանից անկախ: Այսինքն, նույնիսկ եթե քաղվածքը կատարվել է փոքր ծավալով (մեկ կամ երկու նախադասությամբ), եթե դա բացահայտում է լրատվական նյութի բովանդակության էական մասը, դա հիմք է քաղվածք կատարողին պատասխանատվության ենթարկելու համար, և վերջինս չի կարող վկայակոչել քաղվածքի փոքր ծավալը՝ որպես պաշտպանություն:

Բացի նշված նյութաիրավական հիմքերից, օրենքը սահմանում է նաև մի շարք ընթացակարգային երաշխիքներ: Օրինակ՝ հեղինակային իրավունքի օբյեկտ հանդիսացող լրատվական նյութերից քաղվածքներ կատարելիս պահանջվում է հղում կատարել սկզբնաղբյուրին, իսկ վերնագրում պահանջվում է նշել տպագիր լրատվական միջոցի անվանումը: Էլեկտրոնային կայքերից քաղվածքներ վերարտադրելիս քաղվածքի վերնագրում պահանջվում է տեղադրել էլեկտրոնային կայքի ակտիվ հղումը և տիրույթային անվանումը (դոմեյնը):

Օրենքի փոփոխությամբ սահմանվում է նաև հեղինակային իրավունքի խախտման համար նյութական փոխհատուցման հնարավորություն հարյուրից երկու հարյուր հազար դրամի չափով: Վերավորանքի և զրպարտության հիմքով Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի ներմուծումից հետո սա, կարելի է ասել, երկրորդ ոլորտն է քաղաքացիական իրավունքի տիրույթում, որտեղ օրենսդիրը սահմանում է վնասի դիմաց դրամական փոխհատուցման հնարավորություն: Այստեղ, սակայն, տիրում է անորոշություն այն առումով, թե «վնաս» հասկացության համար արդյոք օրենսդիրը նկատի է ունեցել և՛ նյութական և՛ ոչ նյութական (բարոյական) վնաս հասկացությունները: Մի կողմից, որպես կանոն, նյութական վնասը շատ դժվար է հիմնավորել դատարանում, մյուս կողմից՝ ոչ նյութական վնասի մասով ցանկացած դիմում կարող է արժանանալ դատարանի մերժմանը այն հիմնավորմամբ, որ ՀՀ օրենսդրությունը չի սահմանում բարոյական վնասի համար նյութական փոխհատուցման հնարավորություն: Այստեղ, գուցե, հարկ կլինի Սահմանադրական դատարանի միջամտությունը, որպեսզի վերջինս, բացահայտելով այս նորմի սահմանադրաիրավական բովանդակությունը, բացատրի, թե արդյոք այս դրույթով սահմանված վնասի փոխհատուցման հնարավորությունը իրականում հանդիսանում է բարոյական վնասի համար նյութական փոխհատուցման միջոց: Վերջինս նման նախաձեռնություն ցուցաբերեց վերը նշված 1087.1 հոդվածի առումով, որի առնչությամբ սահմանեց, որ այդ հոդվածով սահմանված նյութական փոխհատուցումը իրականում ոչ թե բարոյական վնասի համար

փոխհատուցման հիմք է, այլ զուտ իրավական պաշտպանության միջոց:¹Սույն ուսումնասիրությունը գրելու պահին, 2013թ. նոյեմբերի 5-ին ՀՀ Սահմանադրական դատարանը կայացրեց մի կարևոր որոշում, որով սահմանեց, որ բարոյական վնասի համար նյութական փոխհատուցում ստանալու համար օրենսդրական հիմքերի բացակայությունը² խախտում է քաղաքացիների իրավունքները Սահմանադրության 3-րդ, 18-րդ և 19-րդ հոդվածների հիմքերով: Սահմանադրական դատարանը նույն որոշումով մինչև մեկ տարի ժամանակ տվեց Ազգային ժողովին, որպեսզի վերջինս մինչև 2014թ. հոկտեմբերի 1-ը մշակի Քաղաքացիական օրենսգրքում և վերաբերելի այլ օրենսդրական ակտերում բարոյական վնասի համար նյութական վնասի փոխհատուցման անհրաժեշտ բոլոր իրավական կառուցակարգերը:

2. Լրագրողների գործունեությանը խոչընդոտելը

Լրագրողի մասնագիտական գործունեությանը խոչընդոտելը քրեականացված է և պատժվում է Քրեական օրենսգրքի 164-րդ հոդվածի հիմքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով (200,000-ից 400,000 դրամ): Եթե նույն արարքը կատարվել է պաշտոնատար անձի կողմից պաշտոնեական դիրքն օգտագործելով՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկից յոթհարյուրապատիկի չափով, կամ

¹ Տե՛ս ՄԴՈ-991 որոշումը:

² Խոսքը վերաբերում էր Քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասին, որը սահմանում է քաղաքացիաիրավական հարաբերություններում «վնաս» հասկացության շրջանակները:

ազատագրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:Իսկ եթե վերը նշված արարքները կատարվել են լրագրողի կամ նրա մերձավորի կյանքի կամ առողջության համար վտանգավոր բնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով, պատժվում են ազատագրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով:

Սույն ուսումնասիրության ժամանակահատվածում լրագրողների մասնագիտական գուծունեությանը խոչընդոտելու դեպքեր արձանագրվել են վերը նշված բոլոր հանցակազմերի ներքո և ուղեկցվել են բնությամբ, ֆիզիկական հաշվեհարդարի սպառնալիքներով, խտրական վերաբերմունքի կիրառմամբ, անհարկի սահմանափակումների կիրառմամբ (օրինակ՝ ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակմամբ), տեսախցիկների և այլ սարքավորումների առգրավմամբ, նկարահանված տեսանյութի ոչնչացմամբ և տեսաերիզների բովանդակության միջամտությամբ, անձնական կյանքի ու բնակարանի նկատմամբ հարգանքի իրավունքի ու գույքային իրավունքի միջամտությամբ: Նշված միջամտող բնույթի գործողությունները դրսևորվել են և՛ պաշտոնատար անձանց (օրինակ՝ ոստիկանության աշխատակիցների) և՛ մասնավոր անձանց, քաղաքացիների կողմից: Պաշտոնատար անձանց միջամտող բնույթի գործողությունների արձագանքը հիմնականում հանդիսացել է ծառայողական քննությունը, այլ ոչ թե քրեական գործի հարուցումը, մեղավորների հայտնաբերումը, դատապարտումը և համարժեք պատժի նշանակումը:

ա) Տիզիկական բռնություններ

2013թ. փետրվարի 18-ի նախագահական ընտրությունների օրը ֆիզիկական բռնության զոհ է դարձել լրագրող Արտակ Համբարձումյանը, ում մի խումբ անձինք բռնության կիրառումով (բռնելով նրա ձեռքերը) թույլ չեն տվել նկարահանումներ իրականացնել Արարատի մարզի 17/05 ընտրատեղամասում: Բռնություն է կիրառվել նաև «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ-Հայաստան» կազմակերպության անդամ Նարինե Իսմայելի նկատմամբ, ում ձեռքերը նույնպես բռնել են, որպեսզի վերջին չկարողանա լուսանկարահանել կամ տեսանկարահանել քվեաթերթիկների լցնումը:³ Դեպքի առթիվ Հատուկ քննչական ծառայությունը (այսուհետ՝ ՀԲՕ) հարուցել է քրեական գործ Քրեական օրենսգրքի 149-րդ հոդվածի (Ընտրական իրավունքի իրականացմանը, ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը մասնակցող անձանց լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը) և 153-րդ հոդվածի (մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելը) հիմքերով:⁴ Նշված երկու հոդվածներով սահմանված հանցակազմերը իրենց օբյեկտիվ կողմերով որևէ առնչություն չունեն բռնության ուղեկցությամբ լրագրողի մասնագիտական գործունեությանը խոչընդոտելու փաստի հետ և հնարավորություն են տալիս շրջանցել լրագրողի նկատմամբ կիրառված բռնության փաստը՝ դրսևորված վերջինիս կողմից իր մասնագիտական պարտականությունների

³ Տե՛ս <http://hetq.am/arm/news/23510/ditordnery-pndum-en-or-lconum-e-exel-myusnern-antexyak-en.html>

⁴ ՀՀ Գլխավոր դատախազության 22/02/2013թ. հայտարարությունը: Տե՛ս <http://www.genproc.am/am/177/item/7639/>

իրականացման կապակցությամբ: Հետևաբար, քրեական գործի հարուցումը նշված հոդվածներով պետական իրավասու մարմնի անհամաչափ ու անհամապատասխան արձագանք էր: Պատահական չէ, որ հարուցված քրեական գործն այնուհետև կարճվել է, քանի որ դրա շրջանակներում երկու անձանց առաջադրված մեղադրանքները հանվել են նրանց վրայից՝ արդարացման հիմքերով:

«Հրապարակ» եւ «Ժամանակ» օրաթերթերի լրագրողներ Գայանե Սարիբեկյանը և Մարինե Խառատյանը նույն օրը այլ ընտրատեղամասում ենթարկվել են հարձակման մի խումբ անձանց կողմից, երբ վերջիններս փորձել են նկարահանել ՀՀԿ շտաբի մոտ հավաքված մի խումբ մարդկանց:

Վերջիններս խլել են նրանց տեսախցիկները և հայհոյել:⁵

ՀՔԾ-ն կրկին քրեական գործ է հարուցել Քրեական օրենսգրքի 149 և 153 հոդվածների հատկանիշներով, այնուհետև կարճել է քրեական գործը հանցակազմի բացակայության հիմքով: Մինչդեռ առկա էին Քրեական օրենսգրքի 164-րդ հոդվածի հատկանիշներ և այդ առումով տուժողի կողմից ներկայացված հստակ վկայություններ բռնություն կիրառած անձանց ինքնության մասին:

Անպատասխան է մնացել նաև Maxinfo.am լրատվական կայքի հիմնադիր Բաբկեն Հարությունյանի կողմից տարածած հայտարարությունը իր նկատմամբ ունի Անդրանիկ Սարգսյանի (ըստ ՋԼՄ-ների՝ ոստիկանապետ Ալիկ Սարգսյանի եղբայրը) կողմից կիրառված բռնության (դեմքին հարվածելու) փաստի առթիվ, որն ուղեկցվել է իր գույքի նկատմամբ ոտնձգությամբ (մեքենայի բանալիները հանելը և դրանք տնօրինելը՝ զրկելով լրագրողին իր գույքից անարգել օգտվելու հնարավորությունից, որի արդյունքում

⁵ Տե՛ս <http://www.hraparak.am/news/view/27931.html>:

լրագրողը ստիպված է եղել հեռանալ դեպքի վայրից՝ այնտեղ թողնելով մեքենան): Դեպքից քիչ անց ոստիկանությունը տեղեկացրել է նրան, որ մեքենան գտնվում է ոստիկանության տարածքում, որտեղից էլ լրագրողը վերցրել է իր մեքենան՝ միաժամանակ տալով հանցագործության մասին հաղորդում: Դեպքի առթիվ որևէ քրեական գործ չի հարուցվել:

Մայիսի 18-ին լրագրողական գործունեությանը կոպտորեն միջամտելու գործողություններ են կատարվել Երևան-Սևան մայրուղու վրա միանգամից մի քանի լրատվամիջոցների լրագրողների նկատմամբ՝ կապված այն միջադեպի հետ, երբ գորամասերից մեկում զոհված զինծառայողի հարազատները, ի նշան բողոքի, փորձում էին մայրաքաղաք տեղափոխել զոհվածի դին: Ըստ ԶԼՄ-ների բազաթիվ հաղորդումների՝ համազգեստավոր ու քաղաքացիական հագուստներով մի շարք անձինք բռնի ուժով, հայհոյելով, սպառնալիքներ հնչեցնելով՝ իլեղ ու կոտրել էին «Կենտրոն» հեռուստաընկերության նկարահանող խմբի, www.lragir.am կայքի թղթակից Սիրանույշ Պապյանի, «Երկիր մեղա» հեռուստաընկերության և «Հ2» հեռուստաընկերության աշխատակցի տեսախցիկներն ու տեսասարքերը: Այս դեպքերի վերաբերյալ մայիսի 20-ին համատեղ հայտարարությամբ հանդես են եկել Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեն և հինգ լրագրողական կազմակերպություններ:⁶ Թվում է, թե ԶԼՄ-ներով հրապարակված տեղեկությունները միանգամայն բավական էին առնվազն 164-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասի հիմքերով քրեական գործեր հարուցելու համար, սակայն որևէ

⁶ Տե՛ս <http://www.a1plus.am/am/social/2013/05/20/press:>

քրեական վարույթ, հետաքննություն չի հետևել այս դեպքերին:

բ) Մպառնալիքներ

Բազմաթիվ են դեպքերը, երբ լրագրողի հասցեին հնչեցված սպառնալիքը, որի արդյունքում խոչընդոտվել է լրագրողի աշխատանքը, քրեախրավական որևէ հետևանքի չի հանգեցրել: Նույնիսկ եթե կատարվել է որևէ քննություն, դա եղել է ծառայողական բնույթի, որը սկզբունքորեն, ինչպես նաև գործնականում չի համարվում իրավական պաշտպանության արդյունավետ միջոց: Որպես օրինակ կարելի է բերել www.hetq.am լրատվական կայքի լրագրող Անի Հովհաննիսյանի նկատմամբ Հյուսիսային պողոտայում ոստիկանության աշխատակցի կոպիտ վերաբերմունքը՝ ընդհուպ լրագրողին քաշքշելը: Միջադեպի վերաբերյալ առկա է տեսանյութ:⁷ Այս միջադեպի հետևանքով ոստիկանության աշխատակցի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ, նշանակվել է ծառայողական քննություն, որի արդյունքում վերջինս հեռացվել է իր զբաղեցրած պաշտոնից՝ տեղափոխվելով կադրերի ռեզերվ: Ծառայողական քննությունը և դրա հետևանքը չի կարելի համարել իրավական պաշտպանության միջոց տուժողի տվյալ դեպքում լրագրողի համար, քանի որ ոստիկանին իր պաշտոնից ազատելը լրագրողի խախտված իրավունքները վերականգնելու միջոց չէ: Անհրաժեշտ էր կատարել քրեական ուղղությամբ հետաքննություն՝ պարզելու Քրեական օրենսգրքի 164-րդ հոդվածի առնվազն 1-ին մասով սահմանված հանցակազմի հատկանիշներ: Որոշ միջոցներ

⁷ Տե՛ս <http://hetq.am/arm/news/25965/v-xukasyany-dog-hrel-ev-viravorel-e-hetqi-iragroxin.html>:

են ձեռնարկվել Անի Հովհաննիսյանի նկատմամբ կրկնակի սպառնալիքի փաստի առնչությամբ, որն այս անգամ դրևստրվել է Ռուսաստանից ստացված հեռախոսազանգով, որով անհայտ անձը Անիին սպառնացել էր «կհայտնվես փոսում, կամ դու, կամ հարազատներիցդ մեկը»⁸ արտահայտությամբ, որը լրագրողը կապում է Հյուսիսային պողոտայում ոստիկանի հետ ընդհարվելու փաստի հետ: Այս միջադեպի առնչությամբ ոստիկանությունը հետաքննություն է անցկացրել, որի արդյունքում դեպքի առթիվ քրեական գործ է հարուցվել, որը դեռ ընթացքի մեջ է: Որևէ հետաքննություն չի կատարվել Սամվել Ալեքսանյանի թիկնապահների կողմից www.news.am լրատվական կայքի լրագրող Գայանե Ապրունցի նկատմամբ հնչեցված սպառնալիքների կապակցությամբ, այդ թվում՝ նաև հենց Սամվել Ալեքսանյանի կողմից նույն լրագրողի թևից կոպտորեն քաշելու դեպքի առթիվ:⁹

Որոշ դեպքերում սպառնալիքի հիմքով իրավասու մարմինները կատարել են հետաքննություն, սակայն դրա շրջանակներում որոշվել է, որ լրագրողի նկատմամբ հնչեցված սպառնալիքն իրական չի եղել, և որ լրագրողական գործունեությանը հնչեցված արտահայտությունների հիմքով միջամտություն չի եղել, այսինքն՝ բացակայել են Քրեական օրենսգրքի 164-րդ հոդվածով սահմանված հիմքերը: Օրինակ՝ www.asparez.am և www.aravot.am կայքերի լրագրողներ Մարինե Պետրոսյանի և Նունե Արևշատյանի հասցեին 2013թ. փետրվարի 18-ին նախազահական ընտրությունների օրը 35/22 ընտրատեղամասում մեքենայում նստած մի կին

⁸ Տե՛ս <http://hetq.am/arm/news/26351/sparnum-en-lragroxin-ev-nra-yntanigi-andamnerin-dzaynagrutyun.html>:

⁹ Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի [gelkyun.gov.am](http://www.gelkyun.gov.am) 2013թ. Երրորդ եռամսյակի վերաբերյալ:

բարկացած ասել է. «Ո՞վ էք եղած, որ մեզի նկարեք, էդքան չկաք, եկա՝ աչքերներդ կհանեմ»: Հետաքննության ընթացքում լրագրողները նշել են, որ հնչեցված խոսքերն իրենք իրական սպառնալիք չեն համարել և դրա արդյունքում իրենց լրագրողական գործունեությունը չի տուժել, քանի որ միջամտություն չի եղել: Ի հավելումն, լրագրողները նշել են, որ նկարահանումներ կատարելիս իրենք չեն եղել լրագրողական տարբերանշաններով, որի առնչությամբ էլ սպառնալիք հնչեցրած կինը հետաքննության ընթացքում ասել է, որ ինքը չի իմացել, որ նկարողները լրագրողներ էին: Այս ամենի արդյունքում ոստիկանությունը որոշել է քրեական գործ չհարուցել 164-րդ հոդվածով սահմանված հիմքերի բացակայության հիմքով, որը, կարծում ենք, իրավաչափ մոտեցում էր:

Որոշ դեպքերում էլ լրագրողները որոշել են հայցել ոչ թե քրեական, այլ քաղաքացիական իրավունքով սահմանված պաշտպանության միջոց: Օրինակ՝ կրկին նախագահական ընտրության օրը թիվ 17/4 տեղամասում տեղամասի հանձնաժողովի նախագահը «New York Institute of Photography»-ի թղթակից Ծովինար Նազարյանին անվանարկել է «հիստերիկի նման» արտահայտությամբ, ինչպես նաև նրա հասցեին ասել «կտամ կսպանեմ» արտահայտությունը: Միջադեպի տեսագրությունը տեղադրված է Youtube.com կայքում:¹⁰ Ծովինարը նախընտրել է դիմել քաղաքացիական դատարան՝ հայցելով պաշտպանություն Բաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի հիմքով:

Որոշ դեպքերում իրավական պաշտպանության միջոցը՝ սահմանված քրեական օրենսգրքով, հանդիսացել է

¹⁰ Տե՛ս <http://www.aravot.am/2013/03/29/224853/>:

արդյունավետ պաշտպանության միջոց: Տոտոլրագրող Գագիկ Շամշյանի հասցեին հայհոյանքներ ու սպառնալիքներ հնչեցնելու համար սույն թվականի սեպտեմբերի 13-ին Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից Ռաֆիկ Սահակյանը դատապարտվել է մեկ տարվա ազատազրկման և 800,000 դրամ տուգանքի: Դեպքը տեղի է ունեցել 2013թ. հունվարի 30-ին ճանապարհային ոստիկանության ծառայության հատուկ պահպանվող տարածքում: Ճանապարհատրանսպորտային կանոնները խախտելու համար այս տարածք էր տեղափոխվել Ռաֆիկ Սահակյանի մեքենան, որտեղ լրագրող Գագիկ Շամշյանը փորձել է տեսանկարահանել մեքենան և մեքենայի տիրոջը, որին վերջինս խոչընդոտել է և նրա հասցեին հնչեցրել հայհոյանքներ, սպառնալիքներ և նրա ուղղությամբ նետել իր բջջային հեռախոսը: Դատարանը Ռաֆիկ Սահակյանին մեղավոր է ճանաչել Քրեական օրենսգրքի 164-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով (լրագրողի մասնագիտական գործունեությանը խոչընդոտելը՝ առանց բռնության կամ սպառնալիքի կիրառումով) և 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հիմքով (խուլիգանություն, որն ուղեկցվել է անձի նկատմամբ բռնության կիրառումով կամ բռնության սպառնալիքով): Փաստորեն, դատարանը Գագիկ Շամշյանի նկատմամբ հնչեցրած սպառնալիքները կապել է ոչ թե վերջինիս մասնագիտական գործունեության իրականացման, այլ Ռաֆիկ Սահակյանի խուլիգանական բնույթի արարքների հետ:¹¹ Հակառակ դեպքում Ռաֆիկ Սահակյանը կդատապարտվեր 164-րդ հոդվածի 3-րդ մասի

¹¹ Տե՛ս թիվ ԵԿԴ/0029/01/13 դատական գործը www.datalex.am տեղեկատվական առցանց համակարգում:

հիմքով: Ի դեպ, այս գործում բավականին լայնորեն կիրառվել են ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԱԸԴ/0176/01/11 և թիվ ԵԷԴ /0091/01/11 գործերով նախադեպերը, որոնք վերաբերում են «սպառնալիք» հասկացության մեկնաբանությանը, որը կարելի է կիրառել լրագրողների նկատմամբ սպառնալիքների փաստերով գործերի վերաբերյալ՝ որպես ուղեցույց:

զ) Միջամտող բնույթի այլ գործողություններ

Լրագրողների մասնագիտական գործունեությանը խոչընդոտելը ուղեկցվել է ոչ միայն բռնության, սպառնալիքի, այլ նաև տեղաշարժի ազատության սահմանափակմամբ, սարքավորումները խլելով կամ խլելու փորձով, տեսանյութի ոչնչացմամբ և խտրական վերաբերմունքի կիրառմամբ: Միջամտող բնույթի նման գործողությունները նույնպես Քրեական օրենսգրքի 164-րդ հոդվածով սահմանված հանցակազմի առարկա են:

Վերևում արդեն նշվել է Երևան-Սևան ճանապարհի վրա տեղի ունեցած դեպքերի մասին, որտեղ համազգեստով և քաղաքացիական հագուստներով անձինք առգրավել են չորս ՋԼՄ-ների լրագրողների տեսախցիկները և տեսասարքերը, իսկ այնուհետև վերադարձրել են դրանք բոլոր տեսանյութերը ջնջված վիճակում: Այս փաստերի վերաբերյալ որևէ քրեական վարույթ չի իրականացվել (տե՛ս վերևում):

Լրագրող Բաբկեն Հարությունյանի տեղաշարժի ազատության սահմանափակման (մեքենայի ընթացքը կասեցվել է մեկ այլ մեքենայի միջոցով) և գույքային իրավունքի միջամտության (մեքենայի բանալին առգրավվել է, որի արդյունքում լրագրողը զրկվել է իր գույքից՝ մեքենայից

օգտվելու հնարավորությունից) փաստերի հիմքով նույնպես որևէ վարույթ չի իրականացվել:

Երևանու ավագանու ընտրություններում ավագանու թեկնածու Աշոտ Պապյանը հարվածել է լրագրողին և այնուհետև խլել տեսասարքը: Այս դեպքերին ներկա է եղել ոստիկանը, ով չի միջամտել ու կանխել: Կարճ ժամանակ հետո վերադարձվել է տեսասարքը, սակայն բոլոր տեսանյութերը ջնջված են եղել: Սակայն այս միջադեպի հիմքով հարուցված քրեական գործն այնուհետև կարճվել է, քանի որ Աշոտ Պապյանը հրապարակավ ներողություն է խնդրել, որից հետո լրագրողը որոշել է հաշտվել Աշոտ Պապյանի հետ: Ըստ ոստիկանության՝ նման հանգամանքներում քրեական գործը որոշվել է կարճել Քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի հիմքով, համաձայն որի՝ քրեական գործը կարող է կարճվել Քրեական օրենսգրքի 72, 73 և 74-րդ հոդվածներով սահմանված դեպքերում: Նշված հոդվածներից կիրառելի է տվյալ դեպքում 73-րդ հոդվածը, համաձայն որի՝ **ոչ մեծ ծանրության** հանցանք կատարած անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե նա հաշտվել է տուժողի հետ և հատուցել կամ այլ կերպ հարթել է նրան պատճառած վնասը: Ստացվում է, որ ոստիկանությունը Աշոտ Պապյանի արարքները (լրագրողի դեմքին հարվածելը, նրան մարմնական վնասվածք հասցնելը, տեսասարքը խլելը) որակել է ոչ թե Քրեական օրենսգրքի 164-րդ հոդվածի 3-րդ, այլ 1-ին մասով (լրագրողի աշխատանքին խոչընդոտելը՝ առանց բռնության կիրառման կամ սպառնալիքի): Հակառակ դեպքում, այսինքն՝ եթե արարքը որակվեր 3-րդ մասով (լրագրողի աշխատանքի խոչընդոտումը բռնության կամ սպառնալիքի գուգորդմամբ), գործը չէր կարող կարճվել կողմերի հաշտվելու հիմքով, քանի որ 3-րդ մասով

սահմանված հանցագործությունը ոչ մեծ ծանրության հանցագործություն չէ: Ակնհայտ է, որ քրեական գործը կարճելու մասին որոշումը հակասում է գործի փաստերին: Այդուհանդերձ, մինևույն ժամանակ պետք է արձանագրել, որ լրագրողը չի բողոքել այս որոշման դեմ, ավելին՝ հրապարակավ հայտարարել է, որ համաձայն է սույն որոշման հետ:¹²

Իրավական պաշտպանության միջոցն արդյունավետ կերպով գործել է «Հայկական ժամ» օրաթերթի լրագրող Հերմինե Մանուկյանի նկատմամբ: Այս գործով Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիանի դատարանը Հակոբ Ղազարյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 164-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա ու նրան դատապարտել տուգանքի 200.000 դրամի չափով այն բանի համար, որ վերջինս խոչընդոտել է «Հայկական ժամ» օրաթերթի լրագրող Հերմինե Մանուկյանին հարցազրույց վերցնել Խաչադրյուր գյուղի միջնակարգ դպրոցի տնօրեն Սամվել Ղազարյանից: Արարքը դրսևորվել է նրանում, որ Հակոբ Ղազարյանը փորձել է լրագրողի ձեռքից խլել լուսանկարչական ապարատը, չի թողել, որպեսզի լրագրողը լուսանկարահանի և հարցազրույց վերցնի Սամվել Ղազարյանից, որի արդյունքում լրագրողը ստիպված է եղել լքել տարածքը՝ առանց Սամվել Ղազարյանից հարցազրույց վերցնելու:¹³

Լրագրողի մասնագիտական գործունեությունը խոչընդոտվել է նաև խտրական վերաբերմունքի արդյունքում: Մասնավորապես, նախագահական

¹² Տե՛ս Հակոբ Կարապետյանի հայտարարությունը <http://lurer.com/?p=108496&l=am> էջում:

¹³ Տե՛ս թիվ ԳԴՅ/0039/01/13 դատական գործը www.datalex.am տեղեկատվական առցանց համակարգում:

ընտրությունների քարոզարշավի ընթացքում նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի հետ կայանալիք հանդիպումների ժամանակ խոչընդոտվել է Yerkir.am կայքի թղթակից Ազնեսա Խամոյանի մասնագիտական գործունեությունը: Լրագրողը զրկվել է ՀՀ կառավարության նիստերի դահլիճում, ապա նաև՝ Ավան վարչական շրջանի մշակույթի տանը թեկնածուի հետ կազմակերպված հանդիպմանը մասնակցելու հնարավորությունից՝ չնայած հավատարմագրված էր եղել լուսաբանելու երկու հանդիպումներն էլ:

3. Վիրավորանքի և զրպարտության հիմքերով դատական գործերը լրատվամիջոցների դեմ

1. Վիճակագրություն

2013 թվականի հունվարից մինչև հոկտեմբեր ամիսը դատարանների կողմից ստացվել են վիրավորանքի ու զրպարտության հիմքերով 13 հայցադիմումներ¹⁴ ընդդեմ լրատվամիջոցների կամ լրագրողների, որոնցից 6-ը կրկնվող գործեր են՝ ներկայացված միևնույն անձի կողմից ընդդեմ 6 լրատվամիջոցների, որոնցում փաստերը և իրավունքի մասին հայցերը նույնն են:¹⁵ Նշված 13 գործերից 3-ն

¹⁴ Տե՛ս [Հավելվածում](#) 61-73 կետերը: Հավելվածում ապաքրեականացումից ի վեր ներկայացված բոլոր դատական գործերի ցուցակն է և վարույթի ներկայիս փուլը:

¹⁵ Հայցադիմումները ներկայացվել են նախկին փաստաբան Կարինե Ավանեսյանի կողմից, ով դատապարտվել է իր պաշտպանյալի համար ոչ բարենպաստ դատական ակտը կեղծելու համար եւ ներկայումս կրում է իր պատիժը ազատազրկման տեսքով: Հայցադիմումը բերել է ընդդեմ վեց լրատվամիջոցների այն հիմքով, որ լրատվամիջոցները, դատաքննության ընթացքում կատարելով մեղքի մասին հրապարակային հայտարարություններ, վիրավորել ու զրպարտել են իրեն: Այդուհանդերձ,


ավարտվել են, իսկ մնացածն ընթացքի մեջ են առաջին ատյանի դատարանում կամ վերաքննիչ դատարանում: Ընդհանուր առմամբ, ապաքրեականացումից ի վեր, այսինքն՝ 2010 թվականի մայիսից մինչև սույն ուսումնասիրությունը կատարելու պահը՝ 2013 թվականի հոկտեմբերը, ընդդեմ լրատվամիջոցների ու լրագրողների ներկայացվել են 73 հայցեր, որոնցից ներկայումս ընթացքի մեջ է 14 գործ¹⁶, իսկ մնացած 59 գործերն ավարտվել են:¹⁷ Ընթացքի մեջ գտնվող 14 գործից 10-ով դեռ դատական ակտ չի կայացվել, իսկ 4-ով կայացվել է առնվազն մեկ դատական ակտ: Ապաքրեականացումից ի վեր գործերի հոսքը ամսական կտրվածքով ունի հետևյալ տեսքը.

արդեն կայացված երկու որոշումներով դատարանները գտել են, որ հայցադիմումները բերվել են հայցային վաղեմության 6-ամսյա ժամկետի խախտմամբ:

¹⁶ Անցյալ տարվա նույն ժամանակահատվածում 51 գործից ընթացքի մեջ էր 15 գործ՝ գրեթե նույն քանակությամբ, ինչ 2013 թվականին, ինչը վկայում է այն մասին, որ գործերի հոսքը 2012 և 2013 թվականներին գրեթե նույնանման է: Սա է վկայում նաև մեկ ամսվա կտրվածքով դատարան ներկայացված գործերի թիվը, որը տատանվում է 0-ի և 2-ի միջև, կամ միջին հաշվարկով 1 դատական գործ մեկ ամսվա ընթացքում:

¹⁷ Տե՛ս [Հավելվածը](#): Հավելվածում ընդգրկված չեն այն դատական գործերը, որոնցում լրատվամիջոցները կամ լրագրողները ներգրավվել են որպես երրորդ անձ: Մեր կարծիքով, դատավարության երրորդ անձ ներգրավված լինելու հանգամանքը էական միջամտություն չէ, և այդ պատճառով նման գործերը սույն հետազոտության առարկա չեն դարձել:


Աղյուսակ 1. Դատական գործերի շարժը ամսական կտրվածքով



Կապույտ գիծը ներառում է այն ժամանակահատվածը, որն ընկած էր մինչև Սահմանադրական դատարանի կողմից հայտնի ՄԴՈ-911 որոշման ընդունումը՝ 2011 թվականի նոյեմբերը, իսկ կարմիր գիծը՝ գործերի հոսքը այդ որոշումից հետո: Ինչպես տեսնում ենք, այս որոշումից հետո գործերի հոսքը նկատելիորեն նվազել է և կազմում է հաստատուն 1-2 գործ ամսական կտրվածքով, որը շարունակվում է մինչ այժմ: Ինչ վերաբերում է 2013 թվականի ապրիլ ամսվա ցատկին (մինչև 6 գործ), ապա դա պայմանավորված է այն հանգամանքով, որ նշված վեց գործերը բերվել են նույն անձի կողմից ընդդեմ վեց լրատվամիջոցների և հիմնված են միևնույն փաստական հանգամանքների վրա: Ուստի, եթե այդ վեց գործերը համարենք որպես մեկ գործ, ապա ամսական կտրվածքով գործերի հոսքը կրկին ծավալվում է 0-2 գործի շրջանակներում: Դա է վկայում նաև գործերի հոսքը տարեկան կտրվածքով: Դա է վկայում նաև գործերի հոսքը դեկտեմբեր դատարան մուտք է եղել 16 գործ, 2011 թվականին՝ 29 գործ, 2012-ին՝ 15 գործ, իսկ 2013թ. հունվարից

մինչև հոկտեմբեր՝ 13 գործ, որից 6-ը կրկնվող գործեր են միևնույն անձի կողմից:¹⁸

Աղյուսակ 2. Պատական գործերի քանակը ըստ տարիների




Ավարտված 59 գործերից 24-ը դատարաններն ամբողջությամբ մերժել են (41%), 12-ը բավարարել են մասնակի (20%), 10 գործով կայացվել է հաշտության համաձայնագիր (17%), 9-ի դեպքում հայցվորները դատաքննության ընթացքում հրաժարվել են հայցապահանջից, 3 գործով դատարանները վերադարձրել են հայցը՝ հնարավորություն տալով շտկել սխալները և կրկին ներկայացնել, և ընդամենը մեկ գործով դատարաններն ամբողջությամբ բավարարել են

¹⁸ [Հավելվածում](#) նշված 1-ին և 2-րդ գործերը չենք հաշվում, քանի որ դրանց դատական վարույթները սկսվել են մինչև ապաքրեականացումը՝ 2008 և 2009 թվականներին, իսկ [Հավելվածում](#) ընդգրկել ենք, քանի որ դատարանները դրանցում կիրառել են արդեն ապաքրեականացումից հետո սահմանված նոր իրավակարգավորումները:


հայցապահանջը¹⁹ (տե՛ս Աղյուսակ 3): Ավարտված 59 գործերով, ընդհանուր առմամբ, ընդդեմ լրատվամիջոցների ու լրագրողների բերվել է 150,225,300 դրամի չափով նյութական փոխհատուցման պահանջ, որից բավարարվել է 13,160,000 դրամը, որը կազմում է ընդհանուր գումարային պահանջի 8,7 տոկոսը: Հատկանշական է, որ 2012 թվականին նույն ժամանակահատվածի հոկտեմբեր ամսվա դրությամբ այս նիշը կազմում էր 8.6 տոկոս: Այսպես՝ 2012թ. հոկտեմբերի դրությամբ ավարտվել էր 36 դատական գործ, որի շրջանակներում, ընդհանուր առմամբ, բերվել էր 130,698,350 դրամի պահանջ, որից բավարարվել էր 11,286,000 դրամ՝ 8,6%-ը (տե՛ս Աղյուսակ 4):

Աղյուսակ 3. Դատական որոշումները



¹⁹ Տե՛ս Ազգային ժողովի երեք պատգամավորների՝ Մամվել Ալեքսանյանի, Ռուբեն Հայրապետյանի և Լևոն Սարգսյանի կողմից ընդ դեմ «Դարեսկիզբ» ՍՊԸ-ի բերված հայցը թիվ ԵԿԴ/2347/02/10 քաղաքացիական գործով:


Աղյուսակ 4. Գումարային պահանջները 2012 և 2013 թվականների հոկտեմբեր ամիսների համեմատությամբ




Առավել շատ դատական գործեր բերվել են ընդդեմ տպագիր լրատվամիջոցների՝ թերթերի և մեկ դեպքում՝ ամսագրի (38 դատական գործ), այնուհետև՝ էլեկտրոնային կայքերի (26 դատական գործ), լրագրողների (14 դատական գործ) և հեռուստատեսության (13 դատական գործ): Հաճախ հայցապահանջները ներկայացվել են և՛ ընդդեմ լրատվամիջոցի և՛ ընդդեմ լրագրողի (տե՛ս Աղյուսակ 5 ներքևում):

Առավել շատ հայցապահանջներ բերվել են սովորական քաղաքացիների ու մասնավոր ընկերությունների կողմից (32) ի տարբերություն քաղաքական, պետական գործիչների ու պետական մարմինների, որոնց ներկայացրած հայցերի թիվը կազմում է 25: Փաստաբանների կողմից նույնպես ավելանում է դիմումների քանակը: Թեև հետազոտության մեջ նշված է 9 թիվը, սակայն իրականում մինչ այժմ հայցապահանջ բերվել է երեք փաստաբանի կողմից, որոնցից երկուսի դեպքում հայցապահանջը ներկայացված է մի քանի լրատվամիջոցների դեմ (տե՛ս Աղյուսակ 6):

Աղյուսակ 5. Լրատվամիջոցների տեսակները, որոնց դեմ բերվել են դատական գործեր



Աղյուսակ 6. Դատական գործերի քանակն ըստ հայցվորների խմբերի



Վերը նշված վիճակագրությունը ցույց է տալիս, որ ընդհանուր առմամբ պահպանվում են 2012 թվականի միտումները. նոր դատական գործերի ցածր հոսքը պահպանվում է (ամսական 1 կամ 2 գործ), իսկ հայցապահանջների մեծ մասը կամ ամբողջությամբ կամ

էապէս մերժվում է: Հաճախ դատարանները բավարարում են հայցապահանջները մասնակիորեն, իսկ ընդհանուր առմամբ աճում է դատական վեճը հաշտությամբ ավարտելու՝ կողմերի ցանկությունը: Համեմատաբար բարձր թիվ են կազմում նաև այն գործերը, որոնցում հայցվորները հրաժարվում են իրենց հայցապահանջից դատաքննության փուլում: Նշված միտումները կարելի է բացատրել այն հանգամանքով, որ դատարանները սահմանել են ապացույցների բավականին բարձր ու դժվար հաղթահարելի շեմ հայցվորների համար, որով լրատվամիջոցներն ու լրագրողները, և ի վերջո՝ նաև ազատ խոսքն անցնում են նկատելի պաշտպանության տակ:

2. Դատական ակտերի բովանդակային վերլուծություն

2013 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսների ընթացքում դատարանները կայացրել են լրատվամիջոցների ու լրագրողների ազատության առումով մեծամասամբ բարենպաստ դատական ակտեր: Միևնույն ժամանակ, որոշ գործերով դատարաններն արտահայտել են դիրքորոշումներ, որոնք խնդրահարույց են:

2013 թվականի սկզբում բողոքի որոշ ակիբ բարձրացրեց Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի որոշումը «Ժողովուրդ» օրաթերթի գույքի վրա 3 մլն դրամի չափով արգելանք դնելու մասին՝ կապված «Երևանի թռչնաբուծական ֆաբրիկա» ԲԲԸ-ի և ընկերության տնօրեն Խաչիկ Խաչատրյանի կողմից ընդդեմ լրատվամիջոցի բերված հայցի և դրա շրջանակներում հայցի ապահովման միջոց կիրառելու մասին ներկայացված միջնորդության հետ:

Միջնորդությունը բավարարելու մասին դատարանի որոշումը լրատվամիջոցի և որոշ իրավապաշտպանների կողմից գնահատվեց որպես լրատվամիջոցի ազատ արտահայտվելու իրավունքի անհամաչափ մոտեցում այն հիմքով, որ դրանով վտանգվում էր լրատվամիջոցի գործունեությունը: Այս իմաստով պարզաբանում հնչեց դատական իշխանության և լրատվամիջոցների ինքնակարգավորման որոշ մարմինների կողմից առ այն, որ դատական որոշումն, ընդհանուր առմամբ, համաչափ էր, քանի որ գույքային միջոցի վրա արգելանք դնելը չէր ներառում ընկերության ֆինանսական միջոցները, հետեւաբար, ընկերության գործունեությունը վտանգված չէր: Իրավամբ, արգելանքի միջոցը տվյալ պարագայում լրատվամիջոցի գործունեության միջամտության համաչափ եղանակ էր, որն ապացուցվեց դեպքերի հետագա զարգացումով, քանի որ արգելանքի արդյունքում ընկերության գործունեությունը դատաքննության ընթացքում երբևէ չդադարեց և ոչ էլ որևէ կերպ խոչընդոտվեց: Ներկայումս արդեն տարածված դատական պրակտիկա է, որի համաձայն՝ դատարաններն արգելանք կիրառելու մասին միջնորդություն ստանալու դեպքում նախընտրում են արգելանքը կիրառել լրատվամիջոցի գույքային, այլ ոչ թե ֆինանսական կամ որևէ այլ միջոցի վրա, որի դեպքում կխաթարվի լրատվամիջոցի բնականոն գործունեությունը: Այսպիսով, դատարաններն ապահովում են ինֆորմացիայի ազատ հոսքը լրատվամիջոցի կողմից դատաքննության ընթացքում:

2013 թվականի ընթացքում դատարանները ստիպված էին կրկին անդրադառնալ օրենքի էական բացին՝ ոչ հրապարակային վիրավորական կամ զրպարտչական բնույթի հայտարարություններից պաշտպանվելու

անհնարինությանը, քանի որ Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածը պաշտպանում է միայն հրապարակային եղանակով տարածված խոսքը: Առաջին անգամ այդ խնդիրը ծագեց «Հետք»-ի լրագրող Գրիշա Բալասանյանի և Ազգային ժողովի պատգամավոր Ռուբեն Հայրապետյանի միջև միջադեպի արդյունքում, երբ վերջինս հեռախոսային խոսակցության ժամանակ վիրավորական արտահայտություններ էր թույլ տվել լրագրողի հասցեին:²⁰ Այս տարվա ընթացքում այս խնդիրը կրկին քննարկումների տեղիք տվեց «Ժողովուրդ» թերթի թղթակից Սոնա Գրիգորյանի կողմից ընդդեմ «Երևանի թոշնաբուժական ֆաբրիկա» ԲԲԸ- ի տնօրեն Խաչիկ Խաչատրյանի բերված դատական գործի շրջանակներում, որի հիմքում նույնպես ընկած էր ոչ հրապարակային եղանակով՝ հեռախոսագրույցի ընթացքում մեկ անձի կողմից մյուս անձին վիրավորելու փաստական հանգամանքը: Դատարանը ստիպված էր կարճել քաղաքացիական գործը, քանի որ հայցվորի՝ լրագրողի կողմից վիճարկվող իրավունքը պաշտպանված չէր Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 կամ որևէ այլ հոդվածով: Այս խնդրին անդրադարձավ նաև Տեղեկատվական վեճերի խորհուրդը իր թիվ 32 որոշումով՝ նշելով, որ առկա է համակարգային բաց, որի արդյունքում խախտվում է քաղաքացիների՝ Սահմանադրության 19-րդ հոդվածով սահմանված իրավունքը՝ իրավական պաշտպանության բացակայությունը: Այս առումով անհրաժեշտ է նշել, որ Սահմանադրական դատարանը դեռ իր ՄԴՈ-997 որոշմամբ արտահայտել է այն կարծիքը, որ նշված հանգամանքը «*ոչ թե օրենսգրքի տվյալ հոդվածի, այլ ընդհանուր*

²⁰ Տե՛ս թիվ ԵԱՆԴ/0251/02/11 դատական գործը www.datalex.am տեղեկատվական շտեմարանում:

իրավակարգավորման բաց է, և այն հաղթահարելու համար ՀՀ Ազգային ժողովն իր իրավագործության շրջանակներում առանձին քննարկման առարկա պետք է դարձնի ոչ հրապարակային վիրավորանքից պաշտպանության իրավական կանոնակարգման խնդիրը»:²¹

Սահմանադրական դատարանի այս որոշումից անցել է արդեն մոտ երկու տարի, սակայն Ազգային ժողովը դեռ չի կատարել Սահմանադրական դատարանի որոշումը:

Դատարանները շարունակում են ստանալ դատական հայցեր, որտեղ կողմը վիճարկում է անմեղության կանխավարկածի խախտումը լրատվամիջոցի կողմից՝ դատաքննությունը կամ նախաքննությունը լուսաբանելիս: Նման հայցերը, որպես կանոն, բերվում են վիրավորանքի և գրպարտության իրավահարաբերությունները կարգավորող Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի ներքո, մինչդեռ այս հոդվածը չի տրամադրում այնպիսի պաշտպանական համակարգեր, որոնք արդյունավետ կլինեն անմեղության կանխավարկածի խախտումը քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում վիճարկելու համար: Որպես կանոն, դատարանները մերժում են նման հայցերը՝ նշելով, որ անմեղության կանխավարկածը քրեադատավարական կատեգորիա է և որպես այդպիսին քաղաքացիական իրավունքի օբյեկտ չի հանդիսանում: Իրավամբ, Քաղաքացիական օրենսգիրքը չի սահմանում հնարավորություն անմեղության կանխավարկածի խախտման դեպքում քաղաքացիական հայց բերելու համար: Այս պարագայում իրավական պաշտպանության միջոցն ուղղակիորեն բացակայում է: Դա է պատճառը, որ քաղաքացիները նման դեպքերում ստիպված են վիճարկել

²¹ Տե՛ս § 8: ²² Տե՛ս [Հավելվածում](#) թիվ 63 գործը:

նշված իրավունքի խախտումը վիրավորանքի կամ գրպարտության հիմքով, որն էլ, ինչպես նշվեց, անարդյունավետ իրավական կառուցակարգ է այս իրավահարաբերության համար: Օրինակ՝ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանում ներկայումս քննվում է Հարություն Սարգսյանի հայցն ընդդեմ «Ցայգ» հեռուստաընկերության,²² որի շրջանակներում հայցվորը պնդում է, որ հեռուստաընկերությունը վիրավորել ու գրպարտել է իրեն՝ սպանություն կատարելու մեջ մեղադրելով, և դա այնպիսի հանգամանքներում, երբ իր մեղքը դեռ հաստատված չէ, քանի որ սպանության գործով դատաքննությունը դեռ ընթացքի մեջ է: Եթե դատաքննությունը ձգձգվի այնքան ժամանակ, մինչև քրեական գործով կայացվի մեղադրական դատավճիռ, ու դատաքննությունն ավարտվի Հարություն Սարգսյանի դատապարտմամբ, լրատվամիջոցը կազատվի պատասխանատվությունից, քանի որ կստացվի, որ իր տարածած հայտարարությունը գրպարտություն չէր: Մինչդեռ իրականում խախտվել է Հարություն Սարգսյանի անմեղության կանխավարկածը, որի համար էական չէ, թե նրա մեղքը հետագայում կհաստատվի՞, թե՞ ոչ: Սակայն եթե Հարություն Սարգսյանը քաղաքացիական դատարանում վիճարկի անմեղության կանխավարկածի խախտումը, դատարանը կմերժի հայցը այն հիմքով, որ հայցվորը վիճարկում է մի իրավունք, որը սահմանված չէ օրենսդրությամբ: Նման իրավիճակը, կարծում ենք, համակարգային խնդիր է, որի դեպքում մենք գործ ունենք օրենքի բացի հետ: Փաստ է, որ անմեղության կանխավարկածը ներկայումս ավելի շատ խախտվում է

²² Տե՛ս [Հավելվածում](#) թիվ 63 գործը:

քաղաքացիաիրավական հարաբերություններում, քան քրեական դատավարության ընթացքում: Որպես օրինակ կարելի է բերել ՋԼՄ-ների, մասնավորապես՝ պապարացիների գործելաճ որդեգրած որոշ «վայ» լրագրողների, ուլքեր, փաստորեն, կարող են բոլորովին չմտահոգվել, որ պատասխանատվության կենթարկվեն մեղադրյալի անմեղության կանխավարկածը խախտելու համար, քանի դեռ նրանք քրեական դատավարության կողմ չեն, մի բան, որ կարող է պատահել միայն հազվադեպ: Այսինքն՝ հասարակական հարաբերություններում առկա է անմեղության կանխավարկածի խախտման երևույթը, մինչդեռ դրա դեմ իրավական պաշտպանության միջոցը բացակայում է, որը բարձրացնում է սահմանադրականության խնդիր:

Մտահոգիչ էր Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի որոշումը Համբարձում Մաթևոսյանի գործով,²³ որով դատարանը, հաստատելով երկու անձանց միջև հաշտության մասին համաձայնագիր, պարտավորեցրել էր դատավարության կողմ և հաշտության համաձայնագրի կողմ չհանդիսացող www.hetq.am առցանց լրատվամիջոցին գրավոր հերքում հրապարակել իր կայքում: Ըստ փորձագետների՝ սա լրատվամիջոցի իրավունքի անհարկի միջամտություն էր դատարանի կողմից: Եթե դատարանը լրատվամիջոցի վրա որոշել է դնել հերքում հրապարակելու պարտականություն, ապա պետք է լրատվամիջոցին նախ և առաջ դարձներ դատական քննության կողմ, որպեսզի լրատվամիջոցը հնարավորություն ունենար վիճարկել միջամտող դատական ակտը: Մյուս կողմից՝ լրատվամիջոցը զրկված չէ դատարանի սույն որոշումը բողոքարկելու

²³ Քաղաքացիական գործ թիվ ՇԴ/1005/02/12

հնարավորությունից, որն էլ, ի դեպ, արել է, թեև նրա բողոքները մերժվել են անհիմն լինելու պատճառաբանությամբ: Ի հավելումն, լրատվամիջոցը կարող է հերքում հրապարակելու պահանջով իրեն դիմած անձի հետ վեճ ունենալու դեպքում դիմել դատարան և վիճարկել իր վրա դրված պարտականության հարցը: Արդյոք դատավարական նման հնարավորությունը կասկածի տակ է դնում լրատվամիջոցի սկզբնական պահանջի (առանց իր մասնակցությամբ կայացված դատավարության ընթացքում իր համար պարտավորություն սահմանելը) իրավաչափությունը: Կարծում ենք՝ ոչ, քանի որ բոլոր դեպքերում լրատվամիջոցը նախ պարտավոր է կատարել օրինական ուժի մեջ մտած դատական վճիռը, և այդ վճռի կատարումը չի կարող կասեցվել այն հիմքով, որ լրատվամիջոցը հերքման պահանջ ներկայացնող անձի հետ առանձին դատական վեճի մեջ է մտել: Առայժմ մեզ հայտնի է դեռ նման մեկ դեպք, երբ առանց լրատվամիջոցի մասնակցության կայացված դատական վարույթում ընդունվում է լրատվամիջոցի համար պարտականություն սահմանող դատական ակտ: Նման դատական ակտերը լրատվամիջոցների իրավունքներին միջամտող ակտեր են, ուստի հուսով ենք, որ նման որոշումները պրակտիկա չեն դառնա:

Արմեն Դարբինյանն ընդդեմ «Քաղաքացիական հետազոտությունների կենտրոն» ՄՊԸ-ի գործով²⁴ դատարանը կարևոր իրավական դիրքորոշումներ արտահայտեց «գնահատական-դատողություն» հասկացության «դատողություն» եզրույթի վերաբերյալ:

²⁴ Տե՛ս թիվ 56 գործը [Հավելվածում](#). Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/2050/02/12:

Ներպետական դատական պրակտիկայում ձևավորվել էր մի մոտեցում, ըստ որի՝ դատավարության կողմերը հաճախ փորձում էին փաստի մասին սովորական հայտարարությունները ներկայացնել որպես գնահատական-դատողություն՝²⁵ զուտ պաշտպանական տակտիկայի նկատառումներով: Երբեմն նույնիսկ դատարաններն էին փաստի մասին հայտարարությունը, այդ թվում նաև արտահայտված սովորական կարծիքը ներկայացնում որպես գնահատական-դատողություն:²⁶ Այս առումով պրակտիկայում արդեն առաջացել էր «գնահատական-դատողություն» եզրույթի դատական մեկնաբանության անհրաժեշտություն, որն էլ տրվեց սույն դատական գործի ընթացքում, որով հստակություն մտցվեց այս եզրույթի կիրառման հարցում: Այդուհանդերձ, կարծում ենք, որ խնդիրը մասամբ նաև օրենսդրության թերության մեջ է, քանի որ հիմնական կարգավորող նորմը՝ Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածը, չի տրամադրում «գնահատական-դատողություն» հասկացության ինքնուրույն սահմանում: Դրա փոխարեն նշված հոդվածում օրենսդիրն օգտագործում է հրապարակային «արտահայտություն» եզրույթը, որը հավասարապես վերաբերում է ն՝ փաստի մասին հայտարարությանը, ն՝ գնահատական-

²⁵ Տե՛ս ՏՎԽ թիվ 12 որոշումը՝ Գլենդեյլ Հիլզն ընդդեմ «Ժամանակ» օրաթերթի:

²⁶ Տե՛ս, օրինակ, ՏԴ1-0177/02 գործով Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 27/04/2012թ. և 22/03/2013 վճիռները «Իջևանի ՃՇՇ» բաժնետիրական ընկերությունն ընդդեմ Իջևան հեռուստաընկերության և լրագրող Նաիրա Խաչիկյանի գործով, որոնցում դատարանը փաստի մասին սովորական հայտարարությունը կամ արտահայտված կարծիքները ներկայացնում է որպես գնահատական-դատողություն:

դատողությանը: Իրավակիրառ պրակտիկայում սա առաջացնում է շփոթմունք: Թեև դատարաններն իրենց որոշումներում շարունակաբար և հետևողականորեն անդրադառնում են այս հասկացությանը, սակայն օրենսդրական կարգավորման բացակայության պատճառով երբեմն ստեղծվում են իրավիճակներ, երբ դատավարության կողմերը փաստի մասին հայտարարությունը ընկալում են որպես գնահատական-դատողություն, իսկ գնահատական-դատողությունը՝ փաստի մասին հայտարարություն: Մրա արդյունքում երբեմն դատարանները կողմից պահանջում են ապացուցել մի հայտարարություն, որն օբյեկտիվորեն ենթակա չէ ապացուցման: Օրինակ՝ վերը նշված գործով պատասխանողից պահանջվել էր ապացուցել *«նապոլեոնակերպ ֆենոմենը»* արտահայտության ճշմարտացիությունը, որն օբյեկտիվորեն անհնար է ապացուցել ու դատավարական իմաստով ենթակա էլ չէ ապացուցման:²⁷

Մեկ այլ՝ «Կանանց ռեսուրսային կենտրոն» հասարակական կազմակերպությունն ընդդեմ «Զարուհի հրատարակչական տուն» ՍՊԸ-ի գործով²⁸ դատարանը հայցվորից պահանջել է ապացուցել «տուն քանդողներ» արտահայտության ճշմարտացիությունը, իսկ այնուհետև վճռում եզրակացրել, որ հողվածի հեղինակը *«չի նշել և դատարանում էլ չկարողացավ նշել որևէ փաստ, որ հայցվորի անմիջական գործունեության հետևանքով քանդվել է գոնե մեկ ընտանիք»*: Մինչդեռ դատարանը պետք

²⁷ Նմանատիպ իրավիճակի վերլուծություն է կատարել նաև Եվրոպական դատարանը *Նովայա Գազետա վ Կորոնեժե ընդդեմ Ռուսաստանի* գործով վճռում (թիվ 27570/03, 21/12/2010, § 52):

²⁸ Թիվ 49 գործը [Հավելվածում](#), քաղաքացիական գործ թիվ ԵԱ.ԲԴ/0642/02/12:

է հաշվի առնէր, որ նշված արտահայտությամբ հեղինակը որակական գնահատական էր տվել ընկերության գործունեությանը,²⁹ այլ ոչ թե կոնկրետ փաստի՝ տուն քանդելու մասին: Դա կարծիք էր, անձի սուբյեկտիվ տպավորության հիման վրա հնչեցված գնահատական, որը որպէս այդպիսին ենթակա չէ ապացուցման, և նման դեպքերում ապացուցման բեռ սահմանելը համարվում է ազատ արտահայտվելու իրավունքի անհամաչափ սահմանափակում: Նույն գործում, սակայն, վերաքննիչ դատարանը մի դիրքորոշում է արտահայտել, որը դրական միտում ունի: Այս գործում Լեզվի պետական տեսչությունը պաշտոնապէս կարծիք էր արտահայտել «գրանտաձիծ» բառի իմաստի մասին՝ նշելով, որ բառն ունի բացասական իմաստ: Վերաքննիչ դատարանը դատական ստուգման արդյունքում հայտարարեց, որ եթէ կարելի է ընդունել ՀՀ կրթության և գիտության նախարարության լեզվի պետական տեսչության եզրահանգումը այս բառի կազմության մասին, ապա անընդունելի է տեսչության կարծիքը այն մասին, որ այդ բառն ունի բացասական իմաստ: Ըստ վերաքննիչ դատարանի՝ *«արտահայտության վիրավորական կամ ոչ վիրավորական լինելու գնահատականը տալը վերապահված է ոչ թե Լեզվի տեսչությանը, այլ դատարանին»*: Նման մոտեցումը ողջունելի է, քանի որ վիրավորանքի և զրպարտության գործերում շատ կարևոր է, որպէսզի բառը մեկնաբանվի հրապարակային հայտարարության կոնտեքստում, այլ ոչ թե կոնտեքստից դուրս, մինչդեռ պետական մարմինը, ի տարբերություն դատարանի, բոլոր դեպքերում միտված է բառի իմաստը մեկնաբանել

²⁹ «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՍՊԸ-ն զբաղվում է գենդերային խտրականության և ընտանեկան բռնության հարցերով:

վերացական կերպով: Բացի այդ, տվյալ դեպքում պետական մարմինն իրեն վերագրել է դատարանի գործառնություններ, որն անընդունելի է:

Այս շրջանում հատկապես մտահոգիչ էր «Իջևանի ՃՇՇ» ՓԲ ընկերությունն ընդդեմ «Իջևան ստուդիա» ՍՊԸ-ի և լրագրող Նահիրա Խաչիկյանի գործով³⁰ դատական ատյանների եզրահանգումը դատական ծախսերի մասով: Սույն գործով առաջին ատյանի դատարանն ամբողջությամբ մերժեց հայցվոր ընկերության հայցապահանջը, սակայն, մինևույն ժամանակ, պարտավորեցրեց պատասխանողներին համապարտության կարգով փոխհատուցել հայցվոր ընկերության՝ փաստաբանի համար կատարած 100,000 դրամի չափով վարձատրությունը և պետական տուրքի վճարումը (40,000 դրամ): Առերևույթ տարօրինակ այս մոտեցումը վերաքննիչ դատարանը բացատրել է այն եզրահանգմամբ, որ թեև առաջին ատյանի դատարանը մերժել էր վիրավորանք հասցված լինելու հանգամանքը, սակայն ընդունել էր գրպարտության փաստը և հենց այդ մասով էլ բավարարել փոխհատուցման պահանջը փաստաբանի վարձատրության և պետական տուրքի մասով: Իսկ ինչ վերաբերում էր այն հանգամանքին, թե ինչու դա չէր արտահայտել վճռի եզրափակիչ մասում, վերաքննիչ դատարանը դա բացատրել էր նրանով, որ իրականում գրպարտության մասով դատարանը նույնպես մերժել էր հայցապահանջը, սակայն ոչ թե նյութաիրավական հիմքով, այլ զուտ պատասխանող հեռուստարևիկերության և լրագրողի գույքային վիճակից ելնելով: Դատարանների՝ սույն գործով նման եզրահանգումը տարակուսանք առաջացրեց լրագրողների և իրավաբանների շրջանում: Ստացվում է, որ

³⁰ Քաղաքացիական գործ թիվ ՏԴ1/0177/02/11

նույնիսկ դատական գործը շահելու դեպքում լրատվամիջոցը ազատված չէ փոխհատուցում վճարելու պարտականությունից: Ի՞նչն էր կաշկանդում դատարանին՝ եզրափակելիչ մասում ուղղակի նշելու, որ լրատվամիջոցը խախտել է հայցվոր ընկերության իրավունքը գրպարտության մասով և արձանագրելու խախտումը, իսկ գումարային պահանջը՝ մերժելու: Ըստ Տեղեկատվական վեճերի խորհրդի՝ «*դատարանի նշված մոտեցումը խնդրահարույց է այն առումով, որ կարող է սառեցնող ազդեցություն ունենալ լրատվամիջոցների ու լրագրողների ազատության վրա... Եթե այս որոշումը դառնա տարածված պրակտիկա, նույնիսկ դատական գործը շահելու դեպքում պատասխանողի կարգավիճակում հայտնված լրատվամիջոցները կարող են պարտադրված լինել վճարել դրամական խոշոր փոխհատուցումներ, որի պայմաններում առ ոչինչ է դառնում դատական պաշտպանության իրավունքի իմաստը և լրջորեն վտանգվում ազատ խոսքը»:³¹*

Դատարանը մերժեց Կարինե Ավանեսյանի կողմից բերված վեց գանգատներից առաջինը հայցային վաղեմության հիմքով: Այս վարույթի առումով նշանակալից էր այն, որ առաջին աստիճանի դատարանը ևս մեկ անգամ մեկնաբանեց վիրավորանքի և գրպարտության գործերով սահմանված հայցային վաղեմության «*մեկ ամիս իմանալու պահից և վեց ամիս հրապարակման պահից*» կանոնը՝ նշելով, որ երկրորդ տարրը բոլոր դեպքերում գերակայում է: Եվ անկախ այն հանգամանքից, թե երբ է անձը տեղեկացել հրապարակման մասին, վեցամսյա ժամկետը գերակայում է: Այս գործով դատարանը մեկնաբանեց նաև նշված ժամկետի պահպանումը հիմնավորելու նպատակով ներկայացված

³¹ Տե՛ս ՏՎԽ թիվ 33 [կարծիքը](#):

«ապացույցներ» հասկացությունը՝ կիրառելով Վճռաբեկ դատարանի նախադեպային սահմանումները:

Մասնավորապես՝ դատարանը սահմանեց, որ 6-ամսյա ժամկետի պահպանումը կարելի է հիմնավորել նաև անուղղակի ապացույցներով, և հայցը չի կարելի մերժել զուտ այն հիմնավորմամբ, որ ներկայացված ապացույցներն ուղղակի ապացույց չեն: Այս դատական ակտից պարզ է դառնում, որ ներկայումս վիրավորանքի ու զրպարտության գործերով հայցային վաղեմության ժամկետների կարգավորման հարցով ձևավորվել է կայուն նախադեպային իրավունք:

Այս շրջանում կայացվել են նաև մի շարք այլ որոշումներ, որոնցում թեև իրավունքի մասին հարցով դատական պրակտիկայում որևէ նորություն չի արձանագրվել, սակայն դատարանները հետևողականորեն մերժել են լրատվամիջոցների ու լրագրողների դեմ ներկայացված ակնհայտ անհիմն գանգատները:

Արարատ Դավթյան

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՁԵՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Անցյալ տարվա հոկտեմբերին ոստիկանությունը Ծաղկաձորում երկօրյա համաժողով էր կազմակերպել իր ծառայակիցների եւ լրագրողների համար: «Խնդրում եմ՝ օգնեք մեզ, խթանեք մեր աշխատանքը... Մենք ձեր եղբայրներն ենք, մենք ուրիշը չենք», - դիմելով լրագրողներին՝ ասաց Վլադիմիր Գասպարյանը:

Հայաստանի անկախացումից ի վեր լրագրողների նկատմամբ տասնյակ բռնարարքներ, հանցագործություններ են կատարվել, սակայն դրանց ճնշող մեծամասնությունն անհետեւանք է մնացել. մեղավորներն այդպես էլ չեն պատժվել: Այն հատուկենտ գործերը, որոնք բացահայտվել են և հասել դատարան, իրականում միայն որոշակի վերապահումներով կարելի է համարել բացահայտված:

Վլադիմիր Գասպարյանը նմանատիպ չբացահայտված գործերի մեծ ժառանգություն է ստացել: «Արդյոք անդրադարձե՞լ էք այդ գործերին», - վերոնշյալ համաժողովից հետո ոստիկանապետին [հարցրեց](#) «Հետքը»: «Ձեմ անդրադարձել, մտքովս չի անցել, բավականին շատ բաներ կան», - ասաց Գասպարյանը եւ ոստիկանության լրատվության վարչության պետին հանձնարարեց այդ գործերի մասին իրեն հիշեցնել: «Երբ մյուս հանցագործությունները բացահայտենք, դրան անդրադառնալը, կանդրադառնանք», - հավելեց Վլադիմիր Գասպարյանը:



Մա, թերևս, ուստիկանապետի շուրթերով ասված ամենաանկեղծ բնութագրումն էր. լրագրողների դեմ կատարվող հանցագործությունների բացահայտումը մեր երկրում մղված է ամենահետին պլան: Ուստիկանության դեկավարները փոխվում են, իսկ պատկերը տարիներ շարունակ մնում է նույնը: Ինքը՝ Վլադիմիր Գասպարյանը, «Հետքի» հետ նշյալ գրույցում նաև նկատեց, որ իր պաշտոնավարման ժամանակ լրագրողների նկատմամբ բռնարարքներ «հլր որ չկան»: Նրա խոսքերում ամենատեղին կիրառվածը «հլր» բառն էր, ինչը փաստեց ժամանակը:

Առհասարակ, Հայաստանում լրագրողների մասնագիտական գործունեությանը խոչընդոտելու, նրանց նկատմամբ բռնություններ կիրառելու հիմնական դեպքերը գրանցվում են ընտրությունների ժամանակ: Այս առումով ընթացիկ տարին բացառություն չէր. փետրվարին նախագահի, մայիսին՝ Երեւանի ավագանու ընտրություններ էին:

«Ընտրական» ոտնձգություններ

Փետրվարի 18-ին՝ ՀՀ նախագահի ընտրությունների օրը, «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ-Հայաստան» ՀԿ-ում պրակտիկա անցնող Նարինե Իսմայիլին, որպես «Իրավունքի Եվրոպա միավորում» ՀԿ դիտորդ, եւ «Լրագրողներ հանուն մարդու իրավունքների» ՀԿ ներկայացուցիչ, լրագրող Արտակ Համբարձումյանը բարձրաձայնեցին Արարատի մարզի 17/05 ընտրատեղամասում կատարված լցոնման մասին. 25-ից 30 երիտասարդ մտել էին ընտրատեղամաս, մի քանի հոգով դիտորդին եւ լրագրողին հրել պատի մոտ եւ բռնել նրանց ձեռքերը, որպեսզի վերջիններս չկարողանան լուսանկարել կամ տեսաձայնագրել կատարվելիքը՝ լցոնման գործընթացը:

Սահմանադրական դատարանն այս ընտրատեղամասում գրանցված ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչեց: Հարուցվեց քրեական գործ, որը քննում էր Հատուկ քննչական ծառայությունը: Նախաքննության ընթացքում Նարինե Իսմայիլին «Հետքին» պատմեց իրավապահների կողմից իր դեմ կիրառվող ճնշումների մասին, դրա հետ կապված հայտարարություն տարածեց «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ-Հայաստան» ՀԿ-ն, իսկ ԱՄՆ դեսպան Հեֆերնը հայտարարեց, որ գործին հետեւում է մեծ ուշադրությամբ: Քննիչ Գորիկ Հովակիմյանը քրեական գործից անջատեց առանձին մաս եւ մեղադրանք առաջադրեց Արտաշատի քաղաքապետ Գագիկ Մուրադյանի որդուն՝ 27-ամյա Սերգեյին: ՀԹԾ-ն հիմնավորված համարեց, որ վերջինս ընտրությունների օրը, լինելով գործող նախագահ Սերժ Սարգսյանի վստահված անձը, մի խումբ անձանց հետ մտել է 17/05 ընտրատեղամաս, բռնություն գործադրել ընտրություններին որպես դիտորդ մասնակցող Նարինե

Իսմայիլի նկատմամբ, նրան գրկել շարժվելու, լուսանկարելու կամ տեսաձայնագրելու հնարավորությունից՝ խոչընդոտելով վերջինիս լիազորությունների իրականացմանը:

«Մինչդատական վարույթում ձեռք բերված փաստական տվյալների համաձայն՝ Սերգեյ Մուրադյանը նաև օժանդակել է ինքնությունը չպարզված անձին քվեատուփի մեջ քվեաթերթիկներ [լցնելուն](#)», - նշված էր գլխավոր դատախազության տարածած հաղորդագրությունում: Սակայն արդեն դատավարության ընթացքում դատախազ Հարություն Հարությունյանը հայտարարեց ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին՝ կատարված հանցագործությանը նրա մասնակցությունն ապացուցված չլինելու հիմքով: Այսպիսով, ամիսներ անց՝ հուլիսի 26-ին, Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանը Գագիկ Սարգսյանի նախագահությամբ քաղաքապետի որդուն՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավական փորձաքննության բաժնի առաջին կարգի մասնագետ Սերգեյ Մուրադյանին ճանաչեց անպարտ և արդարացրեց: Իսկ քրեական գործի մյուս մասի վարույթը ՀՔԾ-ն կասեցրեց՝ հանցագործությունը կատարած անձի ինքնությունը հայտնի չլինելու պատճառով:

Փետրվարի 18-ի ընտրությունների օրը Արարատի մարզի թիվ 17/01 ընտրատեղամասում վստահված անձանց կողմից իր մասնագիտական գործունեությանը խոչընդոտելու մասին բարձրաձայնել էր «Իրավունք» թերթի լրագրող Էլմիրա Մարտիրոսյանը: Իսկ Արտաշատի թիվ 17/04 ընտրատեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ, Արարատի մարզպետարանի գյուղատնտեսության եւ բնապահպանության վարչության

պետ Տիգրան Վիրաբյանը խոչընդոտել էր «New York Institute of Photography»-ի թղթակից Ծովինար Նազարյանի աշխատանքին՝ լրագրողի հասցեին օգտագործելով «հիստերիկի նման» արտահայտությունը եւ սպանալով, որ «կտա, կսպանի»:

Նույն օրը asparez.am եւ aravot.am կայքերը տեղեկացրին, որ սպանացել են Գյումրու թիվ 35/22 ընտրատեղամասում ընտրությունները լուսաբանող լրագրողներ Մարինե Պետրոսյանին եւ Նունե Արեւշատյանին: «168.am»-ն ու «aravot.am»-ը նաեւ հայտնեցին, որ Երեւանի Նորագյուղ թաղամասում գտնվող թիվ 9/27 եւ 9/28 ընտրատեղամասերում խոչընդոտել են լրագրողներ Մարինե Մարտիրոսյանի եւ Հռիփսիմե Ջեբեջյանի աշխատանքին: Բայց թվարկված դեպքերից եւ ոչ մեկով գործը հետաքննությունից այն կողմ չանցավ՝ հանցադեպի բացակայության հիմքով:

Ոստիկանությունը հանցակազմ չգտավ նաեւ «Հրապարակ» եւ «Ժամանակ» օրաթերթերի լրագրողներ Գայանե Սարիբեկյանի ու Մարինե Խառատյանի հետ կատարված [փաստով](http://fhasutnol.am): Նախագահի ընտրության օրը Երևանի Մետաքս թաղամասում՝ ՀՀԿ-ի շտաբի մոտ, վերջիններս նկատել էին շուրջ 10-15 տղամարդու: Երբ լրագրողները մոտեցել էին, որ ճշտեն, թե ինչ է կատարվում ներսում, հավաքվածները վիրավորել ու հայիոյել էին նրանց, փորձել խլել լուսանկարչական ապարատն ու ձայնագրիչները:

Հատուկ քննչական ծառայությունում առերեսման ժամանակ պարզվել էր, որ լրագրողների աշխատանքին ակտիվորեն խոչընդոտողը եղել էր կապի եւ տրանսպորտի նախարար Գագիկ Բեգլարյանի կրտսեր եղբայրը՝ Հակոբ Բեգլարյանը, ով զբաղվում է շինանյութի բիզնեսով: Բայց մարտի 15-ին ՀՔԾ-ն գործի վարույթը կարճեց:

Իրավիճակը չփոխվեց նաև Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ: ՀՀԿ-ի ցուցակը գլխավորող Տարոն Մարգարյանի նախընտրական քարոզարշավի շրջանակներում ապրիլի 23-ին ilur.am կայքի լրագրող Հակոբ Կարապետյանը [ենթարկվեց բռնության](#): Քաշքշելուց ու հարվածելուց բացի՝ վերջինիս մասնագիտական գործունեությանը խոչընդոտել էին նաև տեսախցիկը խլելով եւ տեսագրված ֆայլերը ջնջելով:

Ծառայողական քննության արդյունքներով ուստիկանապետ Վլադիմիր Գասպարյանի որոշմամբ նկատողություն հայտարարվեց դեպքի վայրում գտնվող, բայց կատարվածին չմիջամտած ուստիկանին, վերջինիս անմիջական դեկավարին բաժին հասավ խիստ նկատողություն, իսկ ուստիկանության Նոր Նորքի բաժնի պետի ծառայության գծով տեղակալը զբաղեցրած պաշտոնից ազատվեց: Թվում էր, թե Երևանի ավագանու ՀՀԿ-ական անդամ Աշոտ Պապայանը պատժից չի խուսափի: Հենց նա էր իրադարձության «հերոսը»՝ լրագրողին հարվածողը: Ուստիկանությունը մոտ 2 ամսվա ընթացքում պարզեց, որ Պապայանի արարքում առկա են հանցագործության հատկանիշներ: Հունիսի 20-ին վերջինս հրապարակավ ցավ հայտնեց կատարվածի առթիվ եւ հայցեց ներողամտություն: Չորս օրից իրավապահները գործը կարճեցին՝ տուժողի հետ հաշտվելու հիմքով:

«Առանց հանցակազմի» լրագրողների գործունեությանը խոչընդոտելու դրվագներով հարուստ էր նաև մայիսի 5-ը ավագանու ընտրությունների օրը: Ուստիկանությունն այդ օրը հաղորդում էր ստացել, որ Արաբկիրի 4/02 ընտրատեղամասում միկրոավտոբուսներով բնակիչներին բերում են քվեարկության, հանձնաժողովի ՀՀԿ-ական նախագահ Սամվել Գլարյանը մերժել էր մեկնաբանություն

տալ լրատվամիջոցներին, բղավել էր լրագրողների վրա, իսկ «Բարև Երևան» դաշինքի վստահված անձ Լալա Արզումանյանը հայտնել էր, որ հանձնաժողովի նախագահը խոչընդոտում է լրագրողների աշխատանքին: Հաղթանակ թաղամասում գտնվող 7/14 ընտրատեղամասում հանձնաժողովի նախագահ Սամվել Զախարյանը հրելով ընտրատեղամասից դուրս էր հանել «Հետքի» լրագրողին, քանի որ վերջինս իր մոտ չէր ունեցել լրագրողի ինքնությունը հաստատող փաստաթուղթ: Թիվ 7/05 ընտրատեղամասում «Կենտրոն» ՀՀ-ի լրագրողին թույլ չէին տվել մտնել տեղամաս՝ պահանջելով ԿՀՀ-ի կողմից տրամադրված փաստաթուղթ: Թիվ 8/08 տեղամասում ՀՀԿ-ի թեկնածու Գևորգ Մանուկյանը վստահված անձի վկայականով խոչընդոտել էր լրագրողների և դիտորդների աշխատանքին: Արդեն երեկոյան՝ քվեարկության ավարտից հետո, թիվ 07/34 ընտրատեղամասում «168 ժամ» թերթի լրագրողին արգելել էին մտնել ընտրատարածք և լուսաբանել ձայների հաշվարկման գործընթացը: Իսկ թիվ 6/23 ընտրատեղամասում «Առավոտ» թերթի լրագրողին չէին թույլատրել կատարել նկարահանումներ:

Ընտրական գործընթացներից դուրս

Թվարկվածները գրանցված դեպքերի մի մասն են միայն, իսկ ընթացիկ տարին աչքի ընկավ նաև ընտրական գործընթացներից դուրս լրագրողների նկատմամբ կատարված ոստնձգություններով: Որոշ դեպքերում ոստիկանությունն առերեւոյթ հետեւողականություն էր դրսեւորում, բայց հիմնականում կարճ ժամանակ անց պատրանքները փշրվում էին:

Վերապահումներով բացառությունների շարքին կարելի է դասել ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանի հետ կատարվածը: Այս տարվա հունվարի 30-ին ոստիկանության ՃՈ տուգանային հրապարակում «Մերսեդես բենց ՋԻ 55» ավտոմեքենայի վարորդ Ռուստամ Սահակյանը և գործով չպարզված նրա ընկերը խոչընդոտել էին Շամշյանի մասնագիտական և օրինական գործունեությանը՝ հարձակվելով նրա վրա եւ վերջինիս տալով սեռական բնույթի հայհոյանքներ:

Ոստիկանությունը «Խուլիգանություն կատարելու և առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիք տալու» մեղադրանքով Ռուստամ Սահակյանի գործն ուղարկել էր դատարան (դատավարությունը դեռեւս չի ավարտվել), իսկ անջատված քրեական գործի վարույթն անհայտ անձի ինքնությունը պարզված չլինելու հիմքով կասեցվել էր:

Սեպտեմբերի 13-ին Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը մեկ տարի ժամկետով ազատազրկման եւ 300 000 դրամ տուգանքի էր դատապարտել ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանի մասնագիտական գործունեությանը խոչընդոտած ՌԴ քաղաքացի Ռուստամ Սահակյանին: Նա մեղավոր էր ճանաչվեց ՀՀ քրեական օրենսգրքի ոչ միայն 164-րդ հոդվածի 1-ին մասով, այլեւ 258-րդ հոդվածի 3-րդ մասի առաջին կետով (մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից կատարված խուլիգանություն): Սակայն ՀՀ անկախության հռչակման 22-րդ տարեդարձի առթիվ «Համաներում հայտարարելու մասին» ԱԺ որոշման կիրառմամբ ազատվել էր պատժի կրումից եւ տուգանքի վճարումից:

Լրագրողին խոչընդոտելու համար պատասխանատվության ենթարկելու եւս մեկ դեպք գրանցվեց այս տարի: Փետրվարի 5-ին Վարդենիսի տարածաշրջանի Խաչաղբյուր գյուղի բնակիչ Հակոբ Ղազարյանը խափանել էր «Հայկական ժամ» մարզային թերթի լրագրող Հերմինե Մանուկյանի՝ նույն գյուղի միջնակարգ դպրոցի տնօրեն Սամվել Ղազարյանից (Հակոբի հորից) հարցազրույց վերցնելը, նրան լուսանկարելը, ինչպես նաև փորձել էր լրագրողի ձեռքից խլել լուսանկարչական սարքը:

Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը լրագրողի մասնագիտական գործունեությանը խոչընդոտելու հիմքով այս գործը վարույթ էր ընդունել ապրիլի 22-ին: Իսկ սեպտեմբերի 23-ին դատարանը ՀՀ քրեական օրենսգրքի 164-րդ հոդվածի 1-ին մասով Հակոբ Ղազարյանին մեղավոր էր ճանաչել եւ դատապարտել 200,000 դրամի չափով տուգանքի: ՀՀ անկախության հռչակման 22-րդ տարեդարձի առթիվ «Համաներում հայտարարելու մասին» ԱԺ որոշման կիրառմամբ նա նույնպես ազատվել էր տուգանքի վճարումից:

Ապրիլի 27-ին Հյուսիսային պողոտայում ոստիկանության աշխատակից Վարդան Ղուկասյանը [հրել եւ վիրավորել էր](#) «Հետքի» լրագրող Անի Հովհաննիսյանին: Հաջորդ օրը ոստիկանապետը խորհրդակցություն էր հրավիրել, եւ քննարկման արդյունքում որոշվել էր ոստիկանության ներքին անվտանգության վարչության օպերիվիազոր Վարդան Ղուկասյանին հեռացել զբաղեցրած պաշտոնից՝ տեղափոխելով կադրերի ռեզերվ: Ծառայողական քննության արդյունքներով էլ վերջինիս հայտարարվել էր խիստ նկատողություն: Սակայն կարճ ժամանակ անց Վարդան

Ղուկասյանը նշանակվեց ոստիկանության Շենգավիթի բաժնի Չարբախի բաժանմունքի պետի տեղակալ:

Մայիսի 8-ին «Հետքի» լրագրող Անի Հովհաննիսյանին գանգահարել էին ՌԴ-ում գրանցված բջջային հեռախոսահամարից եւ [սպառնացել](#), որ եթե շարունակի «քիթը խոթել» այնտեղ, որտեղ պետք չէ, ոչ միայն իր, այլև ընտանիքի անդամների համար շատ վատ կլինի: Ոստիկանությունը որոշ ժամանակ միջոցներ ձեռնարկեց լրագրողի անվտանգությունն ապահովելու ուղղությամբ: Հարուցվեց քրեական գործ՝ «Սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպառնալիքը» հոդվածի հատկանիշներով: Հայաստանյան բջջային օպերատորներից մեկը տրամադրել էր սպառնալիք հնչած հեռախոսահամարից տարբեր բաժանորդներին կատարված եւ ընդունված հեռախոսազանգերի վերծանումները, որի շրջանակներում հարցաքննվել է 5 քաղաքացի եւ 4 վկա: Բայց այսքանով հանդերձ գործը տեղից չի շարժվում. դեռ ընթանում է նախաքննություն:

Մարտի 1-ին Սիսիանի «[Որոտան](#)» թերթի խմբագիր Արեւիհատ Ամիրյանը [հոդված](#) էր հրապարակել այն մասին, որ Սյունիքի մարզպետարանի գյուղատնտեսության եւ բնապահպանության վարչության պետ Սամվել Թանգյանը սպառնացել է իրեն եւ իր ընտանիքին՝ մի հրապարակման կապակցությամբ:

«Արեւի կ, քեզ վերացնելու եմ, ընտանիքդ էլ ոչնչացնելու եմ», - ասել էր վարչության պետը: Փաստի առթիվ ոստիկանության Սյունիքի մարզի քննչական բաժնում նյութերի նախապատրաստմամբ պարզվել է, որ Ս. Թանգյանի արարքում բացակայում է հանցակազմը, ուստի քրեական գործի հարուցումը մերժվել էր:

Որոշ գործերով էլ լրագրողների դեմ կատարված ոտնձգություններով զբաղվել է պաշտպանության նախարարության քննչական ծառայությունը կամ ռազմական ոստիկանությունը: Մակայն նմանատիպ գործերով որդեգրված գործելաճճը չի փոխվել:

Մայիսի 18-ին գորամասերից մեկում զոհված զինծառայողի հարազատները, ի նշան բողոքի, փորձում էին մայրաքաղաք տեղափոխել զինվորի դին: Սեւան-Երեւան ավտոմայրուղու Ճանապարհային ոստիկանության անշարժ պահակետի մոտակայքում ուժային կառույցների ներկայացուցիչները նախ կանգնեցրել էին լրագրողներին տեղափոխող մեքենաները՝ թույլ չտալով մոտենալ այն հատվածին, որտեղ փակվել էր հանգուցյալի հարազատների եւ համագյուղացիների ճանապարհը, այնուհետեւ հարձակվել են լրագրողների վրա եւ բռնություն գործադրելով՝ իլել տեսաձայնագրող սարքերը՝ պատճառաբանելով, թե նկարահանումներն արգելելու հրաման ունեն «վերելից»:

Ըստ տուժած ՋԼՄ-ների ներկայացուցիչների [հայտարարությունների](#)՝ համազգեստավոր եւ քաղաքացիական հագուստով անձինք բռնի ուժով եւ հայիոյելով իլել եւ կոտրել էին «Կենտրոն» հեռուստաընկերության նկարահանող խմբի տեսասարքը, որն ավելի ուշ վերադարձրել էին՝ տեսանյութերը ջնջած: Ռազմական ոստիկանության աշխատակիցները բռնությամբ իլել էին նաեւ Lragir.am կայքի թղթակից Սիրանույշ Պապյանի տեսասարքը եւ ջնջել մինչ այդ պահը կատարված տեսագրությունները: Իսկ [«Երկիր մեդիա»](#) հեռուստաընկերության նկարահանող խմբից վերցրել էին տեսանյութերի կրիչը, որն ավելի ուշ վերադարձրել էին ոստիկանապետի միջամտությամբ:

Փաստի առթիվ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Սևանի բաժնում նախապատրաստված նյութերը ենթակայության կարգով մայիսի 29-ին փոխանցվել էին Գեղարքունիքի մարզի դատախազություն՝ ՊՆ քննչական ծառայություն ուղարկելու միջնորդությամբ: Իսկ այստեղ քրեական գործի վարույթը կասեցվեց, քանի որ «հայտնի չէ այն անձը, որը գործով պետք է ներգրավվի որպես մեղադրյալ»:

Միաժամանակ նույն միջադեպի առնչությամբ մամուլի հրապարակումների կապակցությամբ զինդատախազի ցուցումով ՊՆ քննչական ծառայությունում նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվեց՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

Մայիսի 30-ին Henaran.am կայքի թղթակից Լուսինե Ղազարյանը huytutaputeg, որ բռնության է ենթարկվել հենց իր տան բակում ՊՆ մայոր Արկադի Մկրտչյանի կողմից: Ըստ լրագրողի՝ ՊՆ մայորն անձնական վիրավորանքներ է հասցրել իրեն, փորձել է հարվածել, թեեւ հարեւանների միջամտությամբ չի կարողացել, քաշքշել է, ապա՝ հարձակվել որդու վրա ու «դավայ էղի ստուց» ասելով՝ երեխային հրել աստիճաններից: Հաջորդ օրը ոստիկանության Նաիրիի բաժնի պետը, լրագրողի պատմելով, կատարվածի մասին իր գրած դիմումը վերադարձրել է՝ «բարեկամաբար» խորհուրդ տալով հարեւանի հետ հարցերը լուծել առանց ոստիկանության միջամտության: Ի վերջո, Լ. Ղազարյանի դիմումի հիման վրա նախապատրաստված նյութերն ուղարկվել են ՊՆ ռազմական ոստիկանության Կոտայքի բաժնի: «Աբովյանի ռազմական ոստիկանության կողմից հարուցվեց քրեական գործ, բայց մեկ շաբաթ տևած իբր քննության արդյունքում

որոշեցին գործը կարճել՝ պատճառաբանելով, որ կոնկրետ վնասվածք չի արձանագրվել, և վիրավորական արտահայտություններ անելը քրեորեն պատժելի չէ»,-

«Հետքին» ասում է Լուսինե Ղազարյանը: Նրա կարծիքով՝ իրավապահները հաշվի չեն առել դիտավորությունը, բացի դրանից՝ չեն գրուցել մարդկանց հետ, ովքեր կարող էին օբյեկտիվ վկայություն տալ տեղի ունեցածի հետ կապված:

Maxinfo.am կայքի հիմնադիր Բաբկեն Հարությունյանը հունիսի 19-ին hայտաքարություն տարածեց, ըստ որի՝ դրանից 2 օր առաջ մեկնել էր Արարատի մարզի Կանաչուտ գյուղ՝ լուսանկարելու ՀՀ նախագահի խորհրդական, նախկին ոստիկանապետ Ալիկ Սարգսյանի անվան փողոցում գտնվող Սարգսյանների ընտանիքին պատկանող շքեղ առանձնատունը: Հարությունյանն իր գործն արել էր՝ մուտք չգործելով սեփականություն համարվող տարածք: Սակայն վերադարձի ճանապարհին Ալիկ Սարգսյանի եղբայրը՝ Անդրանիկ Սարգսյանը, առանձնատունը լուսանկարելու հետ կապված հարցուփորձից հետո հանել էր լրագրողի մեքենայի բանալին, այնուհետեւ սկսել էր Հարությունյանին հարվածել: Վերջինս ստիպված առանց ավտոմեքենայի հեռացել էր: Մոտ 1 ժամ անց ոստիկանությունից զանգահարել էին Maxinfo.am-ի հիմնադրին եւ տեղեկացրել, որ ավտոմեքենան իրենց մոտ է: Նշանակվել էր դատաբժշկական փորձաքննություն, և Բ. Հարությունյանի բողոքի հիման վրա նախապատրաստված նյութերը ուղարկվել էին Արարատի մարզային քննչական բաժին՝ նախաքննություն կատարելու: Սակայն քրեական գործի հարուցումը մերժվել էր. իրավապահները պարզել էին, որ «բացակայում է հանցագործության դեպքը»:

Սեպտեմբերի 2-ին Փակ շուկայի դիմաց պատասխան բողոքի ակցիա իրականացնող Սամվել Ալեքսանյանին

աջակցող կանանցից մեկը [վիրավորել եւ սպառնացել էր «Ազատության»](#) լրագրող Նանե Մահակյանին, ով այդ ամենը նկարահանել է: Լրագրողը կատարվածի մասին տեղում հայտնել էր Երեւանի փոխտստիկանապետ Վալերի Օսիպյանին, ցույց տվել իր տեսանկարահանած կադրերը, իսկ վերջինս մոտեցել էր տվյալ կնոջը եւ ասել. «Քաղաքացին նշում է, որ Դուք սպառնացել եք նրան: Խնդրում եմ մի հնչեցրեք սպառնալիքներ»:

Ոստիկանությունից «Հետքին» պարզաբանեցին, որ միջադեպի հետ կապված որեւէ դիմում-բողոք չեն ստացել: Իսկ արդյոք հրապարակված տեսանյութը բավարար չէ նյութեր նախապատրաստելու համար: Հարցին ի պատասխան՝ ոստիկանության լրատվության վարչության ասելիքը նույնն էր. «Ոչ ոք չի դիմել, դիմում-բողոք չենք ստացել»: Նանե Մահակյանը կատարվածը գնահատում է նաեւ իր մասնագիտական գործունեության խոչընդոտում. «Որովհետեւ ես այդ կնոջ (Կարինե Սարգսյան) հետ հարցազրույց չէի անում, գրուցում էի կողքիս կնոջ հետ, իսկ նա սկսեց ինձ վիրավորել եւ սպառնալ»: Ամեն դեպքում, «Ազատության» թղթակիցը բողոք չի ներկայացրել ոստիկանություն՝ «Ժամանակն ու նյարդերը խնայելու համար»:

Երկու օր անց՝ սեպտեմբերի 4-ին, լրատվամիջոցները տեղեկացրին, որ ՀՀ նախագահի նստավայրի մոտ ակտիվիստներին և լրագրողներին քաջքշել ու նրանց նկատմամբ բռնություն են կիրառել ոստիկանները: Այդ օրը նախագահականի դիմացի մայթին մի խումբ ակտիվիստներ բողոքի ակցիա էին իրականացնում Հայաստանի՝ Մաքսային միությանն անդամակցելու դեմ: Ակցիայի մասնակիցներից մի քանիսը մոտեցել էին նախագահական նստավայրի

դարպասներին և հանգիստ կանգնել, սակայն ոստիկանները սկսել էին հրել նրանց դեպի փողոց:

Ակտիվիստներին միացել էին դիմացի մայթին կանգնած իրենց ընկերները և որոշել նստել հենց փողոցում: Ի պատասխան՝ ոստիկաններն ակտիվիստներից մի քանիսին բերման էին ենթարկել: «Ոստիկանության ներկայացուցիչները խոչընդոտել են նաև լրագրողների աշխատանքին՝ կոպտորեն հրելով ու քաշքշելով նրանց, թույլ չտալով, որպեսզի լրագրողները նկարահանեն բերման ենթարկվողներին: Մի քանի լրագրողների, այդ թվում՝ Epress.am-ի թղթակցին, ոստիկանները հրել են գետնին նստած ակտիվիստների վրա: Ոստիկաններն օղակի մեջ էին վերցրել լրագրողներին և թույլ չէին տալիս դուրս գալ», - գրել էր Epress.am-ը: Սակայն միջադեպի կապակցությամբ ոստիկանության Երևան քաղաքի քննչական վարչությունում և նրան ենթակա քննչական ստորաբաժանումներում քրեական գործ չի հարուցվել, նույնիսկ նյութեր չեն նախապատրաստվել:

Մառա Պետրոսյան

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 1087.1 ՀՈՂՎԱԾԸ ԼՐԱՑՆԵԼՈՒ, ՀՍՏԱԿԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆԵԼՈՒ ԿԱՐԻՔ ԿԱ



Վիրավորանքի եւ գրպարտության հայցերով ներկայացվող գումարային պահանջները հավասարակշռելուց հետո լրատվամիջոցների ու լրագրողների համար նոր մարտահրավեր են գույքի ու դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին դատարանների որոշումները: 2013թ. Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը արգելանքի որոշումներ կայացրեց երեք լրատվամիջոցների նկատմամբ. «X գրուպ» ընկերության նախագահ Խաչիկ Խաչատրյանի ներկայացուցչի միջնորդության հիման վրա արգելանք դրվեց «Ժողովուրդ»

օրաթերթի խմբագրության եւ թերթի լրագրող Սոնա Գրիգորյանի գույքի վրա, ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի եւ նրա որդու ներկայացուցչի միջնորդության հիման վրա՝ «Ժամանակ» օրաթերթի ու նրա հիմնադիր «Սկիզբ մեղիա կենտրոն»-ի եւ «Առաջին լրատվականի ու նրա հիմնադրի դրամական հաշիվների վրա:

Լրատվամիջոցների գույքն ու դրամական միջոցներն արգելանքի վերցնելը նորույթ չէր. վերջին տարիներին «Հրապարակ» օրաթերթի դրամական հաշիվների վրա դատարանները երկու անգամ արգելանք են դրել, այնուհետեւ այլ հայցերով մի քանի անգամ արգելանքի էր վերցվել խմբագրության գույքը: Լրագրողական համայնքի կոշտ հակադարձման արդյունքում հիշյալ լրատվամիջոցի դրամական միջոցների վրա դրված արգելանքը 10 օր հետո հանվեց: Լրատվամիջոցների գույքի ու ֆինանսական միջոցների վրա արգելանք դնելու հանգամանքը Եվրոպական դատարանի մոտեցումներով գնահատվեց լրատվամիջոցների ազատության սահմանափակում:
«Դատարանի կողմից հայցի ապահովման այնպիսի միջոցի կիրառումը, որը ներգործում է լրատվամիջոցի կամ լրագրողի տեղեկություններ փնտրելու ու տարածելու հնարավորության վրա, համարվում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի հիմքով տեղեկություններ եւ գաղափարներ ստանալու ու տարածելու ազատության իրավունքի միջամտություն, եւ այդ իմաստով տվյալ լրատվամիջոցը կամ լրագրողը կարող է իրեն համարել այդ իրավունքի միջամտության զոհ»,- արգելանքի որոշումների մասին իր կարծիքը հայտնեց միջազգային իրավունքի մասնագետ Արա Ղազարյանը:

Թվում էր, թե դրամական միջոցների վրա դրվող արգելանքի խնդիրը լուծվեց, եւ դատարաններն այսուհետ ձեռնպահ կմնան նման ծայրահեղ միջոցներ կիրառելուց, սակայն այս տարի, երբ ՀՀ երկրորդ նախագահն ու նրա որդին կրկին հայցադիմում ներկայացրին «Ժամանակ» օրաթերթի եւ www.1in.am-ի դեմ, Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը (նախագահող դատավոր Ա. Սուքոյան) արգելանք կիրառեց լրատվամիջոցների ու նրանց հիմնադիր եւ հրատարակիչ «Սկիզբ մեդիա կենտրոն» ՍՊԸ-ի եւ «Առաջին լրատվական» ՍՊԸ-ի դրամական հաշիվների վրա: Ճիշտ է, միջնորդությունը մասնակի է բավարարվել (հերքումից բացի, Քոչարյանները հիշյալ լրատվամիջոցներից [պահանջում են](#) նաեւ հատուցել 5 մլն դրամ, որից 2-ական մլն դրամ՝ գրապարտության համար, 1 մլն դրամ՝ փաստաբանական ծառայության վճար), այնուամենայնիվ, դրամական հաշիվներն արգելանքի վերցնելը սահմանափակում է նյութական խիստ դժվարություններ ունեցող լրատվամիջոցների գործունեությունը: Միաժամանակ, դրանով ընդգծվում է, որ որոշ արտոնյալների դեպքում, ինչպիսին նախկին նախագահն է, այն կիրառվելու է (Ռոբերտ եւ Սեդրակ Քոչարյաններն **ընդդեմ «Սկիզբ մեդիա կենտրոն» ՍՊԸ-ի եւ «Առաջին լրատվական» ՍՊԸ-ի՝ պատիվը եւ արժանապատվությունն արատավորող տեղեկությունների հերքման եւ վնասի հատուցման պահանջների մասին**): Սա, իրավամբ, այն դեպքն է, երբ լրատվամիջոցի գույքի վրա արգելանք դնելը կարող է զսպող ազդեցություն ունենալ տեղեկատվության ազատության հոսքի վրա:

Իրավաբան Արա Ղազարյանն իր մեկնաբանություններում տազնապահարույց չի համարում գույքի վրա դրվող

արգելանքի որոշումները՝ կարծիք հայտնելով, թե դրանում լրատվամիջոցի գործունեությանը սպառնացող վտանգ չի տեսնում, ինչպես պնդում են լրատվամիջոցները: «Հետք»-ի լրագրողի հարցին ի պատասխան մեկնաբանելով «Ժողովուրդ» օրաթերթի եւ թերթի լրագրող Սոնա Գրիգորյանի գույքի վրա դատարանի կողմից արգելանքի որոշում դնելու փաստը՝ Արա Ղազարյանը հայտնել է. **«Եթե լրատվամիջոցի մասին է խոսքը, հայցվորները պետք է հասկանան, որ պետք է խիստ հիմնավոր պատճառ լինի նման միջնորդություն ներկայացնելու: Ես չտեսա նման անհրաժեշտություն»:**

Այնուհետեւ անդրադառնալով միջնորդության մեջ նշված երեք պահանջներին՝ ֆինանսական միջոցների վրա արգելանք դնել, գույքային միջոցների վրա արգելանք դնել եւ արգելել, որ խնդրո առարկայի վերաբերյալ մինչեւ դատաքննության ավարտը նյութ հրապարակվի, իրավաբանը նշում է, որ այս երեքից դատավոր Ռ. Ափինյանն ընտրել է այն պահանջը, որը նվազ միջամտության բնույթ ունի թերթի գործունեությանը: «Այսինքն՝ նա հավատարիմ է մնացել իր սկզբունքներին այն իմաստով, որ համաչափ մոտեցում է ցուցաբերել, որպեսզի ե՛ւ հայցվորի միջնորդությունը բավարարի, ե՛ւ լրատվամիջոցին չզրկի գործելու հնարավորությունից: «Ժողովուրդ»-ի գույքի վրա 3 մլն դրամի չափով արգելանք է դրել, որպեսզի նա չվաճառի, չօտարի գույքը, այլ ոչ թե չօգտագործի»,- [հայտնել է](#) իրավաբանը: Այնուամենայնիվ, լրատվամիջոցն իր անհանգստությունը հանրայնացնելուց բացի՝ դատարանում լրագրող Սոնա Գրիգորյանի գույքի վրա դրված արգելանքը հանելու միջնորդություն ներկայացրեց, որը դատարանը [բավարարեց](#):

Ոչ հրապարակային վիրավորանքից նույնպես պաշտպանվել է պետք

Ոչ հրապարակային վիրավորանքից պաշտպանության իրավական կանոնակարգման խնդիրն օրակարգային հարց դարձավ 2011-ին, երբ դատարանը քննում էր «Հետք» էլեկտրոնային թերթի լրագրող Գրիշա Բալասանյանի հայցն ընդդեմ Ազգային ժողովի պատգամավոր Ռուբեն Հայրապետյանի: Լրագրողը գանգահարել էր պատգամավորին, եւ նա լրագրողի հարցին ի պատասխան՝ սեռական բնույթի հայեոյանք էր տվել: Լրագրողը դիմեց իրավական պաշտպանության եւ դատարանում պարտվեց:

Դատարանը, գնահատելով դատաքննությամբ հետազոտված ապացույցները, գտավ, որ հայցվոր «Հետք» թերթի լրագրող Գրիշա Բալասանյանի ներկայացուցիչ Վահե Գրիգորյանի հայցն ընդդեմ ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Ռուբեն Հայրապետյանի՝ հայցվորի պատվին ու արժանապատվությանը պատճառված վնասի փոխհատուցման պահանջի մասին, անհիմն է եւ ենթակա է մերժման հետեւյալ պատճառաբանությամբ. ՀՀ Սահմանադրության 42 հոդվածի համաձայն՝ ոչ չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով: Այսինքն, եթե օրենսդրությամբ ոչ հրապարակային արտահայտության համար պատասխանատվություն նախատեսված չէ, ապա դա չի կարող որպես վիրավորանք որակվել, իսկ դատարանն էլ չի կարող օրենքով չնախատեսված պարտականություններ սահմանել պատասխանողի, տվյալ դեպքում՝ Ռուբեն Հայրապետյանի նկատմամբ: Իսկ հայցվորի կողմից ներկայացված ապացույցներով որեւէ կերպ չի հիմնավորվում վիրավորանքի հրապարակային

լինելը, քանի որ դա եղել է ոչ թե հրապարակային, այլ անձնական հեռախոսային խոսակցության ընթացքում: (Մեջբերումը՝ «Գրիշա Բալասանյանն ընդդեմ Ռուբեն Հայրապետյանի» գործով ընդհանուր իրավասության դատարանի կայացրած վճռից):

Ոչ հրապարակային վիրավորանքի համար պատասխանատվության բացակայության հարցը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանը (ՄԴ) քննեց 2011թ.: ՄԴ-ն իր որոշման մեջ արձանագրեց, որ այս իրավակարգավորման բացը հաղթահարելու համար ՀՀ Ազգային ժողովն առանձին քննարկման առարկա պետք է դարձնի ոչ հրապարակային վիրավորանքից պաշտպանության իրավական կանոնակարգման խնդիրը: Անցնող երկու տարիների ընթացքում այս հարցն օրենսդրական կարգավորում չստացավ, իսկ այդ ընթացքում արձանագրվեցին լրագրողին ոչ հրապարակային վիրավորանք հասցնելու նոր դեպքեր:

«Ժողովուրդ» օրաթերթի լրագրող Սոնա

Գրիգորյանը [գանգահարել էր](#) գործարար Խաչիկ

Խաչատրյանին՝ հրապարակվելիք նյութի վերաբերյալ

պարզաբանում ստանալու համար, սակայն վերջինս

պատասխանել էր. «... Իհարկե, տենց բան չի եղել, վաղն էլ էր

ես գրելու: Դե, գրի, ազիզ ջան, գրի, ցավդ տանեմ, ես,

ընդհակառակը, ուրախ եմ, որ իմ մասին գրում են, թե չէ

մարդու տեղ չեք դնում, ո՞նց կլինի ըստենց: Ազիզ ջան, դու

լրագրող չես, դու պրաստիտուտկա ես, էդ էլ կարաս գրես»:

Երեւան քաղաքի Աջափնյակ եւ Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության

դատարանը [վերժեց](#) «Ժողովուրդ» օրաթերթի եւ լրագրող Սոնա Գրիգորյանի պատիվն ու արժանապատվությունն արատավորելու համար Խաչիկ Խաչատրյանի դեմ

ներկայացված հայցը, որով գործարարից պահանջում էին ներողություն խնդրել, վիրավորանքը փոխհատուցել 1 մլն դրամով եւ վճարել դատական ծախսերը: Դատարանը, հղում կատարելով «Գրիշա Բալասանյանի հայցն ընդդեմ Ազգային ժողովի պատգամավոր Ռուբեն Հայրապետյանի» գործով կայացված վճռին, արձանագրեց, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի կարգավորումից դուրս են այն դեպքերը, երբ հայտարարությունը կատարվել է ոչ հրապարակային, անձնական հեռախոսային խոսակցության ընթացքում: Վերաքննիչ դատարանը նույնպես [վերքեց](#) լրագրողի բողոքը՝ պատճառաբանելով, որ Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 2-րդ մասով օրենսդիրը հստակ է սահմանել վիրավորանքի հասկացությունը, այն է՝ վիրավորանքը խոսքի, պատկերի, ձայնի, նշանի կամ այլ միջոցով պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորելու նպատակով կատարված **հրապարակային արտահայտությունն է**: Ըստ դատարանի՝ հոդվածի բովանդակության վերլուծությունից պարզ է դառնում, որ ի թիվս այլ պայմանների բավարարման, որպեսզի խոսքի միջոցով արված արտահայտությունը համարվի վիրավորանք, այն պետք է արվի հրապարակայնորեն, այսինքն՝ առնվազն մեկ երրորդ անձի ներկայությամբ:

Փաստաբան Արա Զոհրաբյանը, [անդրադառնալով](#) այս հարցի իրավակարգավորմանը, շեշտում է, որ դատարաններն անտեսում են լրագրողների գործունեության բնույթը, հանրային կարելորությունը եւ կայացրած վճիռները տեղավորում են միայն օրենքի հոդվածի նեղ մեկնաբանության սահմաններում: Նրա դիտարկմամբ, եթե Վճռաբեկ դատարանը որեւէ գործով բողոքը վարույթ ընդունի եւ սահմանի, որ **ոչ հրապարակային**

Վիրավորանքի եղանակով արժանապատվությունն էլ է պաշտպանության ենթակա, կկանխի Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ-ի պարտության դեպքերի քանակը: «Դատարանները պարտավոր են պաշտպանել անձի խախտված արժանապատվությունը, եւ այսօր դատարանն օբյեկտիվորեն ունի այդ իրավական հնարավորությունը, դատարանը կարող է նույնիսկ օրենքի անալոգիա կիրառել: Քաղաքացուն հետաքրքիր չէ՝ օրենքով նախատեսված է կոնկրետ պաշտպանության եղանակ, թե՞ ոչ, քանի որ կա օրենսդրորեն, այն էլ՝ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունք, հետեւաբար այն ենթակա է պաշտպանության ցանկացած խախտումից», - ասում է Ա. Զոհրաբյանը:

Սակայն Վճռաբեկ դատարանը, ինչպես վիրավորանքի ու գրպարտության հայցերի հետ կապված իրավակարգավորում պահանջող նախորդ խնդիրների դեպքում, այս անգամ էլ չստանձնեց օրենքով այդ ատյանի համար սահմանված իրավակարգավորողի դերը: 2013թ. սեպտեմբերի 6-ին Վճռաբեկ դատարանը վերադարձրեց «Ժողովուրդ» օրաթերթի լրագրող Սոնա Գրիգորյանի ներկայացրած բողոքը:

Արա Զոհրաբյանը «Հետքի» հետ զրույցում հայտնել էր, որ ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն՝ «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները եւ ազատությունները բարձրագույն արժեքներ են», իսկ 14-րդ հոդվածի համաձայն՝ «Մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք, հարգվում եւ պաշտպանվում է պետության կողմից»: «Այս նորմերից հետեւում է, որ պետությունը պարտավոր է պաշտպանել մարդու արժանապատվությունը: Այս դեպքում պետությունն ասելով՝

սահմանադիրը նկատի ունի ինչպես դատական իշխանությանը, այնպես էլ՝ օրենսդիր»,- [հայտնել է](#) փաստաբանը:

Մարդու իրավունքների պաշտպան Կարեն Անդրեասյանն այս տարվա ապրիլ ամսին տարածած հաղորդագրությամբ լրագրողներին ոչ հրապարակային ձևով արտահայտված վիրավորանքներից

պաշտպանելու [պատրաստակամություն](#) հայտնեց:

Պաշտպանը դիմեց Դատարանների նախագահների խորհրդին (ԴՆԽ)՝ լրագրողների հետ հարցազրույցի ընթացքում արված արտահայտությունների բնույթի հստակեցման նպատակով խորհրդատվական բնույթի պաշտոնական պարզաբանում ստանալու խնդրանքով: Դատական իշխանությունը, սակայն, դարձյալ խուսափեց այս չափազանց կարևոր հարցի վերաբերյալ դիրքորոշում արտահայտելուց: ԴՆԽ-ից պատասխանել են, որ պաշտոնական պարզաբանման անհրաժեշտություն չեն տեսնում, քանի որ դրա հետ կապված կա օրենսդրական հստակ կարգավորում եւ ձեւավորված իրավակիրառ պրակտիկա:

Դատարանը հստակեցրեց «գնահատական-դատողության» իրավական եզրույթը

Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի հիմքով դատարանում քննվող գործերում ամենավիճահարույց հարցերից մեկը վիրավորանք որակվող արտահայտություններն են: Մամուլի տեսաբանների դիտարկմամբ՝ գնահատական-դատողությունները դատարանները հաճախ նույնացնում են վիրավորանքի հետ կամ հակառակը, որովհետեւ Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածը, ըստ իրավաբանների, չի տալիս

«գնահատական-դատողություն» հասկացության ինքնուրույն սահմանումը: Մամուլի տեսաբանները նկատել էին, որ դատարաններն իրենց որոշումներում անդրադառնում են այս հասկացությանը, սակայն օրենսդրական կարգավորման բացակայության պատճառով երբեմն ստեղծվում են իրավիճակներ, երբ դատավարության կողմերը փաստի մասին հայտարարությունն ընկալում են որպես գնահատական-դատողություն, կամ, ինչպես տվյալ դեպքում, գնահատական-դատողությունն է ընկալվում որպես փաստի մասին հայտարարություն:

2013թ. քննված դատական գործերից «ՀՀ նախկին վարչապետ Արմեն Դարբինյանի հայցադիմումն ընդդեմ «Քաղաքական հետազոտությունների կենտրոն» ընկերության (որի պարբերականն է «www.n-idea.am» կայքը)՝ պատվի եւ արժանապատվության պաշտպանության եւ վնասի հատուցման պահանջի մասին» գործն առանձնացավ նրանով, որ այս գործով վերաքննիչ դատարանը տվեց «գնահատական-դատողություն» եզրույթի դատական մեկնաբանությունը:

Հայցվոր Արմեն Դարբինյանը վիրավորական է համարել հրապարակման հետեւյալ արտահայտությունները՝

1. ... Եվ ահա այսօր Արմենչիկ Դարբինյանը՝ նորահայ իրականության այդ նապոլեոնակերպ ֆենոմենը, վրդովվել է Մյուզան Սիմոնյանի հողվածից: Facebook-ի իր էջում այդ ցանքը գրել է ...»:

2. «... Ուշադրություն դարձրեք, թե ինչպես է այդ ոչնչությունը, այս խղճուկ ցանքը, որը խլում է մեր երեխաների հացը (ի դեպ, սպառնալիքի տակ են Հայաստանի բոլոր (ոչ էլիտար) երեխաները), ցան Դարբինյանին առայսօր հաջողվել է խլել իմ երեխայի, Սերոբյանի ու էլի շատերի

երեխաների հացը, բայց դա չի նշանակում, թե նա դրանով կկշտանա...»:

3. «... Թեկուզեւ այն բանի համար, որ Վազգենը կանոնավորապէս (գրեթե ամէն օր) դաստիարակչական գործողություններ էր կազմակերպում արմենչիկակերպ ուռողների հանդէպ...»:

Իսկ զրպարտություն հայցվորը որակել է հրապարակման մեջ տեղ գտած հետեւյալ նախադասությունները.

1. պետությունը նրան թույլ է տվել ապրել իրավական դաշտից դուրս, այլ բարիքներ էլ է նվիրել, որոնք նա կարողացել է «ցրել»,
2. պետությունն Արմենչիկ Դարբինյանին թույլ է տալիս անպատիժ մտնել Հայաստանի հասարակ քաղաքացիների գրպանը, նրանց նյութական վնաս հասցնել,
3. այսպէս, այս փառահեղ վարչապետն ամբողջ կյանքում սնվել է գողացած մտով եւ մսամթերքով/այսինքն անվճար/, քանի որ նրա պապան մսի կոմբինատն էր թալանում տնօրենի կարգավիճակում, իսկ մինչ այդ Արմենչիկ Դարբինյանը սնվում էր թելմանցքով,
4. ցոան Դարբինյանին առ այսօր հաջողվել է խլել իմ երեխայի, Սերոբյանի ու էլի շատերի երեխաների հացը,
5. ... Վազգենն Արմենչիկ Դարբինյանին /վարչապետ եղած ժամանակ/ իր մոտ է կանչել այդ ժամանակվա ֆինանսների նախարար Մանդոյանի հետ, հայիոյել ամենահետին խոսքերով եւ ծեծելով համարյա թե մահվան դուռը հասցրել»:

Պատասխանողը վերը նշված արտահայտությունները համարում է գնահատող դատողություններ, քանի որ իրենցից ներկայացնում են կարծիքի արտահայտություններ:

Դատաքննության ընթացքում պատասխանող «Քաղաքական հետազոտությունների կենտրոն»-ը հայցվորի կողմից վիրավորանք եւ զրպարտող որակված արտահայտությունները ներկայացրել է որպես գնահատական-դատողություններ, որոնք ենթակա չեն ապացուցման: Այդ առումով եզրահանգել է, որ իր մոտ բացակայել է վիրավորելու դիտավորությունը, եւ որ իր վրա չպետք է դրվի այդ արտահայտություններն ապացուցելու պարտականություն:

Առաջին ատյանի դատարանը հայցը բավարարել է մասնակիորեն. դատարանը որոշել է, որ վերը նշված արտահայտությունները վիրավորական ու զրպարտող են: Վերաքննիչ դատարանը հատկապես անդրադարձել է վերը նշված արտահայտությունների՝ գնահատական-դատողություն լինելու մասին պատասխանողի փաստարկներին եւ կատարել հետեւյալ եզրահանգումները. «... վիճարկվող տեղեկատվության դատողություն հանդիսանալու հանգամանքը պարզելու համար անհրաժեշտ է պարզել «դատողություն» բառի բուն իմաստը:

Տրամաբանությունում դատողությունը մտածողության այն ձեւն է, որն իրենից ներկայացնում է հասկացությունների համակցություն, որոնցից մեկը (սուբյեկտ) որոշվում եւ բացվում է մյուսի միջոցով (պրեդիկատ): Բանասիրությունում դատողություն է հանդիսանում կարծիքներ, խորհուրդներ, համոզումներ քննելու նկատմամբ, հիման վրա կատարված եզրահանգումը, եւ նթադրությունը, մեկնաբանությունը, պարզաբանումը: Այս պարագայում տրամաբանության տեսանկյունից բացակայում է պրեդիկատը, առկա է միայն սուբյեկտը

(...«պետությունն Արմենչիկ Դարբինյանին թույլ է տալիս անպատիժ մտնել Հայաստանի հասարակ քաղաքացիների գրպանը, նրանց նյութական վնաս հասցնել», «...այս փառահեղ վարչապետն ամբողջ կյանքում սնվել է գողացած մտով եւ մսամթերքով /այսինքն անվճար/, քանի որ նրա պապան մսի կոմբինատն էր թալանում տնօրենի կարգավիճակում, իսկ մինչ այդ Արմենչիկ Դարբինյանը մինչ այդ սնվում էր թելմանցքով» եւ այլն), բանասիրական տեսանկյունից բացակայում են թե՛ խորհուրդները, համոզմունքները՝ եւ թե՛ դրանց հիման վրա կատարված ենթադրությունները, մեկնաբանությունները, պարզաբանումները, եզրահանգումները: Առկա է միայն միանշանակ փաստացի տվյալների վերաբերյալ պնդում, հայտարարություն, ներկայացում:

«Հողվածներում տեղակայված տեղեկությունները հանդիսանում են, ըստ էության, լրատվամիջոցի կողմից մտքի ու խոսքի ազատության սկզբունքով առաջնորդվելու միջոցով արտահայտված ոչ թե սուբյեկտիվ կարծիքներ, այլ դրանք իրենց բնույթով հանդիսացել են իրականությանը չհամապատասխանող, ընդհանուր բազմակարծիք բնույթ կրող, իբր իրականությանը համապատասխան փաստացի տեղեկություններ, որոնք վստահորեն եւ լրագրողի ունեցած ինչ-որ տեղեկատվական աղբյուրին հիմնված կարգով պատասխանողի կողմից վիրավորանքի տեսքով ներկայացվել է հանրությանը՝ արդյունքում ոչ միայն խորագրում տեղ գտած փաստացի, իրականությանը չհամապատասխանող եւ հրապարակային տեղեկություններով արատավորելով հայցվորի պատիվն ու արժանապատվությունը (զրպարտություն), այլեւ հենց խորագրում արտահայտած վիրավորական արտահայտությամբ ի սկզբանե փորձելով հասարակության

լայն շրջանակի առջև արատավորել հայցվորի պատիվն ու արժանապատվությունը (վիրավորանք)», - հայցվորի բողոքի մերժումն այսպես է հիմնավորել վերաքննիչ դատարանը:

Տեղեկատվական վեճերի խորհուրդը, կարելուրելով վերաքննիչ դատարանի՝ «գնահատական-դատողություն» հասկացության մեկնաբանումը, նշել է նաև, որ խնդիրը մասամբ օրենսդրության թերությունն է: «Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածը չի տալիս «գնահատական-դատողություն» հասկացության ինքնուրույն սահմանումը», - ասվում է Խորհրդի եզրակացության մեջ: Խորհուրդը միաժամանակ համակարծիք չէ դատարանի եւ հայցվորի հետ եւ հայտնել է, որ վիրավորական գնահատված արտահայտությունների շարքում բազմաթիվ արտահայտություններ գնահատական-դատողություններ էին, այլ ոչ թե «փաստացի տվյալների վերաբերյալ պնդում»:

«... Վիճահարույց պարբերություններում բազմաթիվ արտահայտություններ իրենց բնույթով գնահատական-դատողություններ էին, այլ ոչ թե փաստի մասին հայտարարություններ, որոնք դատարանը չի գնահատել որպես այդպիսին: Խորհուրդը կարծում է, որ եթե խնդրո առարկա հայտարարությունն անձի սուբյեկտիվ, այլ ոչ թե փաստի հիման վրա հնչեցված գնահատականն է մեկ այլ անձի մասին, տվյալ հայտարարությունը պետք է քննվի վիրավորանք հասկացության ներքո՝ որպես գնահատական-դատողություն, այլ ոչ թե զրպարտության հասկացության ներքո՝ որպես փաստի մասին հայտարարություն», - կարծիք է հայտնում Խորհուրդը:

Դատավորները լրատվամիջոցների համար լրացուցիչ պարտավորություններ են սահմանում

Լրատվամիջոցների համար զսպաշապիկ դարձած Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածն իրենց հերթին չարաշահում են նաև դատավորները: ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր *Գեորգ Նարինյանը* «Համբարձում Մաթեոսյանն ընդդեմ Անուշ Մնացականյանի, Իվետա Չարխիֆալակյանի, Վարդան Պապոյանի եւ Լեւոն Գեորգյանի, երրորդ անձ՝ «Ազգ» օրաթերթի՝ լրատվության միջոցով տարածված տեղեկություններն իրականությանը չհամապատասխանող ճանաչելու, զրպարտության հերքման եւ պատճառված վնասի բռնագանձման պահանջների մասին» գործով 2013 թվականի հունվարի 29-ին կայացրած վճռով [պարտավորություններ է սահմանել](#) նաև «Հետք» էլեկտրոնային թերթի համար:

Գործով պատասխանողները դիմել էին նաև «Հետքի» խմբագրություն եւ խնդրել անդրադառնալ իրենց խնդրին: «Հետք» էլեկտրոնային թերթում 2012թ. հոկտեմբերի 4-ին տեղադրվել էր երկու հոդված՝ [«Կարելի է ոչխարը գրել «վօչխար».](#) [«վրայս լիստ»-ի փոխարեն «սփռայթ լիստ».](#) [բայց տնօրեն աշխատել»](#) եւ [«Շան գլուխը սառնարանում պահելով՝ հասան աշխատանքից ազատման բաղձալի դիմումին»](#), որոնց առնչությամբ մեկամսյա ժամկետում խմբագրությունը ոչ հեռախոսագանգ, ոչ հերքում պահանջող նամակ Համբարձում Մաթեոսյանից չի ստացել: Հայցվորը նաև դատարանում լրատվամիջոցին կողմ չի ներգրավել, նրա նկատմամբ պահանջ չի ներկայացրել, միայն մեկ տողով հայցադիմումում նշել է, որ պատասխանողներն իր հասցեին զրպարտանք են տարածել նաև [hetq.am](#) կայքում եւ հայցադիմումին կից դատարանին ներկայացրել է էլեկտրոնային լրատվամիջոցում տեղադրված հոդվածների

պատճենները: Դատաքննության ընթացքում կողմերը հաշտության համաձայնություն են կնքել:

Դատավոր Գեորգ

Նարինյանը, վճռով հաստատելով կողմերի միջև կնքված հաշտության համաձայնությունը, որում ասվում է. «Պարտավորեցնել պատասխանող կողմին վճռի հրապարակման օրվանից 7 օրվա ընթացքում հերքումով հանդես գալ «Ազգ» թերթում եւ «Հետք» ինտերնետային կայքում»: Այսպիսով, դատավորը հավասար պարտավորություններ է սահմանել գործում երրորդ անձ ներգրավված «Ազգ» օրաթերթի եւ «Հետք» էլեկտրոնային թերթի համար անտեսելով, որ հայցվորը նման հայցապահանջ չէր ներկայացրել, եւ «Հետքը» որեւէ կարգավիճակով գործում չէր ներգրավվել:

Վերաքննիչ դատարանը վերադարձրեց նշված դատական ակտի դեմ «Հետք»-ի բերած վերաքննիչ բողոքը հետեւյալ պատճառաբանությամբ. «Վճռի բովանդակությունից պարզ է դառնում, որ «Հետք» ինտերնետային կայքի նկատմամբ Դատարանի վճռով որեւէ պարտականություն չի սահմանվել, այլ պարտավորություն ստանձնել են Պատասխանողները»: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ բողոքը վերադարձվում է, եթե բողոքը ներկայացրել է այն անձը, ով ստորադաս դատարանի դատական ակտը բողոքարկելու իրավունք չունի»:

«Ցանկացած դեպքում դատարանը չի կարող դուրս գալ հայցապահանջի շրջանակներից եւ բավարարել նաեւ այնպիսի պահանջներ, որոնք հայցվորը չի ներկայացրել, ուստի եթե «Հետք»-ի դեմ հայցվորը հայցապահանջ չի ներկայացրել, եւ վերջինս չունի դատավարական որեւէ կարգավիճակ, ապա տվյալ պարագայում կարող ենք գործ ունենալ լիազորությունների սահմանազանցմամբ կայացված

դատական ակտի հետ»,- դատական ակտն այսպես մեկնաբանեց **փաստաբան Դավիթ Դանելյանը**:

Տեղեկատվական վեճերի խորհուրդն այս գործի վերաբերյալ իր եզրակացության մեջ նշեց. «... անհրաժեշտ էր լրատվամիջոցի համար ապահովել դատական քննության իրավունքից օգտվելու հնարավորություն՝ նրան ներգրավելով որպես դատաքննության կողմ: Քանի դեռ այս իրավունքից օգտվելու հնարավորություն չէր տրվել, դատարաններն իրավունք չունեին հաստատել հաշտության համաձայնությունը, քանի որ ՀՀ քաղաքացիական դատարանի 33-րդ հոդվածի 4-րդ մասի ներքո դատարանը չի հաստատում հաշտության համաձայնությունը, եթե այն խախտում է այլ անձանց իրավունքները եւ օրինական շահերը: Վերաքննիչ դատարանը եւ առաջին ատյանի դատարանը, փաստորեն, լրատվամիջոցին զրկել են իրավական պաշտպանության հնարավորությունից՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի, ինչպես նաեւ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի ներքո»:

Գրիշա Բալասանյան

ԱՆԲԱՐԵԽԻՂՃ ԿԱՅՔԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԻՋՈՅԸ ՊԵՏՔ Է ԼԻՆԻ ՀԱՄԱԿԱՐԳՉԻ ՄԿՆԻԿԸ



Հարեւանս՝ 75-ամյա Սուրիկ պապը, քաղաքականապես բավականին ակտիվ է: Մասնակցել է ընդդիմության բոլոր հանրահավաքներին, նույնիսկ ոտքով էջմիածնից հասել է Երևան: Նրա ասելով՝ հանրահավաքների ժամանակ է տեղեկացել երկրում կատարվող իրադարձություններին: Եվ քանի որ հիմա «հանգիստ շրջան» է, ինֆորմացիայի միակ աղբյուրը հեռուստատեսությունն է, սակայն նրան չի բավարարում հեռուստաընկերությունների մատուցած սահմանափակ լրատվությունը: Երկու օրը մեկ Սուրիկ պապը, մի քանի լրատվական կայքերի անուններ թղթի վրա գրած, գալիս էր մեր տուն, որ իր համար «ինտերնետային

մամուլի տեսություն» կարդամ: Սակայն, մոտ մեկ ամիս է՝ դադարել եմ Սուրիկ պապի «մամուլի խոսնակը» լինելուց: Պատճառն այն է, որ հերթական անգամ, երբ թղթի կտորը ձեռքին եկավ եւ պատվիրեց բացել իր նախընտրած կայքերը, դրանցից մեկի գլխավոր էջին Քիմ Քարդաշյանի կիսամերկ լուսանկարներն էին, իսկ հաջորդ կայքում հայտնաբերեց իր ասելով՝ իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ, բամբասանք:

«Ես էլ գիտեի, թե նորմալ աշխատում են, սրանք կամ սեքսի կարոտ են, կամ էլ՝ «գրդոնչի», պատերի տակ նստող կնանիքի նման բամբասանք են անում: Լրագրող լինելը սովետի ժամանակ պատիվ էր, հիմա դարձրել են մատի փաթաթան: Էն ժամանակ անհամբեր սպասում էինք, թե «պոչտայլոնը» երբ պիտի թերթ բերի, որ կարդանք: Մի 5 թերթ ու ամսագիր էի բաժանորդագրվում, որն էլ չէի բաժանորդագրվում՝ հարեւաններից էի վերցնում կարդում: Հիմա կաթից կտրված երեխեն էլ ա իրան լրագրող անվանում ու «պրյոմնիկը» (նկատի ունի ձայնագրիչը -հեղ.) ձեռքին վազում ա հարցազրույցի: Թու...», - ասաց Սուրիկ պապն ու հեռացավ:

Սուրիկ պապի բողոքն իրական պատճառներ ունի: Ճիշտ է, առցանց մամուլն իր նպաստը բերեց մեղիա միջավայրին՝ ապահովելով բազմակարծություն, ծառայելով որպես այլընտրանքային խոսքի, կարծիքի հարթակ՝ ի տարբերություն իշխանությունների հսկողության տակ գտնվող հեռուստատեսության եւ ցածր տպաքանակ ունեցող տպագիր թերթերի, որոնք, մեծ հաշվով, հասարակական կարծիքի վրա գրեթե ազդեցություն չունեն: Սակայն, այն ավելի սրեց մամուլի ինքնակարգավորման հարցը: Էթիկական մի շարք խնդիրներ, ինչպիսիք են անանուն աղբյուրների օգտագործումը, ապատեղեկատվություն կամ

չճշտված տեղեկություն հրապարակելը, ակնհայտ սուտ տարածելը եւ այլն, առավել սրությամբ դրվեցին: Նման մեթոդների կիրառումը հիմնական աշխատառճ դարձավ որոշ լրատվական կայքերի համար:

Մեդիայի այս նոր միջոցները, որոնց թիվն աճում է օրեցօր, կադրերի կարիք ունեին եւ այն համալրեցին անպատրաստ, մասնագիտական բարձր չափանիշներին անծանոթ երիտասարդներով: Դրա արդյունքում վերլուծական, հետաքննական, լուրջ ժուռնալիստիկան գրեթե վերացավ, եւ ձեւավորվեց հեշտամարս տեղեկատվության պահանջարկ: Մյուս կողմից՝ լսարանի նվաճման համար ցանցային ՁԼՄ-ների միջեւ մոլոր դաժան մրցակցությունը հանգեցրեց որակի լուրջ անկման, մասնագիտության արժեզրկման: Իբրեւ հետեւանք՝ այսօր համացանցում գերակշռող է դեղին մամուլը: Գրեթե յուրաքանչյուր երկրորդ լրատվամիջոց իր «սուրբ» պարտքն է համարում շատ թե քիչ հայտնի մարդկանց ֆեյսբուքյան գրառումները կայքում հրապարակելը ու դրանց շնորհիվ «լայք» ապահովելը: Այդ մրցավազքի արդյունքն էր, օրինակ, որ այս տարվա հուլիսի 30-ին մեկ րոպեի ընթացքում համացանցը ողողվեց կեղծ լրատվությամբ, թե մահացել է հաղորդավար Մարկ Սադաթեյանը, ով ծայրահեղ ծանր վիճակում տեղափոխվել էր հիվանդանոց: Բոպեներ անց հրապարակումը հեռացվեց լրատվական կայքերի էջերից, սակայն անբարեխղճության, չճշտված տեղեկություն հրապարակելու համար որեւէ կայք հարկ չհամարեց ներողություն խնդրել ընթերցողից:

Մասնագիտության արժեզրկմանը նպաստում են նաեւ քաղաքական շրջանակները, որոնք քարոզչական, մանիպուլյացիոն նպատակներով ձեռք են բերում կամ ստեղծում են լրատվական կայքեր՝ մատուցելով միակողմանի լրատվություն, հրահրելով քաղաքական

ինտրիգներ: Հակառակորդ կամ մրցակից քաղաքական ուժերի դեմ պայքարում ավելի հաճախ կամ հիմնականում օգտագործվում են ինտերնետային կայքերը: Դրա արդյունքում լրագրողները դառնում են գործիք, իսկ լրագրողական համայնքը պառակտվում է, մի բան, որ առաջին հերթին ձեռնտու է իշխանություններին: Այն, որ վերջերս լրատվական կայք բացելու եւ «իրեն չարախոսողներին տոպկելու» մեծ ցանկություն էր հայտնել օլիգարխ պատգամավոր Սամվել Ալեքսանյանը, հաստատում է մեր վերոնշյալ միտքը: Դժվար չէ պատկերացնել, թե քանի «տոպկող» լրագրող ցանկություն կհայտնեք աշխատել Ալեքսանյանի լրատվամիջոցում:

Ինչպե՞ս կարգավորել ինտերնետային ՁԼՄ-ների դաշտը, բարձրացնել ցանցային լրագրողների պրոֆեսիոնալիզմի մակարդակը, խթանել բարոյական նորմերով առաջնորդող ժուռնալիստիկան... Այս հարցերը մտահոգում են ոչ միայն բարեխիղճ լրագրողներին եւ խմբագիրներին, մեդիատեսաբաններին եւ փորձագետներին, այլեւ հենց լսարանին, ով հոգնել է ցածրորակ տեղեկատվությունից:

Ինչպե՞ս հաղթահարել խնդիրները

Լրատվական դաշտում խոսքի ազատությունը հետզհետե վերածվում է սանձարձակության, իսկ անպատասխանատվությունը, էթիկան, բարեխղճությունը, արժանահավատությունը քողարկվում են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածով, այն է՝ **«Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ եւ գաղափարներ ստանալու եւ**

տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության եւ անկախ սահմաններից...»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր նախադեպային վճիռներով բազմիցս ասել է, որ արտահայտվելու ազատությունը ժողովրդավարական հասարակության առանցքային հիմնասյուններից է եւ նրա առաջընթացի, ինչպես նաեւ յուրաքանչյուր անհատի ինքնադրսեւորման հիմնական պայմաններից մեկը:

Արտահայտվելու ազատության իրավունքը երաշխավորում է ոչ միայն հանրությանը տեղեկացնելու՝ մամուլի ազատությունը, այլեւ **պատշաճորեն** տեղեկացված լինելու՝ հանրության իրավունքը:

Սակայն Կոնվենցիայի 10-րդ հոդվածով լրագրողների համար ամրագրված երաշխիքը կիրառվում է պայմանով, որ նրանք գործում են բարեխղճորեն՝ տրամադրելու ճշգրիտ և արժանահավատ տեղեկություններ, պահպանելով լրագրողական էթիկայի պահանջները:

Մասնագետներն ասում են, որ այսօր լրատվական կայք բացելը շատ հեշտ է եւ շատ քիչ ծախս է ենթադրում, իհարկե, եթե խնդիրը միայն կայք ունենալն է: Մոտավոր հաշվարկներով՝ մոտ 200 դոլար է անհրաժեշտ wordpress-ի վրա կայք բացելու համար, ամսական 10 դոլար անհրաժեշտ է հոսթինգի համար, տարեկան մի 10 դոլար էլ՝ դոմեյնի համար: Ահա, «գոդոնի» համար կայքը պատրաստ է: Ինչ վերաբերում է բովանդակությանը, ապա այսօր դա էլ շատ ծախսատար չէ: Ցածր վարձատրությամբ կարելի է երկու ուսանող գտնել, ովքեր կհամաձայնվեն այսպես կոչված հայտնի մարդկանց՝ սոցիալական ցանցերում արված գրառումներով, այլ կայքերի հեղինակային հոդվածները առանց պատշաճ հղման արտատպելով՝ լցնել կայքը: Պարզ է, որ լուրջ լրատվամիջոցների համար թե՛ կայք բացելն է լուրջ

դժվարություն, թե՛ ֆինանսապես «թանկ հաճույք»՝ որակյալ աշխատակազմ պահելը:

Բլոգեր, նոր մեդիայի գծով փորձագետ Սամվել Մարտիրոսյանը «Հետքի» հետ զրույցում ասաց, որ ոլորտի կարգավորման հարցը շատ բարդ է, քանի որ ենթադրում է լուծումներ՝ լրագրողական համայնքի, կրթական հաստատությունների եւ սպառող հանրության ակտիվ մասնակցությամբ: «Հանրությունը պետք է ավելի բժախնդիր լինի, թե չէ այսօր առանց նայելու, թե ով է, ինչ է, բոլորին կարդում են: Հասարակությունը պետք է այնքան հասուն լինի, որ ապատեղեկատվություն տարածող կայքը դադարի լինել իր ընթերցվող աղբյուրների ցանկում: Լրագրողական համայնքը պետք է գնա ինքնակարգավորման ճանապարհով, ինչը արդեն ինչ-որ չափով կատարվում է: Դեղին մամուլը պետք է զատվի պատասխանատու մամուլից, բոլորը չպետք է լինեն նույն վարկանիշային մակարդակում», - ասում է Սամվել Մարտիրոսյանը:

Ըստ նրա՝ բրիտանական «Ման» դեղին լրատվականը, օրինակ, չի դասվում նույն վարկանիշային վիճակագրությունում, ինչ «Գարդիանը»:

Սամվել Մարտիրոսյանը նշում է, որ եթե ընդհանուր հասարակության բնագոյներին հետեւենք, ապա պարզ է, որ սեքս ու արյուն է միայն պետք: Բայց հարցն այն է, որ պատասխանատու մամուլը պետք է դիմի հասարակության գիտակցությանը: «Բայց, քանի որ մեզ մոտ մրցակցային դաշտը սխալ է զարգացել, եւ դեղին եւ նորմալ մամուլը նույն ռեյթինգի մեջ են հայտնվել, բնականաբար, նորմալ մամուլը մրցակից լինելու համար ստիպված դեղին է դառնում: Պետք է բաժանում լինի: Ամբողջ աշխարհում դեղին մամուլն ավելի պոպուլյար է, պարզապես այն գործում է առանձին դաշտում», - հավելեց Ս. Մարտիրոսյանը:

Մարտիրոսյանը «լայք» հավաքելու մրցավազքը նորմալ է համարում, քանի որ լսարան է ձևավորվում: Խնդիր է առաջանում, երբ մարդկանց խաբելով, զզվացնելով են «լայք» հավաքում:

Առցանց «Առավոտի» խմբագիր Աննա Իսրայելյանը համաձայն չէ այն պնդմանը, թե վերլուծական, հետաքննական, լուրջ ժուռնալիստիկան գրեթե վերացել է, եւ ձևավորվել է հեշտամարս ինֆորմացիայի պահանջարկ: Նրա խոսքերով՝ լուրջ լրագրությունն ունի իր ընթերցողը, հեշտամարսը՝ իրենը: Դրանք միմյանց հետ չեն գուգահեռվում, չեն հատվում ու միմյանց չեն խանգարում: Այլ հարց է, որ լուրջ լրագրություն մատուցելու հավակնություն ունեցող լրատվամիջոցներն էլ պետք է փոքր-ինչ վերանայեն իրենց աշխատառճը: Պետք չի սպասել, որ դու մի լավ հոդված կհրապարակես, ու գովազդատուներն անմիջապես հերթ կկանգնեն դռանդ մոտ:

Աննա Իսրայելյանն ասում է, որ «հեշտամարս» տեղեկատվություն մատուցողներից էլ փոխառելու բաներ ունենք, մասնավորապես՝ սոցիալական ցանցերին ինտեգրվելու, սեփական արտադրանքը տարածելու առումով: «Էլ չեմ խոսում այն մասին, որ հարկ է ընթերցող լսարանի պահանջմունքների ուսումնասիրություն կատարել: Գուցե պետք է դիմել շուկայագետներին, կայքի աշխատանքը կանոնակարգել այնպես, որ առավելագույնս դյուրին լինի որոնողական համակարգերի հետ աշխատանքը եւ այլն: Ինչ վերաբերում է ցանցային լրագրողների մակարդակին, չեմ կարծում, որ այս առումով իրավիճակը շատ տարբեր է նախկինից: Նյութերի վրա շատ չտքնող, իրենց իսկ գրածն անգամ երկրորդ անգամ չկարդացող լրագրողները միշտ էլ ավելի շատ են եղել, քան հոդվածների

վրա մանրակրկիտ աշխատողները, անպայման երկրորդ կարծիք ներկայացնողները»,- նշում է Աննա Իսրայելյանը:

Խմբագրի կարծիքով՝ ոչ փորձառու լրագրողների մասնագիտական մակարդակն այլ կերպ հնարավոր էլ չէ բարձրացնել, քան հրնթացս՝ աշխատանքի ընթացքում լրացնելով կրթական բացերը, ուղարկելով նրանց բազմազան դասընթացների եւ այլն: Այլ հարց է, որ նորությունը հաղորդելու արագության մրցակցության մեջ, իրոք, որակի ու ճշգրտության կորուստ է արձանագրվում: Աննա Իսրայելյանը նշում է, որ սա միայն Հայաստանի խնդիրը չէ, համընդհանուր է:

«Իսկ գրագողության եւ մեր էթիկական խնդիրների լուծման առումով հույսս վաղուց կտրել եմ ինքնակարգավորման մեխանիզմներից: Չեն գործում, արդյունավետ չեն ոչ խաթրով լեզու գտնելու, ոչ լրագրողական հայտարարություններով այս հարցերը կարգավորելու փորձերը: Ուստի մնում է միակ ճանապարհը՝ գրագողերը, այլոց աշխատանքը չհարգողները պետք է պատժվեն ֆինանսապես՝ ենթարկվեն տույժերի: Ու, բարեբախտաբար, այդ հնարավորությունն ընձեռվեց ԱԺ-ում վերջերս ընդունված օրենքով»,- հավելեց առցանց «Առավոտ»-ի խմբագիրը:

Լրագրող եւ մեդիա փորձագետ Մեսրոպ Հարությունյանն այլ լուծում է առաջարկում: Ըստ նրա՝ ինչպես հեռուստատեսային անճաշակ հաղորդումների դեմ պետք է պայքարել հեռակառավարման վահանակով, այսինքն՝ ալիքը շրջելով, այնպես էլ անբարեխիղճ կայքերի եւ նյութերի դեմ լավագույն պայքարը պետք է լինի մկնիկը: Այսինքն, եթե մարդիկ, ընթերցողները չբացեն, չկարդան, դրանք պահանջարկ չեն ունենա եւ «կմեռնեն»: «Իսկ ավելի լավ է կրթել, կրթել եւ կրթել լրագրություն նոր մտածներին՝

անընդհատ աշխատելով նրանց հետ ինքնակարգավորման
բոլոր հնարավոր եւ քաղաքակիրթ միջոցները սովորեցնելու
ուղղությամբ: Սկսած էթիկայի կանոններից, վերջացրած՝ այդ
կանոնները խախտելու համար պարսավանքի եւ
ազդեցության այլ միջոցների կիրառման
անհրաժեշտությունը բացատրելով»,- ավելացրեց Մեսրոպ
Հարությունյանը:

Մառա Պետրոսյան

ՄՏՔԻ ԿԱՊԱՆՔՆԵՐԸ ՔԱՆԴԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ

Խորհրդային տարիների գլավլիտից փախուստ տվողներն ու հետխորհրդային շրջանի մամուլի «ամենաթողության» հետ անհաշտ կռիվ տվողները չնկատեցին էլ, թե տարիների ընթացքում ինչպես դարձան իրենք իրենց գլավլիտը: Չնկատեցին նաեւ, թե ինչպես տասնյակ հազարների սպառում ունեցող հանրապետական մամուլը մեկ տասնամյակ հետո իր տպաքանակով զիջեց անգամ համայնքային թերթերին: Թերթերի էջերից աննկատ անհետացան պահանջված թեմաները, այնուհետեւ մոռացության մատնվեցին «սուր» թեմաների գլխավոր թիրախները: Մի քանի տասնյակ հազար օրինակով թողարկվող թերթերի տպաքանակը վերջին 4-5 տարիներին այնքան նվազեց, որ այսօր 1500 օրինակով թողարկումը ցուցանիշ է համարվում օրաթերթի համար: Սա իր հերթին բերեց աշխատակազմի քանակի նվազման, ոչ կայուն եւ նվազագույն աշխատավարձերը հանգեցրին փորձառու լրագրողների արտահոսքին:

Խմբագրականները, որոնք թերթի գաղափարախոսության ու կյանքի անցուդարձի նկատմամբ հրատարակիչների վերաբերմունքի արտացոլումն են, հետաձգվեցին ավելի պատեհ առիթների: Տպավորություն ստեղծվեց, որ «խմբագրի այրունակը» մամուլի մերօրյա պահանջներին համահունչ չէ եւ «մոդեռնիզացիայի» արդյունքում դուրս մղվեց: Իրականությունն այն էր, որ լրատվամիջոցները կրավորական կեցվածք որդեգրեցին, պակասեց ըմբոստությունը եւ այն քողարկելու համար առաջին հերթին խմբագրականից էր պետք հրաժարվել: **«Շատերը կորցրել են**

մտածելու սովորությունը այնքան, որ վախենում են մտածել՝ չլինի՞ թե ճիշտ մտածեն եւ վտանգի ենթարկվեն»,- հայ մեծանուն գրող Կոստան Չարյանի՝ անցյալ դարի 60-ական թվականներին գրված այս տողերը կարելի է վերագրել այսօրվա յուրաքանչյուր թերթի, լրագրողի:

Կախվածությունը այս կամ այն քաղաքական ու տնտեսական ուժից մեծապես խոցելի դարձրին լրատվամիջոցին ու լրագրողին: Ներքին գրաքննիչը խոսեց լրագրողի մեջ, մնացյալ սուր անկյուններն իր հերթին կլորացրեց խմբագիրը: Լրատվամիջոցներում տիրող հանելուկային ամայությունը չվրիպեց ընթերցողի աչքից, ուստի չհամակերպվեց ու չհանդուրժեց մոլորեցնողներին: Սակայն, տպաքանակն այլեւս մտահոգություն չէ խմբագիրների համար, նույնիսկ ազատ մամուլ ունենալու միտքն այլեւս առաջնային չէ, նրանց ձգտումն արդեն պարբերականի անունը պահպանելն է, քանի որ ամեն օր սեղմվող տնտեսական օղակն արդեն դրա հույսն էլ չի թողնում:

Վարչակազմին ի սկզբանե հաջողվել էր «հնազանդեցնել» մեկ տասնյակի հասնող հեռուստաընկերություններին եւ անհանգստացած էին թերթերի՝ տասնյակ հազարների հասնող տպաքանակից, չնայած տարածման շրջանակը նեղացել էր, եւ թերթերը հիմնականում սպառվում էին մայրաքաղաքում: Ինքնագրաքննությունն արեց ավելին, քան կարող էին կամ կպատկերացնեին սուր լեզուներին կապանք դնելու ցանկություն ունեցողները: Լրագրողների մի մասին ընդամենը ժամանակ էր պետք փոփոխվող իրադրության պայմաններում պահանջված ոճին վարժվելու համար:

Թերթերում ամենապահանջված հրապարակումները՝ հրապարակախոսությունը, վերլուծությունը, մեկնաբանությունը, ֆելիետոնը, պամֆլետը փոխարինվեցին

ճղճիմ, ողբերգական լուրերով: Մեղիա դաշտ ներխուժեցին մասնագիտության հետ կապ չունեցող մարդիկ եւ լրագրությունը վերածեցին խեղկատակության: Պրոֆեսիոնալիզմն այլեւս պարտադիր պահանջ չէ մեղիա ոլորտում հաստատվելու համար: Փոխվել են սուր հրապարակումների մասին պատկերացումները, դրանք այլեւս հանրային կյանքում տեղ գտած արատները չեն, այլ՝ արյունոտ տեսարանները, մերկ ոտքերն ու կրծքերը կամ սեքսապաթոլոգի անգետ մեկնաբանությունները տարածելը: Կենցաղն իր ողջ ողբերգությամբ ու նողկալիությամբ ներխուժել է մամուլ: Լրագրողները վերածվել են սոսկ արձանագրողների, մասնագիտական որակներն այն աստիճան են նահանջել, որ ձայնագրիչից ուղղակի սղագրվածը մտքի խիզախություն է որակվում:

Մեղիան դարձել է լիովին վերահսկելի, թեմաներն ու դրանց մատուցման եղանակն այլեւս լրագրողի, անգամ խմբագրի երեւակայական, ստեղծագործ մտքի արգասիքը չեն: «Ինչ եւ ինչպես գրել»-ը թերթերի մեծ մասին տարիներ շարունակ թելադրվեց մեկ կենտրոնից: Վերահսկման այս մեթոդը չափազանց գրավիչ դարձավ բարձրաստիճան պաշտոնյաների համար, որոնք իրենց պաշտոնը հավերժական դարձնելու համար լրատվամիջոցների հետ բարեկամական կապերն ամրապնդելու սեփական մեթոդը մտածեցին: Նրանցից յուրաքանչյուրը չձեւակերպված բաժնետոմսի տեր դարձավ թերթերում եւ անթաքույց գոհունակությամբ խոստովանեց. **«Այո, լրությունը փող արժե»:**

Զարմանալ պետք չէր, երբ ամենաընթերցվող լրագրողին թերթի սահմանափակ էջերից տեղ էր հատկացվում տողերի քանակի հաշվարկով, սակայն առանց ավստասանքի դրանք տրամադրվում էին պաշտոնյաների ինքնագովեստ լավաշ-

հարցազրույցներին: Այն ժամանակ երեւի չէին էլ պատկերացնում խմբագիրները, թե այդ կերպ որքան են արժեզրկում մամուլը, նվազեցնում նրա ազդեցությունը:

«Ինչի կարիք ունես, ինչո՞վ օգտակար լինես», - փոքր ու մեծ իշխանավորների, տնտեսական դաշտը վերահսկող օլիգարխների՝ ծառայություններ մատուցելու առաջարկների գայթակղությանը շատ քչերը դիմացան: Արժեքային համակարգում փոփոխություններն այնքան արագ կատարվեցին, որ մասնագիտական սկզբունքների չդավաճանելն ու եթիկան շրջանցելն այլևս կաշկանդող չէ: Լրագրության դեմքն աղճատվում է ամեն օր, մասնագիտական համերաշխությունը հնացած կատեգորիա է, լրագրողական «պատվիրանները»՝ գրագողություն չանել, չստել, գործընկերոջը չվատաբանել եւ այլն, մամուլի առօրյայի մաս են կազմում:

Մա էլ չգոհացրեց նրանց եւ «Ոսկե ձկնիկ»-ի տիրուհու նման ցանկացան սեփական լրատվամիջոց ունենալ, ինչպես, օրինակ, սուպերմարկետ կամ վարսահարդարման սրահ: Վերջին երկու տարիներին ասպարեզում հայտնված հարյուրավոր կայքերի առկայությունը խոսում է այն մասին, որ մեր օրերի «մեդիամագնատների» նպատակը ոչ թե լրատվական դաշտում ազդեցիկ դառնալն է, այլ ազդեցիկ լրատվամիջոցներին մեդիադաշտից չեզոքացնելը: Անհամեմատ փոքր գումարներով լրատվական կայքեր պահելը նրանց հնարավորություն է տալիս անհերթ լուրերով հանրության ուշադրությունը շեղել կենսական նշանակության հարցերից, քաղաքական, սոցիալական, տնտեսական լրջագույն խնդիրներից: Մերիալային սցենարով գործող կայքերն անհրաժեշտության պահին պետք է իրագործեն «տիրոջ» պատվերը՝ թիրախին մրոտելու համար նետեն ինչ-որ լուր, ապա այն շրջանառեն այդ

նպատակով ստեղծված տասնյակ այլ կայքերում: Մնացյալ օրերին զբաղված են վթարների ու ինքնասպանների թիվը հաշվելով: Նյարդերից թույլ ընթերցողներին զբաղեցնում են աստղաբույլերով:

Գրաքննության տարատեսակ դրսևորումները

Տնտեսական ծանր կացությունը ինքնագրաքննության հիմնական, սակայն միակ պատճառը չէ: Վերջին տասնամյակում լրագրողների մասնագիտական գործունեությանը խոչընդոտելու տարեկան տասնյակ դեպքեր են գրանցվում, որոնց համար, սակայն, ոչ ոք չի պատժվում: Բռնությունները լայն թափ են ստանում հատկապես ընտրությունների ժամանակաշրջանում, որովհետեւ անգամ ընտրական գործընթացում ներգրավված խաժամուժը գիտի, որ, ի տարբերություն այլ երկրների, լրագրությունը մեր երկրում հատուկ պաշտպանված մասնագիտությունների ցանկում չէ: Ինչո՞ւ ուստիկանի գործունեությունը խոչընդոտողների նկատմամբ իրավապահները կարող են անհանդուրժող լինել, իսկ լրագրողների դեպքում՝ ոչ: Անպաշտպանվածությունը լրագրողներին դրդեց ընտրություն կատարել շարունակական թիրախ դառնալու եւ ինքնագրաքննության միջեւ: Հաղթեց վերջինը, եւ լրագրողները կամովին սահմանափակեցին մտքի ու գործունեության ազատությունը՝ սպասելով մտքի կապանքներից ազատվելու լավագույն ժամանակների:

Փակ թեմաներ

Սա մի խնդիր է, որ հասարակական-քաղաքական իրավիճակներով պայմանավորված՝ պարբերաբար ցցվում է լրագրողների առջեւ: Մեկ տասնամյակ առաջ լրագրողների համար փակ թեմա էր բանակը, որովհետեւ ժամանակի

պաշտոնյաներն այդպես էին պատկերացնում այն. բանակի մասին կամ լավ, կամ՝ ոչինչ: Տարիների ընթացքում գիտակցվեց, որ բռնությունները թաքցնելով՝ հնարավոր չէ առողջացնել բանակը, խնդիրների լուծումը քննարկումների ժամանակ է գտնվում: Այսօր նույնքան անհանդուժելի են եկեղեցու եւ եկեղեցականների մասին հրապարակումները: Հոգեւոր վերնախավի, եկեղեցու սպասավորների արատների մասին հրապարակավ արտահայտվելն աստծո դեմ մեղանչել է համարվում: Պախարակելի են միասեռականների, կրոնի եւ խղճի ազատության, գենդերային անհավասարությանը վերաբերող հրապարակումները, բաց քննարկումները, կարծրացած մտածելակերպը կաշկանդում է անգամ նրանց, ովքեր անհամեմատ ազատ մտածելակերպ ունեն:

Խորհրդային Միությունն անգամ քվոտաներով ապահովել էր կանանց մասնակցությունը երկրի կառավարմանը, իսկ հիմա լրագրողները խուսափում են այդ մասին բարձրաձայնելուց: Անգիտությունն է պատճառը, թերեւս, չէ՞ որ ՄԱԿ-ի անդամ պետությունները պարտադիր պետք է իրագործեն այն բանաձեւերը, որոնք ընդունվում են տարբեր համաժողովներում անդամ երկրների մասնակցությամբ, այդ թվում՝ նաեւ սեռերի իրավահավասարությանը վերաբերող փաստաթղթերը: Հանրությունը մնացել է նույն նեղմիտը, գրողի դիպուկ բնութագրմամբ՝ «տիրացուական մակարդակի» եւ չի ցանկանում լսել այն թեմաների մասին, որոնք խորթ են իր մտածողությանը, ավանդական պատկերացումներին:

Եթե վերը նշված որոշ թեմաներին ներկայացված սահմանափակումները ժամանակի ընթացքում հաջորդել են միմյանց, ապա կա մի թեմա, որն այդպես էլ անհնար եղավ ճեղքել՝ «գեներալիտետը» մեր երկրում անձեռնմխելի է ի

հայտ գալու օրից: Նրանցից յուրաքանչյուրը չթագադրված թագավոր է Հայաստանի մարզերում եւ իր կայսրության տարածքում վերականգնել է Չինգիզ խանի ժամանակաշրջանը: Սակայն նրանց վարքագիծը ենթակա չէ մամուլում քննարկման, մանավանդ՝ հեղինակային անվանումով, մանավանդ՝ մարզային լրագրողի գրչով: Հաշվեհարդարը չի ուշանա: Վերջին ամենատիպական օրինակը ամիսներ առաջ Գորիս քաղաքում տեղի ունեցած ողբերգական հաշվեհարդարն էր, որի մասին տեղի լրատվամիջոցները ոչ միայն որեւէ բան գրելու կամ կարծիք հայտնելու համարձակություն չունեցան, այլեւ սոցիալական ցանցերում բուռն քննարկումներին մասնակից դառնալու, տեսակետ հայտնելու կամ հավանության արժանացնելու: Այդպես եղել է նախկին մարզպետի պաշտոնավարման ավելի քան 10 տարիներին:

Մարզային լրագրողը նաեւ տեղային բարքերին պետք է դիմագրավի

Հանրապետական մամուլի համար եթե ամենաանձեռնմխելին «գեներալիտետն» է, ապա մարզային մամուլը չափազանց զգուշավոր է թեմաների հարցում, եւ ելնելով այն հանգամանքից, որ նրա ասելիքը հիմնականում իր մարզին պետք է վերաբերի, կարելի է պատկերացնել թերթերի բովանդակությունը: «Լրագրերը նման են թամադայի ճառին՝ կեղծ, ուռած, չափազանցված», - անցյալ դարակեսի խորհրդային մամուլի մասին մեծանուն գրող Կոստան Ջարյանի բնութագրումն անվերապահորեն կարող ենք վերագրել մեր օրերի մարզային մամուլին: Ժամանակ առ ժամանակ խորհրդային մամուլին աշխատակցած գրողը խորհուրդ է տալիս մարդկային անհատի մեջ փնտրել պատճառը, ոչ թե համակարգի:

Մարգային մամուլի ներկայիս փաստացի կարգավիճակը խոսում է այն մասին, որ դրանք իրենց ձեռով ու բովանդակությամբ դեռևս խորհրդային շրջանում են մնացել: Նախկին շրջանային թերթը 15 տարուց ավելի ձգտում է պահպանել մի կարգավիճակ, որն իրականության մեջ գոյություն չունի: Ներկայիս քաղաքային համայնքի ղեկավարությունը ցանկություն չունի խնամակալը դառնալու մի լրատվամիջոցի, որը հոգսից բացի ոչինչ չի տալու իրեն: Սակայն որքան տեղական իշխանավորները ձգտում են կտրել պորտալարը, այնքան խմբագիրներն ավելի ամուր են փարվում նրանց: Մարգային մամուլի կենսունակության բանաձևը մեղիա մարքետինգի հետ առնչություն չունի՝ գոյատևում են մարգպետի բարեհաճության շնորհիվ: Ուստի երախտագիտությունից դրդված՝ մարգային լրագրողները երբեմն «պապից ավելի կաթուղի են դառնում»: Ուրեմն ինչու՞ զարմանալ, որ մարգային հիմնախնդիրները տեղ չեն գտնում տեղական լրատվամիջոցների էջերում:

Մեկ տարի առաջ «Հետքի» հրապարակած [հետազոտությունը](#) եւս մեկ անգամ փաստեց, որ մարգային խնդիրները մարգային մամուլում տեղ չեն գտնում: Մարզերում տպագիր մամուլի գոյության մասին հիշեցնում են ոչ թե նրանց հրապարակումները, այլ Կառավարությունը՝ մարգային մամուլին պետական բյուջեից հատկացվող սուբսիդավորման ցանկը հաստատելիս: Միայն այդ ցանկից կարելի է տեղեկանալ, որ յուրաքանչյուր մարզում 5-6 անուն թերթ էլ այլ պարբերականներ են հրատարակվում:

Այս տարի մարգային լրագրողների համար դասընթաց էի անցկացնում Սյունիքի, Լոռու եւ Գեղարքունիքի մարզերում: Երեք մարզից ոչ մի լրագրող չցանկացավ իր հոդվածը հանձնել տեղական որևէ թերթի, թեպետ հրապարակումները տեղական խնդիրներին էին վերաբերում: Պատճառներից մեկն այն էր, որ տեղական թերթերը պատրաստ չէին հրապարակելու մարգային

խնդիրների մասին նյութեր, տեղական իշխանությանն ուղղված քննադատական հոդվածները մերժվեցին:

Մարզերում բնակվող լրագրողները հրատարակելու այս բոլոր դժվարություններից բացի՝ նաև միջավայրին դիմագրավելու փորձություն պետք է անցնեն: Մեծ համարձակություն է պահանջվում հասարակության կարծրացած մտածելակերպին դեմ գնալու համար Հայաստանի նման փոքր երկրում ու հատկապես փոքր բնակավայրերում, որտեղ փոխհարաբերությունները կարգավորվում են տեղային պատկերացումներով ու կանոններով: Հանրապետական մամուլին աշխատակցող լրագրողները ձգտում են «պոկվել» այդ միջավայրից, սակայն սպիտակ ագռավ են դառնում իրենց միջավայրում: Ամենից առաջ լրագրողական համքարությունը չի հանդուրժում նրանց:

Բազմաթիվ են դեպքերը, երբ, օրինակ, համայնքի ղեկավարի աշխատանքը քննադատելու համար գյուղի կեսը հերթապահել է լրագրողի տանը, որպեսզի նրանից բացատրություն ստանա «գյուղապետին խայտառակելու» վերաբերյալ, իսկ հետո մի գյուղի, մի թաղի մարդու «թասիբի» մասին դասեր տա նրան:


Քաղաքապետարաններից մեկում մարզի լրագրողների մասնակցությամբ քննարկվում էին քաղաքային հիմնախնդիրները, եւ քաղաքապետին ուղղված քննադատությունից ավելի ազդված էր մասնակից «վաստակաշատ» լրագրողը: Նա սկսեց հանդիմանել գործընկերներին քաղաքապետի գործունեությունից դժգոհելու համար: Զարմանալիորեն, նույն հասարակությունն անհանդուրժող չէ իր կողքին ապրող մանկապիղծի նկատմամբ, սակայն չի հանդուրժում այն լրագրողին, ով հանրայնացրել է նրա հանցագործ կենսակերպը:

Չորրորդ իշխանությունն այսօր նույնպիսի ճգնաժամ է ապրում, ինչ իշխանության մյուս երեք ճյուղերը, եւ սա միայն

մտքի ճգնաժամ չէ: Այս իրավիճակը հնարավորինս շատ
իշխանական եւ նյութական ռեսուրսների տիրանալու
արդյունք է: Այն հնարավոր է հաղթահարել, եթե
վարչակազմը սթափ գիտակցի, որ երկիրը կանգուն պահելու
համար պետք է դադարեցնել Սոդոմ-Գոմորը եւ
յուրաքանչյուրին իր առաքելությունն իրականացնելու
հնարավորություն տալ:

Գրիշա Բալասանյան

ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՄԱՍԱՆԵՆ «ԼՐԱԳՐՈՂԱԿԱՆ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅՈՒՆԸ»



«Ծաղկաքաղ էք արել, տեղադրեք հղումը», «Սա ո՞րերորդ դեպքն է՝ նյութը առանց հղումի եք վերցնում», «Կարելի՞ էր գոնե մի քիչ բարեխիղճ լինել ու հղում անել: Ամոթ է», «Դուք որ մի բան քոփի եք անում, գոնե նայու՞մ եք, թե որտեղից ու ո՞նց եք քոփի անում», «Գողացել եք մեր նյութը», «Արգելում եմ վերցնել մեր նյութերը»... Այսպիսի գրառումներ ամեն օր տեղ են գտնում «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում բացված «Հանուն բարեխիղճ լրագրության» խմբում, որտեղ լրագրողները փորձում են վերականգնել իրենց իրավունքները եւ հատկապես հեղինակային նյութեր

«յուրացնողներին» դարձի բերել՝ պարտադրելով հղում տալ նյութի սկզբնաղբյուրին:

Մա որոշ առումով արդյունավետ պայքար է, բայց ոչ բավարար, քանի որ Հայաստանում ամեն օր ավելանում է ինտերնետից օգտվողների թիվը, դրան զուգահեռ բացվում են նոր լրատվական կայքեր, որոնց անբարեխղճության դեմ պայքարը ոչ միշտ է պսակվում հաջողությամբ: Բարեխիղճ լրատվամիջոցը, վճարելով իր լրագրողին, երկարատև աշխատանքի արդյունքում նյութ է հրապարակում, եւ դրանից բուպեներ անց մեկ այլ լրատվամիջոց, վերցնելով այդ նյութը, հրապարակում է իր կայքէջում՝ սկզբնաղբյուրին զրկելով իր ստեղծած նյութի «պտուղները ճաշակելու» հնարավորությունից:

«Հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին» գործող օրենքով լրագրողները կարող են նաեւ դատական կարգով վերականգնել հեղինակային իրավունքի օբյեկտ հանդիսացող նյութի կամ հարցազրույցի նկատմամբ իրենց իրավունքը, սակայն Հայաստանում դատական պրակտիկա չկա. լրատվամիջոցները խուսափում են միմյանց դեմ դատական հայցեր հարուցելուց:

Օրինակ՝ ամիսներ առաջ «Հետքը» պատրաստվում էր հայցով մտնել դատարան եւ անբարեխիղճ լրատվամիջոցին պարտադրել «գողացված» նյութում հղում անել սկզբնաղբյուրին կամ կայքէջից հեռացնել հոդվածը: Հայցն արդեն պատրաստ էր, սակայն խմբագրությունում կարծիքները բաժանվեցին երկու մասի՝ դիմե՞լ, թե՞ չդիմել դատարան: Արդյունքում հաղթեցին «չդիմելու» կողմնակիցները՝ որպես հիմնավորում ներկայացնելով լրագրողական համերաշխության անհրաժեշտությունը: Մինչդեռ ոլորտը կարգավորելու կարիք կա, եւ

«լրագրողական համերաշխությունն» է՛լ ավելի է խորացնում գրագողության խնդիրը:

Ազգային ժողովը 2013-ի սեպտեմբերի 10-ին 114 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ առաջին ընթերցմամբ ընդունեց «Հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին օրենքի նախագիծը, որը հեղինակել են պատգամավորներ Արփինե Հովհաննիսյանը, Գալուստ Սահակյանը, Արծվիկ Մինասյանը, Աղվան Վարդանյանը, Ալեքսանդր Արզումանյանը, Գագիկ Զհանգիրյանը, Թեւան Պողոսյանը եւ Դավիթ Հարությունյանը:

Հայաստանում առաջին անգամ փորձ է արվում առավել մանրամասն կարգավորել տպագիր եւ էլեկտրոնային լրատվամիջոցներում հեղինակային իրավունքի պաշտպանության խնդիրները, ինչը անբարեխիղճ վերարտադրության դեմ պայքարի լրացուցիչ հնարավորություն է ընձեռում:

Հեղինակային իրավունքի պաշտպանությունը մեզանում նորույթ չէ: Հայաստանը ավելի քան 10 տարի առաջ միացել է գրական եւ գեղարվեստական ստեղծագործությունների մասին Բեռնի կոնվենցիային, ինչպես նաեւ հեղինակային իրավունքի ոլորտը կարգավորող միջազգային այլ ակտերի, օրինակ՝ Ժնևի կոնվենցիային, իսկ 2006-ից գործում է «Հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքը:

Հեղինակներից Արփինե Հովհաննիսյանը խորհրդարանի ամբիոնից ներկայացնելով օրենքում կատարված փոփոխությունների նախագիծը՝ նշեց, որ դրանց հիմքում մի շարք լրատվամիջոցների պահանջն է: Նախագիծը մշակվել է հունիսին եւ մի քանի փուլերով քննարկվել շահագրգիռ կողմերի հետ: Զեկուցողն ասաց, որ շատ նուրբ պետք է

մոտենալ այս ոլորտի ցանկացած նորամուծությանը, քանի որ լրագրողներն ունեն խաղի իրենց կանոնները: Արփինե Հովհաննիսյանը խոստովանեց, որ թեև ոլորտում տեսնում էր խնդիրներ, սակայն չէր համարձակվում իր նախաձեռնությամբ կարգավորել «բացերը» եւ խնդրին անդրադարձել է միայն լրատվամիջոցների պահանջով:

Նախագծի՝ առաջինից երկրորդ ընթերցում ընկած ժամանակահատվածում պատգամավորները ներկայացրել են մի շարք առաջարկներ, որոնք օրենքի հեղինակներն ընդունել են: Արփինե Հովհաննիսյանը նշեց, որ փոփոխությունները որեւէ խնդիր չեն առաջացնում լրագրողների կամ լրատվամիջոցների համար: Պարզապես գործող օրենքի կարգավորումներն ավելի են հստակեցվել:

Ի՞նչ փոփոխություններ են արվել

Գործող օրենքով հեղինակային իրավունքի օբյեկտ չի համարվում օրվա նորությունների կամ ընթացիկ իրադարձությունների եւ փաստերի մասին տեղեկատվությունը: Իսկ փոփոխություններով օրվա նորությունների կամ ընթացիկ իրադարձությունների եւ փաստերի ***ընտրությունը*** հանդիսանում է հեղինակային իրավունքի օբյեկտ, եթե օրվա նորությունների կամ ընթացիկ իրադարձությունների եւ փաստերի արտահայտման ձեւը հանդիսանում է ստեղծագործական աշխատանքի արդյունք:

Օրենքում ավելացել է նաեւ նոր հոդված, որը սահմանում է լրատվական նյութի օգտագործման պայմանները: Մասնավորապես, սահմանված է, որ «Տպագիր լրատվական միջոցների, էլեկտրոնային կայքերի (ցանցային լրատվության միջոց) լրատվական նյութերից քաղվածքների վերարտադրումը այլ տպագիր լրատվական միջոցներում,

ինտերնետային կայքերում թույլատրվում է իրականացնել միայն մեջբերման **նպատակն արդարացնող ծավալով**՝ առանց հեղինակի (հեղինակային իրավունքի իրավատիրոջ) համաձայնության եւ վարձատրության վճարման: Անկախ վերարտադրման ծավալից՝ լրատվական նյութերից քաղվածքների վերարտադրումը **չպետք է բացահայտի լրատվական նյութի էական մասը**: Վերարտադրումը պետք է բացառի լրատվական նյութի սկզբնաղբյուրի հնարավոր ընթերցողների քանակի եւ լրատվական նյութի օգտագործման ծավալների վրա բացասական ազդեցությունը: Լրատվական նյութի ամբողջական վերարտադրումը կարող է իրականացվել միայն հեղինակի (հեղինակային իրավունքի իրավատիրոջ) համաձայնության դեպքում: Լրատվական նյութի ամբողջական վերարտադրման կարգն ու պայմանները սահմանվում են կողմերի միջեւ կնքված պայմանագրով»:

Օրենքում տեղ գտած «**Նպատակն արդարացնող ծավալ**» ձեւակերպումը վերցված է հենց Բեռնի կոնվենցիայից: Գործող օրենքը եւս ունի «նպատակն արդարացնող ծավալ» հասկացությունը, եւ հիմա սահմանվում են չափորոշիչներ, թե հատկապես ինչի վրա պետք է ուշադրություն դարձնի դատարանը նմանատիպ գործեր քննելիս:

Հեղինակային նյութերը տարբեր լրատվամիջոցներում վերարտադրվում են երբեմն առանց սկզբնաղբյուրի նշման կամ որեւէ հղում կատարելու: Ընդհանրապես արգելել հնարավոր չէ, քանի որ ՀՀ Սահմանադրությամբ էլ նախատեսված է, որ յուրաքանչյուր ոք ունի տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատություն տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից: Այստեղ խնդիրը

գուտ ծավալն է, թե մի լրատվամիջոցը ինչ ծավալով պետք է վերարտադրի մեկ այլ լրատվամիջոցի հրապարակումը, որպեսզի վերջինիս չվնասի:

Հաճախ լրատվամիջոցները, վերահրապարակելով այլ լրատվամիջոցի նյութը, վերջում նշում են՝ «մանրամասները կարդացեք X կայքում»: Երբ այդ ցուցումով բացում ես սկզբնաղբյուր լրատվական կայքը, տեսնում ես, որ ամբողջ նյութն արդեն կարդացել ես եւ այնտեղ ընդամենը մեկ նախադասություն է մնացել, որն էական չէր, քանի որ առանց դրա էլ քեզ համար բացահայտված է նյութի ամբողջ բովանդակությունը:

«Նպատակն արդարացնող ծավալ» եզրույթը ոչ մի երկրում չունի հստակ, կոնկրետ սահմանում, եւ սա դատական պրակտիկայի խնդիր է: Քանի որ այս առումով Հայաստանում չկա դատական պրակտիկա, որոշ պատգամավորներ եւ շահագրգիռ անձինք մտավախություն ունեն, որ նորմը կմեկնաբանվի յուրովի եւ խնդիրը կարգավորելու փոխարեն ավելի կսրի վիճակը:

Փոփոխություններից մեկով էլ «տպագիր լրատվական միջոցներում, էլեկտրոնային կայքերում այլ տպագիր լրատվական միջոցների, էլեկտրոնային կայքերի լրատվական նյութերից քաղվածքներ վերարտադրելիս պետք է հղում կատարել լրատվական նյութի սկզբնաղբյուրին: Էլեկտրոնային կայքում տպագիր լրատվական միջոցների կայքերի լրատվական նյութերից քաղվածքներ վերարտադրելիս քաղվածքի վերնագրում տպագիր լրատվական միջոցի անվանման նշումը պարտադիր է, եթե քաղվածքի նպատակը միայն սկզբնաղբյուր լրատվական նյութի վերարտադրությունն է: Էլեկտրոնային կայքերի լրատվական նյութերից քաղվածքներ վերարտադրելիս էլեկտրոնային կայքի ակտիվ հղումի տեղադրումը, ինչպես

նաեւ քաղվածքի վերնագրում էլեկտրոնային կայքի տիրույթային անվանման (դոմէյնի) նշելը պարտադիր է, եթէ քաղվածքի նպատակը միայն սկզբնաղբյուր լրատվական նյութի վերարտադրությունն է»:

Նախագծի երկրորդ ընթերցման ժամանակ պատգամավորները ելույթներ չունեցան, իսկ առաջին ընթերցման ժամանակ ներկայացնում էին մի շարք մտահոգություններ:

ՕԵԿ խմբակցության պատգամավոր **Խաչիկ Հարությունյանի** համար, ընդհանուր առմամբ, ընդունելի էին այն գաղափարները, որոնք դրված են օրենքի փոփոխությունների հիմքում, քանի որ նրա կարծիքով՝ այսօր լրատվական դաշտում որոշակի խառնաշփոթ կա: Սակայն պատգամավորը մտավախություն ուներ, որ օրենքի փոփոխությունից հետո եղած խառնաշփոթն է՛լ ավելի կմեծանա: Պատգամավորի համոզմամբ՝ հասկացությունները, որոնք տեղ են գտել նախագծում, չափելի չեն, եւ դժվար է դրանց բացահայտումը:

«Արտահայտման ձեւը հանդիսանում է ստեղծագործական աշխատանքի արդյունք» ձեւակերպումը հստակ չէ, ո՞վ է չափելու՝ ներկայացվածը աշխատանքի արդյունք է, թե՞ ոչ: Սա վիճելի է, եւ յուրաքանչյուր մարդ կարող է յուրովի մեկնաբանել, քանի որ սուբյեկտիվիզմի աստիճանը բավականին բարձր է», - մտահոգված էր պատգամավորը:

Խ. Հարությունյանի մյուս նկատառումը վերաբերում էր վերարտադրման արդյունքում **բուն լրատվական նյութի** (*առաջին ընթերցման ժամանակ այս ձեւակերպումն էր տրված, թեւ փոփոխությունը բովանդակային առումով ոչինչ չի փոխում-հեղ.*) չբացահայտմանը: Ըստ պատգամավորի՝ մեկի պատկերացմամբ հնարավոր է՝

վերարտադրումը բացահայտում է բուն լրատվական նյութը, մյուսի պատկերացմամբ՝ չի բացահայտում: Դատավորները եւս կարող են յուրովի մեկնաբանել, եւ նրանցից յուրաքանչյուրը մյուսներից էականորեն տարբերվող կարծիք կարող է ունենալ:

«Թեեւ ասում եք, որ լրատվամիջոցները մեկը մյուսի դեմ հայցեր չեն ներկայացնում, բայց, ինչեւէ, պետք է այնպիսի օրենքներ ընդունենք, որ բոլորի համար հասկանալի լինեն, նշում է Խաչիկ Հարությունյանը եւ հավելում,- այլ լրատվամիջոցից նյութ վերցնելու նպատակը հենց լրատվության բացահայտումն է, եթե օրենքով արգելվում է նման բացահայտումը, ապա ընդհանրապես այդ նյութը վերցնելու իմաստը կորչում է»:

Նախկին լրագրող, ԱԺ ԲՀԿ խմբակցության պատգամավոր **Նաիրա Զոհրաբյանի** կարծիքով՝ օրինագիծը դրական միտումներ է պարունակում եւ լրացուցիչ իմունիտետ է տալիս բարեխիղճ լրատվամիջոցներին, սակայն դատական համակարգի ներկայիս վիճակում շատ մեծ լավատեսություն է պետք ունենալ դատական համակարգին եւս մեկ գործիքով օժտելու համար: Պատգամավորի խոսքով՝ պետք է թույլ չտալ, որ դատարաններն այսօրվա իրենց մակարդակով որոշեն այս կամ այն լրատվամիջոցի բարեխիղճության աստիճանը, քանի որ օրինագիծը լուրջ ռիսկեր է պարունակում:

ԲՀԿ խմբակցությունը եւս հանդիպումներ է ունեցել մի քանի ԶԼՄ ներկայացուցիչների հետ: Նաիրա Զոհրաբյանի խոսքերով՝ նրանց մեծամասնությունը, հասկանալով ռիսկերը, այնուհանդերձ ընդունելի է համարել օրինագիծը: «Հնարավորինս պետք է նվազեցվեն ռիսկերը, որպեսզի այս օրենքը չօգտագործվի որպես մահակ անցանկալի

լրատվամիջոցների ձայնը կասեցնելու համար»,- ասում էր Ն. Ջոհրաբյանը:

«Հանրապետական» եւ «Իրավունք» թերթերի նախկին գլխավոր խմբագիր, ՀՀԿ խմբակցության պատգամավոր **Հայկ Բաբուխանյանը** եւս մտավախություններ ունի: Նա էլ է կարծում, որ օրինագծում տեղ են գտել մի շարք ձեւակերպումներ, որոնք ամբողջությամբ թողնված են դատարանի հայեցողությանը: Պատգամավորը դժվարանում է պատկերացնել, թե դատավորն ինչպե՞ս է որոշելու նպատակն արդարացնող ծավալը, կամ՝ վերարտադրումը բացահայտու՞մ է բուն լրատվական նյութը, թե՞ ոչ, դրանից սկզբնաղբյուրի ընթերցողների թիվը պակասու՞մ է, թե՞ ոչ: Ըստ նրա՝ պետք է հստակ լինեն ձեւակերպումները, որպեսզի արդյունքում «խուճուճ» օրենք չստացվի:

Պատգամավորին մտահագում էր նաեւ վերլուծությունների ժամանակ այլ լրատվամիջոցներից կամ անձանց խոսքերից մեջբերումներ անելու հարցը:

«Եթե, օրինակ, մեջբերում է արվում Չինական «Ժմի Ժբաու» թերթից, ու՞մ պետք է հարցնես, ե՞րբ հարցնես կամ ինչպե՞ս վարձատրես հեղինակին: Նման հարցեր էլ ունենք, միայն տեղական հարցերը չեն: Կամ վարձատրությունը... պատկերացնու՞մ եք՝ մարդն ուզում է վերլուծություն անել, ասենք՝ լրագրողն ուզում է ամփոփել օրվա համայնապատկերը եւ պետք է մեջբերումներ անի մի 10 լրատվամիջոցից: Սա արդեն խնդիր է ստեղծում»:

Արփինե Հովհաննիսյանը նշեց, որ եթե նպատակն արդարացնող ծավալով է մեջբերվում, ապա ոչ հեղինակի թույլտվությունը, ոչ էլ վճարել է պետք: Վճարման հարց առաջանում է միայն ամբողջական վերարտադրության դեպքում, այն էլ՝ կողմերի համար ընդունելի տարբերակով:

Նշենք, որ վերարտադրելու եւ հեղինակային իրավունքի օբյեկտ հանդիսացող հրապարակումը օգտագործելու վերը նշված դրույթները չեն տարածվում հերքման կամ պատասխանի իրավունքի իրականացման վրա:


Օրենքի երկրորդ ընթերցման ժամանակ ԲՀԿ խմբակցության պատգամավոր Տիգրան Ուրիխանյանի առաջարկով նախագծում ավելացել է նոր պարբերություն, որը վերաբերում է հեռուստաընկերություններին, այն է՝ *հեռարձակող կազմակերպության այն հաղորդումները, որոնք իրենց բնույթով ուղղված են մամուլի տեսության ներկայացմանը, եւս պարտավոր են պահպանել նախատեսված դրույթները:*

Հստակ սահմանված է նաեւ վերը նշված իրավունքների խախտման համար վնասի հատուցման չափը՝ 100-200 հազար դրամ: Այս սահմանաչափը եւս լրատվամիջոցների առաջարկությամբ է եղել:

Ազգային ժողովը սեպտեմբերի 30-ին 110 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայներով երկրորդ ընթերցմամբ եւ ամբողջությամբ ընդունեց «Հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին օրենքի նախագիծը:

Անի Հովհաննիսյան

ՄԱՍՈՒԼԻ «ԱՐՏԱԳԱՂԹ». ԿԴԻՄԱԿԱՅԻՐ ՏՊԱԳԻՐ ՄԱՍՈՒԼԸ ՑԱՆՑԱՅԻՆ ՄԵԾ ԱՇԽԱՐՀՈՒՄ




Մեդիումի տեսությունը մարդկային քաղաքակրթությունը բաժանում է 4 շերտերի՝ բանավորության, գրության, տպագրության եւ էլեկտրոնային հաղորդակցության: Այս շերտերը փոխակերպվել են փոխազդեցության միջոցով, սակայն եթե բանավորից գրին անցնելու համար մի քանի դար պահանջվեց, ապա փոխակերպման պրոցեսը նախորդ դարաշրջանում շատ ավելի արագ կատարվեց: 20-րդ դարի սկզբում մարդկությունը ցնցվեց հեռագրի առկայությամբ, դարակեսին սովորական դարձավ հեռուստատեսությունը, իսկ դարավերջին ինտերնետի զանգվածային հասանելիությունը կանխորոշեց 21-րդ դարի՝ տեխնոլոգիական հաղթարշավը:

Տեխնոլոգիայի արագընթաց զարգացումն առաջին հերթին անդրադարձավ լրատվամիջոցների աշխատանքի վրա, քանի որ լրագրողներն են հիմնականում տարածում հաղորդագրություններ լայն լսարանի համար՝ գործածելով տեխնոլոգիական միջոցները:

Տեխնոլոգիայի զարգացումը չի ենթարկվում որևէ տարածական կամ ժամանակային խոչընդոտի: Համակարգչային, հեռախոսային եւ պլանշետային ամեն մի նորույթ թողարկվելուն պես օրերի ընթացքում հայտնվում է աշխարհի գրեթե բոլոր տեխնիկայի խանութներում:

Ոչ վաղ անցյալում Հայաստանում մարդիկ լուրեր ստանալու երեւույթն ասոցացնում էին թերթ կարդալու հետ: Լրագիր բառն ինքնին արտահայտում է գրված լուրի իմաստ, սակայն ներկայիս տեխնոլոգիական դարաշրջանում լուրը կարելի է ստանալ ոչ միայն գրավոր, այլ՝ վիդեո-աուդիո-ֆոտո տարբերակներով, դիաֆրագմաներով ու սլայդ շոուներով, որոնք տեղեկատվությունն ամենայն մանրամասնությամբ հասանելի են դարձնում յուրաքանչյուրին: Մարդկանց ինֆորմացիոն առաջին տեխնիկական միջոցն այժմ համակարգիչն է, հեռախոսը, թաբլե էւ ցանկացած սարք, որ կմիանա ինտերնետին:

Ինտերնետից օգտվողների թիվը Հայաստանում և ԱՊՀ-ում




● 2000 ○ 2012



Օգտվողներ Զօգտվողներ

○ 2000 ● 2012



Օգտվողներ Զօգտվողներ

InternetWorldStats-ի՝ 2012թ. հունիսի [տվյալներով](#)՝
Հայաստանում ինտերնետից օգտվում է 1 միլիոն 800 հազար
մարդ, որը կազմում է բնակչության 60,6 տոկոսը:
Համեմատության համար նշենք, որ դեռևս 2000թ.
Հայաստանում ինտերնետ-օգտատերերի թիվը կազմում էր 30
հազար: ԱՊՀ երկրների մասշտաբով Հայաստանն ինտերնետ
հասանելիության առումով առաջատար է, իսկ երկրորդ
հորիզոնականում Ադրբեջանն է. այնտեղ ինտերնետից
օգտվում է բնակչության 50 տոկոսը, Ռուսաստանում
ինտերնետից օգտվում է 47,7 տոկոսը, Բելառուսում՝
46 տոկոսը, Ղազախստանում՝ 45 տոկոսը, Մոլդովայում՝ 44,8
տոկոսը, Ղրղզստանում՝ 39.9 տոկոսը, Ուկրաինայում՝ 34,1
տոկոսը, Ուզբեկստանում՝ 30.2 տոկոսը, Տաջիկստանում՝
13.0 տոկոսը, Թուրքմենստանում՝ 5 տոկոսը: Մեր
հարեւան Թուրքիայում ինտերնետից օգտվում է
բնակչության 45,7 տոկոսը, իսկ Վրաստանում՝ 28,4 տոկոսը:

Ինֆորմացիայի փոխանակման տեմպն աճել է
տասնապատիկ: Տեղեկատվությունը, որը մոտ 10 տարի
առաջ Հայաստանում կհասներ լայն լսարանին մեկ օրվա
(տպագիր մամուլի դեպքում) կամ մի քանի ժամվա
(հեռուստատեսության եւ ռադիոյի դեպքում) ընթացքում,
այժմ կարող է հասանելի լինել առավել մեծ լսարանի՝ մի
քանի վայրկյանի ընթացքում:

Տեխնոլոգիաների զարգացման շնորհիվ տեղեկատվական
պրոցեսն այժմ առավել ինտերակտիվ բնույթ է կրում:
Յուրաքանչյուր ինտերնետ օգտագործող տեղեկության
աղբյուր է կամ տարածող: Այժմ լսարանը ոչ միայն
տեղեկատվական հաղորդագրություն ընդունող է, այլև՝
ուղարկող: Տեղեկատվական շարժը հստակ շղթայականից
վերածվել է ատոմային անկանոն շարժման:

Տեխնոլոգիական ներկայիս շրջանը՝ էլեկտրոնայինը, աչքի է ընկնում մի շարք դրական եւ բացասական առանձնահատկություններով.

1. Արագություն եւ տարածականություն.

տեղեկատվությունը մի քանի վայրկյանում կարող է միլիոնավոր կիլոմետրեր «կտրել-անցնել»: Մարդիկ կարող են հաղորդակցվել, միմյանց մասին տեղեկատվություն հայտնել տեսանյութի, լուսանկարների, ձայնի, տեքստի միջոցով՝ աշխարհի երկու տարբեր ծայրերից: Նրանք կարող են միաժամանակ հետեւել մեկ այլ աշխարհամասում տեղի ունեցող դեպքերին՝ ուղիղ հեռարձակմամբ:

2. Ֆիզիկական գործոնի նվազում. 21-րդ դարում ապրող մարդուն բավական է մեկ համակարգիչ եւ ինտերնետ ունենալ՝ ամբողջ աշխարհից նորություններ ստանալու եւ կապ հաստատելու համար: Երբեմն մի երկրում ապրող անձինք կարողանում են աշխատանք գտնել մեկ այլ երկրում, եւ նրանց ֆիզիկական ներկայությունը բոլորովին պարտադիր չէ աշխատանքի վայրում:

3. Կախվածություն. կապվածությունը

տեխնոլոգիաներին դարձել է իսկական կախվածություն եւ դասվում է հիվանդությունների շարքին: Համաձայն TeleNav տեխնոլոգիական ընկերության անցկացրած հարցման՝ ամերիկացիների կեսից ավելին պատրաստ է մեկ շաբաթով հրաժարվել շոկոլադից, ալկոհոլից եւ սուրճից, բայց ոչ հեռախոսից: Հարցվածների մեկ երրորդը կհրաժարվեր սեքսից, 22%-ը՝ ատամի խոզանակից, 21%-ը դուրս կգար տնից առանց կոշիկների, քան առանց բջջային հեռախոսի: Հարցվածների 66%-ը քնում է սմարթֆոնի հետ: Ավելի վաղ բրիտանական Intersperience ընկերության անցկացրած մեկ այլ հարցման

համաձայն՝ մեր կախվածությունն այնքան ուժեղ է, որ մարդիկ առանց ինտերնետի անցկացրած օրերը համեմատում են ակոհոլից կամ խմիչքից հրաժարվելու հետ:

4. Գրաքննության անհնարինություն. ինտերնետային տեխնոլոգիաների դարաշրջանում տեղեկատվության տարածումը փակել կամ գրաքննել հնարավոր չէ: Բավական է տեղեկությունը հայտնվի սոցիալական ցանցերում, եւ այն կարող է տարածվել անկառավարելի կերպով: Դրա վառ օրինակներն են վիքիլիքսյան բացահայտումները եւ Էդվարդ Սնոուդենի տեղեկատվական գաղտնագերծումները, երբ ողջ աշխարհը կարողացավ տիրապետել ամերիկյան գաղտնի ծառայությունների տեղեկություններին ու պլաններին:

5. Ինտերակտիվություն. ինտերնետային գրեթե յուրաքանչյուր կայք ունի «Մեկնաբանություն» բաժին, որը հնարավորություն է տալիս օգտատիրոջն իր կարծիքն արտահայտել տվյալ կայքի կամ իրադարձության մասին: Կամ, ինչպես ասում են, «feedback»-ի հնարավորություն է ընձեռում: Լրատվական որոշ կայքեր ամբողջովին հիմնված են ընթերցողների տեղեկատվության վրա, այստեղից էլ առաջացել է «հանրային լրագրություն» եզրույթը: Հանրային լրագրող է յուրաքանչյուր քաղաքացի, ով տեղեկատվություն է հայտնում որեւէ իրադարձության մասին դեպքի վայրից: Միրիայի պատերազմը մեծ մասամբ լուսաբանվում է տեղաբնակների հեռախոսով նկարահանված տեսանյութերի միջոցով: Պատերազմի ընթացքում հանրային լրագրողների մի մեծ բանակ է ձեւավորվել Միրիայի տարբեր քաղաքներում, ովքեր ներկայացնում

են իրավիճակը իրենց տեսանկարահանումների եւ նոթերի միջոցով:

Երբ տեխնոլոգիական վերընթացը բոլորին՝ անկախ մասնագիտությունից, տարիքից, սեռից ու այլ պատկանելությունից, դարձնում է տեղեկություն կրող եւ փոխանցող, հարց է առաջանում, թե ի՞նչ **տեխնիկական, բովանդակային եւ տնտեսական** փոփոխությունների եւ տրանսֆորմացիաների պետք է ենթարկվի լրագրությունը իր հիմնական գործառույթները պահպանելու համար:

Նախ՝ անդրադառնանք տեխնիկականին. տպագիր մամուլն այսօր հոգեվարք է ապրում. նույնիսկ մեդիահսկա համարվող խոշոր թերթերն ու ամսագրերը կամ կանգնում են փակման եզրին կամ տեղափոխվում համացանց: Տպագիր մամուլի լրագրողները նույնպես տեղափոխվում են կայքերի խմբագրություններ, սկսում սովորել եւ տիրապետել օնլայն ժուռնալիստիկայի հմտություններին՝ աշխատաշուկայում իրենց տեղը չկորցնելու համար:

Եթե նախկինում տեխնիկական աշխատողը տարբերվում էր տեքստ գրող լրագրողից, ապա այժմ մրցունակ են ունիվերսալ գիտելիքներ ունեցող լրագրողները: Նրանք, բացի ձայնագրելուց եւ ինֆորմացիան տեքստի վերածելուց, պետք է կարողանան նաեւ նկարահանել, մոնտաժել, դիաֆրագմաներ գծել եւ տեղեկատվությունը լսարանին հասցնել հնարավորինս ինտերակտիվ, տեսանելի ու մատչելի տարբերակով:

[Pew Research Center-ի](#) տվյալներով՝ ԱՄՆ-ում ավանդական լրատվամիջոցները կորցնում են ամերիկացիների համար նորությունների աղբյուր լինելու դիրքերը: Դեռեւս 2011թ. միայն հեռուստատեսությունն էր, որ Ինտերնետի համար միջինում մրցակցող հարթակ էր: Եթե ավագ սերնդի միջին ամերիկացու համար Ինտերնետը դեռ չի դարձել

տեղեկատվության որոնման հիմք, ապա 18-29 տարեկան ամերիկացիների ճնշող մեծամասնության (65%) համար ինտերնետն արդեն երկու տարի է, ինչ դարձել է նորությունների հիմնական աղբյուր: Այս միտումը գլոբալ է, եւ մյուս երկրների համար նման ցուցանիշների հասնելն ընդամենը ժամանակի հարց է:

«Մեդիա նախաձեռնությունների կենտրոն»-ի Media.am կայքի պրոդյուսեր Գեղամ Վարդանյանը [գրում է](#), որ 2013թ. նախագահական ընտրությունների օրվանից սկսած՝ Հայաստանում ձեւավորվեց իսկական ինտերնետային հեռուստատեսություն եւ ինտերնետային հեռուստատեսությունների մրցակցային շուկա: Նրա կարծիքով՝ ինտերնետային հեռուստատեսության հարթակում կայացող կայքերը լրացնում են հեռուստատեսային եթերում հաճախ չհերիքող քննարկումներն ու իրավիճակային վերլուծությունները:

Մինչեւ այս ընտրությունները Հայաստանում ինտերնետային ուղիղ հեռարձակումը առաջին հերթին ասոցացնում էին հանրահավաքների հետ, իսկ այսօր կարելի է օնլայն դիտել ասուլիսներ, քննարկումներ, կլոր սեղաններ, կոնֆերանսներ եւ այլն: Հայաստանում ինտերնետային հեռուստատեսության դաշտում հայտնի են երեք լրատվամիջոցներ՝ «Ա1+»-ը, «Ազատություն»-ը եւ «CivilNet»-ը: Այս լրատվամիջոցները ուղիղ հեռարձակմամբ լուսաբանում են ոչ միայն ընտրությունները, այլեւ հասարակական եւ քաղաքական բոլոր կարեւոր իրադարձությունները: Եւ հենց այդ հեռարձակումների միջոցով են մարդիկ ծանոթանում իրականում տեղի ունեցածին՝ առանց գրաքննության եւ մոնտաժի:

Կարեւոր իրադարձություններն ուղիղ հեռարձակմամբ ցուցադրելն ունի նաեւ իր հասարակական ազդեցությունը:

Շատերը, օգտվելով ուղիղ հեռարձակմամբ դիտելու հնարավորությունից, այլևս տնից կամ աշխատավայրից դուրս չեն գալիս, ներկա չեն գտնվում հանրահավաքներին, ցույցերին կամ այլ իրադարձություններին: Օնլայն հեռարձակումն արդեն իսկ բավարարում է այնտեղ կատարվածի մասին նրանց հետաքրքրությունը:

Բովանդակային եւ ֆինանսական փոխակերպումների մասին խոսելու համար հարկ է նշել, որ լրատվամիջոցի բովանդակությունն ուղիղ կապի մեջ է ֆինանսական աղբյուրների եւ քաղաքականության հետ: Տեխնոլոգիական բարեփոխումները մեծապես ազդել են ինչպես խոշոր, այնպես էլ մանր թերթերի ֆինանսական քաղաքականության վրա: Տասնամյակներ շարունակ զարգացման բուռն ճանապարհ անցած գերմանական թերթերն այսօր ծանր դրության մեջ են հայտնվել: Նրանք չեն կողմնորոշվում ինչպես ուղղորդել ֆինանսական քաղաքականությունը, քանի որ տարիներ շարունակ ֆինանսավորվել են թերթի վաճառքից եւ բաժանորդագրություններից գոյացող գումարներով: Բաժանորդագրությունները նվազել են, թերթերը չեն վաճառվում, ինտերնետն առաջարկում է տեղեկատվության մի ամբողջ պաշար՝ անվճար:

Տեխնիկական ելքը նրանք գտել են. մի շարք խոշոր գերմանական թերթեր արդեն ունեն իրենց ինտերնետային տարբերակը, սակայն այնտեղ տեղ գտած տեղեկատվությունը վաճառել չեն կարողանում:

32-ամյա Քրիստիան Ունգերն աշխատում է գերմանական «Hamburger Abendblatt» թերթում: Նա վերջերս գրում է նաև նույն թերթի ինտերնետային տարբերակի համար եւ փորձում ընդունել օնլայն լրագրության նոր մարտահրավերները: ««Տպագիրն ամեն ինչ անվճար առաջարկում է համացանցում» գործելակերպից տարիներ անց՝ այժմ,

Գերմանիայում աճում են թերթերի նորաբաց կայքերը՝ վճարովի պարունակությամբ (welt.de, bild.de, abendblatt.de, taz.de եւ այլն): Այնուամենայնիվ, ընթերցողը շարունակում է ունենալ այն մտայնությունը, որ համացանցում «ամեն ինչ անվճար է»: Եւ քանի դեռ կան խոշոր եւ անվճար կայքեր, ինչպիսիք են՝ spiegel.de-ն եւ zeit.de-ն, շատ դժվար կլինի ընթերցողին վճարել սովորեցնել: Ես աշխատում եմ Hamburger Abendblatt-ում, որի բացառիկ նյութերն ու հոդվածները կարդալը վճարովի է, եւ մենք վատ ցուցանիշ չենք արձանագրել. օրեցօր ավելանում է ընթերցողների թիվը»,- ասում է Ունգերը:

Յավոք, գովազդի գինը տպագիր մամուլում նվազում է, բայց օնլայն մամուլում դրա գինը չի աճում: Գերմանացի լրագրողը նշում է, որ Գերմանիայում միայն մի քանի լրատվական կայքեր կան, որոնք աշխատում են առանց գումար կորցնելու: «Տեսանյութերը կարող են օգնել գովազդի գնի բարձրացման հարցում. տեղական գովազդը նույնպես կարող է նշանակություն ունենալ: Քաղաքականությունը մեկն է՝ տպագիր թերթերի լրագրողները դառնում են օնլայն մեդիայի լրագրողներ: Հաճախ նրանք առաջնահերթ գրում են կայքի, այնուհետեւ՝ տպագրի համար: Հին հիերարխիան կարծես թե հալչում է», - նշում է Քրիստիան Ունգերը:

